

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԶԱՆ ՆԱՆՈՒՄՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

ՀՍՍՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

891-99-09
[Punzhu Punzhu]
v-30

10149

891-590-
[unclear]

u-30

2019-2020, 12.

Курган Рудничный

En.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092[Բաշխույժան Մ.]

Ն-30

ՍՏՈՒԿԱՄԵ Է 1961 թ.

ՌՈՒԶԱՆ ՆԱՆՈՒՄՅԱՆ

(Ֆիլոլոգ. գիտութ. քեկնածու)

A II
31703

10149

ՄԵՍՐՈՊ ԹԱԴԻԱԴՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԴՈՐԾԸ



ՀՍՍՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

Պատասխանատու խմբագիր՝ Է. Գ. ԹՈՓՉԱՆ

ԲՆԱՆ ՆԱՆՈՒՄՅԱՆ
ՄԵՏՐՈՓ ԿԱԴՐԱԴՅԱՆ
(Նա արմյանսկոմ յազմկե)

Իզդ. ԱՆ Արմ. ՏՏՐ. Երևան, 1947 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մ. Դ. Թաղիադեյանը մեր գրականության պատմության չլուստրանված դեմքերից մեկն է: Նա հանդես է եկել 19-րդ դարի առաջին կեսին և նշանակալից դեր է կատարել հայ ժողովրդի աղքատիքի, քաղաքական կյանքի պատմության կարևորագույն էտապներից մեկում:

Թաղիադեյանի գրական ժառանգությունից մեզ հասել է գլխավորապես տպագրված մասը. հայ կուլտուրայի և գրականության տարբեր բնագավառներն ընդգրկող նրա մի շարք ուսումնասիրությունները և մի քանի գեղարվեստական երկեր առայժմ կորած են համարվում: Դրանց թվին են պատկանում՝ «Պատմութիւն Հնդկաց» գրքի 2-րդ, 3-րդ հատորները, «Ճանապարհորդութիւն Ի Պարսս»-ի լրիվ տեքստը, ապա «Հանդիսարան փորձանաց», «Փրկված Երևան», «Արա Գեղեցիկ», «Ազգային ծիսարան», «Հեզիկ հղակյաց» գործերը, ինչպես նաև Մեսրոպ Սեթի և Հովհ. Մկրյանի արխիվներում պահպանվող, բայց մինչև այժմ չհրապարակված օրագրերը և բանաստեղծությունների մի ժողովածուն «Թանգարան Թաղիադեյան» վերնագրով և այլն:

Թաղիադեյանի թողած ժառանգության ուսումնասիրության առաջին փորձը կատարել է Հովհ. քահանա Մկրյանը: Հերքելով Կալկաթայի հայոց թեմի առաջնորդ Խաչկյան քահանայի հեղուրանքները նրա կյանքի մի շարք փաստերի վերաբերյալ, Հ. Մկրյանը վերականգնել է աղքատի դարթոնքի նշանավոր գործչի կյանքի գլխավոր նշանաձողերը, հարստացնելով այն նոր և հետաքրքիր փաստերով:

Այնուհետև հիշատակության արժանի են Լ. Մանվելյանի «Գրականության պատմության» մեջ արված համառոտ ակնարկը և հատկապես Լեոյի մենագրությունը, որով Թաղիա-

դյանը գտնում է իր տեղը հայ գրականություն մեջ՝ որպես նրա սկզբնավորողներից մեկը՝ նորագույն շրջանում:

Թաղիադյանի մասին մեր այս աշխատանքը մի նոր փորձ է վեր հանելու նրա բաղմախոսմանի գործունեությունը և ստեղծագործության հատկանշական գծերը, որոնք բացահայտում են նրա դերը հայ հասարակական կյանքի կազմավորման շրջանում:

Աշխատանքի առաջին մասը նվիրելով նրա կյանքին և լուսավորական գործունեությանը, մենք աշխատել ենք լրացնել այն, մինչև այժմ չօգտագործված, հայտնի և անհայտ փաստերով: Այդ կարգի փաստերի հիման վրա ենք շարադրել նրա ճանապարհորդության պատմությունը Արաքսի այն ափից մինչև Թեհրան, «Թաղիադյանը հայրենիքում» և «Կյանքի վերջին տարիները» գլուխները:

Տալով նրա գործունեության ընդհանուր բնութագիրը, մենք առանձին ուշադրություն ենք դարձրել հետևյալ խնդիրներին.

1 Թաղիադյանը, որպես քաղաքական առաջավոր գեմք առաջիններից մեկն է եղել անցյալ դարի 20-ական թվականներին, որ, զգալով հայ ժողովրդի կործանման վտանգը, Ռուսաստանի օգնության մեջ է տեսել նրա փրկություն միակ ճանապարհը:


2 Նա առաջիններից է եղել իր ժամանակակիցների մեջ, որ հրապարակորեն դուրս է եկել ֆեոդալական կարգերի, եկեղեցու բացարձակ տիրապետության դեմ, առաջ քաշելով ազգային կյանքում տնտեսական և կուլտուրական զարգացման համար այնպիսի պահանջներ, որոնք արտահայտում էին նորաստեղծ ազգային բուրժուազիայի նոր ձևավորվող քաղաքական ձգտումները:

3 Իր գործունեությամբ կապված լինելով մեծ մասամբ հնդկահայ օջախի հետ, նա հնդկահայ գործիչների լուսավորական գաղափարները կապել է 40-ական թվականներին ընդհանուր հայություն մեջ խմորվող ազգային-լուսավորական գաղափարների հետ, միաժամանակ դառնալով 60-ական թվականներին ազգային-լուսավորական շարժման ուղին հարթողներից մեկը:

4 Գրականութիւնը հասարակական պայքարի զինք դարձնելու և լուսավորական գաղափարներով տոգորելու նշանաբանի տակ, Թաղիադ՝յանը գեղարվեստական արձակի և պոեզիայի մեջ խորացրել է աշխարհիկ կյանքի պատկերման, ժողովրդական մտածողութեան և հումանիզմի տարրերը:

5 Թաղիադ՝յանն առաջ է քաշել ժողովրդական կրթութեան, ազգային դաստիարակութեան հարցերը, կապելով այն ընդհանուր քաղաքակրթութեան յուրացման անհրաժեշտութեան հետ: Առանձին նշանակութիւն տալով հայ կուլտուրայի զարգացմանը, նա հատուկ ուշադրութիւն է դարձրել հայագիտութեան և արեւելագիտութեան հարցերի ուսումնասիրութեանը, առաջ քաշելով և շեշտելով այնպիսի խնդիրներ հայ գաղութների պատմութեան, հնագիտութեան, դիցաբանութեան, բանահյուսութեան, աղագրութեան վերաբերյալ, որոնք արժանի են հատուկ ուշադրութեան և մասնագիտական ուսումնասիրութեան:

6 Ընդհանուր առմամբ լինելով իր էպոխայի առաջավոր գաղափարների արտահայտիչը, Թաղիադ՝յանը ապրել է այդ ժամանակի մտավորականութեան մի մասի բնորոշ երկվութեանը՝ աշխարհարարի կիրառման և եկեղեցական իշխանութեան ունեցած դերի հարցերում և տարուբերվել է նորաստեղծ ազգային բուրժուազիայի սահմանափակ ձգտումների և դիմոկրատական շարժման առաջավոր գաղափարների միջև: Նա միաժամանակ ապրել է ծանր ողբերգութիւն, խորապէս գիտակցելով լուսավորութեան, հումանիզմի, ազատութեան իր ձգտումների և հետաճող իրականութեան միջև եղած հակասութիւնը:



ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Մեսրոպ Թաղիադյանի նախնիները եղել են Աշտարակի մոտ գտնվող Կարբի գյուղի բնակիչները:

18-րդ դարի սկզբներին օսմանցիների և պարսիկների միջև մղվող երկարատև, ուժեղ պատերազմները Արարատյան դաշտում և այլուր քայքայում և ավերում են բազմաթիվ գյուղեր, ավաններ, նրանց թվում և արանդիտային ճանապարհի վրա ընկած, այն ժամանակվա առևտրի կենտրոններից մեկը հանդիսացող, հարուստ և բազմամարդ Կարբի գյուղաքաղաքը:

Կարբիից դուրս են գալիս գաղթական խմբեր, որոնց մի մասը տեղավորվում է Երևանի շարունակութունը կազմող Զորագյուղում: Սրանց հետ էր նաև Մեսրոպ Թաղիադյանի պապի հայրը՝ Նիկողայոս Թաղիադյանը:

Նիկողայոս Թաղիադյանը Երևանում հայտնի է դարձել իր տասներկու տղաներով, որոնց մասին շատ հիշողություններ ու առկածալի պատմություններ էին պահպանել Մ. Թաղիադյանի ժամանակվա երեանցիները: Այդ տասներկու եղբայրներից մեկն է եղել Թաղիադյանի պապը՝ Մեսրոպը, որը մեռել է իր նշանավոր թոռան ծննդից մի փոքր առաջ:

1803 թվականի հունվարի առաջին օրերից մեկում (1—3) ծնվում է Մեսրոպ Թաղիադյանը, Դավթի անդրանիկ որդին:

Քահանան երեխայի անունը դնում է Ավետիք, որովհետև կնքվում է հունվարի 5-ին կամ 6-ին, բայց նրա Աննա տատը իր նոր մեռած ամուսնու հիշատակը հավերժացնելու համար թոռնիկին վերանվանում է Մեսրոպ, ապա ժամանակի բոլոր ծեսերով որդեգրում նրան, միաժամանակ ուխտ անում նվիրել էջմիխանի վանքին:

Մեսրոպն իր վաղ մանկութունն անց է կացնում Վաղարշապատում. նրա հիշողության մեջ վառ էին մնացել տատի խան-

դադատագիրն սերն իր հանդեպ, հորաքույրերի հոգատար խնամքը, նրանց գրավիչ պատմությունները: Ինչպես ինքն է պատմում, Մեսրոպը այնքան էր տարվել պատմություններով, որ պատրաստ էր նույնիսկ իր շապիկը նվիրել նրան, ով իրեն հետաքրքիր պատմություններ կաներ:

Դեռ մանկությունը չընդլրած մեռնում է նրա տատը, այնուհետև՝ հայրը. երեխան տեղափոխվում է մոր մոտ, Զորագյուղ:

Երբ լրանում է երեխայի տաս տարին, մայրն ուղարկում է նրան Էջմիածնի վանքը: Մեսրոպին տանում և կանգնեցնում են այդ ժամանակ արդեն հայտնի դարձած Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու առջև:

— Կարգալ գիտե՞ս, մանուկ, — հարցնում է նրան Աշտարակեցին:

— Եթե իմանայի, ինչ՞եւ էի դալիս, — համարձակ պատասխանում է երեխան:

— Հապա ի՞նչ գիտես, — հետաքրքրությամբ պնդում է իր հարցը Ներսեսը:

— Այն ամենը, ինչ երևանը սովորեցնում է անտեր երեխաներին՝ երգ, առակ, առասպել:

Հետագա հարցումիորձն արքեպիսկոպոսին համոզում է, որ վանքի իր վերականգնած դպրոցը չէր կարող որևէ բան տալ արտակարգ ընդունակություններ ունեցող ուշիմ երեխային, և կարգադրում է փոքրիկ Մեսրոպին ժամանակավորապես հանձնել վանքի գրատան վարիչ Հովհաննես վարդապետ Բագրեմյան-դացուն՝ մասնավոր կրթության:

Վանական կրթությունը, «խցի» դաժան դաստիարակության եղանակները, ծեծը, պատիժները, առավոտյան երկար ժամկրկությունները խորթ և անտանելի էին ընթերցան ծոցում աղատ մեծացած, գեղջկական պարզության և իմաստության պտուղները վայելած Մեսրոպի համար:

Այդ ժամանակ ահա Էջմիածին է դալիս իր ժամանակին աչքի ընկած մանկավարժի և դիտնականի համբավ ունեցող Պողոս վարդապետ Ղարադաղցին: Վանքի դպիրների և սարկաւղաների հետ միասին Մեսրոպը ցանկություն է հայտնում աշակերտել անվանի ուսուցչին: Մերժում ստանալով, հուսահատված պա-

տանին թողնում է վանքը և գիշերով փախչում Երևան: Նրան
վերադարձնում են ու ենթարկում ամենադաժան ծեծի. գործը
քարզանում, հասնում է կաթողիկոսին:

— Ի՞նչ ես ուզում, — հարցնում է նրան կաթողիկոսը:

— Ուսում եմ ուզում, տե՛ր, — լալով պատասխանում է Մես-
րոպը:

Կատարված մանրամասն քննությունը մերկացնում է Բազ-
միլանդացու հարախոսությունը իր սնմեղ, խոշտանգված աշա-
կերտի հասցեին. շահելով կաթողիկոսի բարյացակամությունը,
Մեսրոպը թույլատվություն է ստանում աշակերտել Ղարադաղ-
ցուն:

Վանքի մռայլ պատերի ներսում Մեսրոպի համար ճառա-
դալթում է լուսավոր մի շող. հոգևորականի սքեմ հագած Ղա-
րադաղցին ունեք լալնախոհ միտք, կյանքի փորձ, շիտակ և ան-
կաշառ բնավորություն: Հմուտ լինելով ճարտասանությանը և
հոգևոր պատմությանը, նա միաժամանակ տիրապետում էր հա-
յոց պատմությանը և մոտ էր կանգնած ժողովրդի կյանքին,
նրա իմաստությանը. այդ հանդամանքը աղչում էր նրա ուսուց-
ման վրա, տարբերելով նրան իր ժամանակի ոխոլաստիկ գիտե-
լիքների տեղ վարժապետներից¹

Ազրյուրին մոտեցած ծառավ մարդու պես Մեսրոպն սկսում
է անհագորին կլանել Ղարադաղցու տված գիտությունը: Կարճ
ժամանակում աշակերտի և ուսուցչի մեջ առաջ է դալիս ջերմ
սիր: Վանքում ստեղծված տհաճ մթնոլորտը, ամբարտավան, ծուլ
ու տգետ դպիրների հակակրանքը շուտով ստիպում են Ղարա-
դաղցուն թողնել էջմիածինը: Պատրվակ բերելով տենդը, Ղարա-
դաղցին թույլտվություն է ստանում գնալու Արարատի փեղին
կառուցված Ս. Հակոբի վանքը, կաղգուրվելու համար: Ղարա-
դաղցին իր հետ է վերցնում նաև Մեսրոպին: Ճանապարհին
Մեսրոպը որոշ չափով ծանոթանում է Հայաստանի պատմական
հնություններին: Ղարադաղցին կարծիքներ է հայտնում Զվարթ-
նոցի ավերման, Արտաշատի և Դվինի տեղերի ճշտման շուրջը,

¹ Հետագայում Ստ. Նազարյանի Ղարադաղցուն տված բացատկան
գնահատականը նպատակ է ունեցել ընդգծելու նորագույն կրթության առավե-
լությունը հնի հանդեպ:

կարծիքներ, որոնք մեր դարում կատարված ուսումնասիրութ-
յթյունների ընթացքում հաստատվեցին հնադեմների կողմից:

Վայելելով իր սիրելի վարժապետի ընկերակցությունը,
ազատ բնության զրկում, Մեսրոպն իրեն շատ երջանիկ էր զգում:
Ղարադաղյին նրան սովորեցնում է գրե առնել ժողովրդի կյան-
քի ու կենցաղի առանձնահատկությունները, սովորույթները,
գրույցները: Վաճճում եղած ժամանակ նա փորձում է նույնիսկ
բանաստեղծություններ գրել, որի համար և արժանանում է
վարժապետի խրախուսանքին: Մատիտը դրած գրքակալի մեջ,
փետուրե զրիչը գոտկածալում, թանաքի շիշը գոտիկից կախած,
տետրերը թևի տակ, վանքի ետևում ընկած պուրակների մեջ, նա
աժըողջ օրը նվիրվում էր իր պարապմունքներին:

«Թեպետ և երկուստեղ կողիկ եմ դարձել, ոչ այնքան տա-
րիներից, որքան վշտերից, սակայն իմ մեջ դեռ վառ է մնացեք
մանկությունս, ուր ամեն ինչ սիրելի էր ինձ համար», գրում է
նա հետագայում, այդ օրերը հիշելիս¹

Մի քանի ամիս անց Մեսրոպին հաջողվում է կատարել
երկրորդ ճանապարհորդությունը, այս անգամ դեպի Արագածոտն:
Ճանապարհին մտնելով Օշական, նա այցելում է Մեսրոպ Մաշ-
տոցի գերեզմանը, չորքում է նրա առջև և խնդրք անում, որ
շնորհվի իրեն Մաշտոցի արժանիքների թեկուզ և մի մասնիկը:
Կրթություն ստանալու, լուսավորված երկրներ տեսնելու երազ-
ներով տարված, Մեսրոպը տանջալի օրիւր է անցկացնում էջմի-
ածնում. վանքի միաբանները վատ էին վերաբերվում Մեսրո-
պին, համարելով նրան ինքնահավան, մեծամիտ, ծաղրելով նրա
կրթություն ստանալու ցանկությունը: Տղետ վանականներն ան-
տեսում էին նրա ընդունակությունները, հալածում նրան անա-
չառ խոսքերի և իրենց նկատմամբ ունեցած քննադատական վե-
րաբերմունքի համար:

Մեկ անգամ էլ ահա հայտարարվում է Մեսրոպի մի ձե-
ռագիրը, որի մեջ խիստ սուր բնութագրած է լինում վանքի
վարդապետներից մեկին: Դրա համար նրան ենթարկում են ֆա-

¹ Մ. Դ. Թ ա ղ ի ա դ ե ա ն—«Ճանապարհորդութիւն ի Հալս», 1847,
էջ 161.

լախկայի, ծեծում այն աստիճան, որ ոտքերի եղունգների տակից սկսում է արյուն հոսել:

— Գնա հիմա և սովորիր նոր եղանակով գիրք գրել,—հայտարարում են նրա թշնամիները:

1819 թվականին Նվիրակ Դանիել եպիսկոպոսի հետ Մեսրոպը շրջադաշտում է Հայաստանի համարյա բոլոր գավառները: 16 տարեկան, արդեն հասունացած պատանու առջև բացվում է խանական Պարսկաստանի տիրապետութան տակ հեծող հայոց աշխարհը: Արշավանքներից և ասպատակություններից քայքայված, մեծ մասով ամայացած գյուղերը և ավանները, ապա հարկահավաքների, գյուղական իշխանավորների, խանների գործադրած անպատմելի խժգժություններն ու հափշտակումները, մանավանդ հայ գյուղացու համար ստեղծել էին ստրկական պայմաններ, որոնց վրա ավելանում էին նաև եկեղեցական հարկերը: Մեսրոպն արդեն զգում էր, որ անսահման սպիտակությունն ու նախապաշարմունքը զրկում են հայ գյուղացուն իր ստրկական վիճակն ըմբռնելու իրական հնարավորությունից. ժողովուրդը լուսավորելու, նրան բարձրացնելու ձգտումը դառնում է Թաղիադյանի մտահոգության հիմնական առարկան:

Այդ ժամանակվա իր խոհերը, տպավորություններն ու ձգտումները Թաղիադյանը հետագայում շարադրել է «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ, որը դարձավ 19-րդ դարի առաջին քառորդի հայ իրականության բազմակողմանի արտահայտությունը:

Դանիել եպիսկոպոսի և Մեսրոպի շրջադաշտությունը տևում է մինչև 1821 թվականի դարունը: Տաթևի վանքում նրանց լուր է հասնում, որ կաթողիկոսը դուրս է եկել Էջմիածնից ու սարդարի թույլտվությամբ մեկնում է Շուշի, Թառումյաններից 400 ոսկի խնդրելու, աթոռի պարտքերի մի մասը մարելու համար:

Շատ չանցած, նրանք հանդիպում են կաթողիկոսին Նախիջևանում: Կաթողիկոսը Դանիելին իր ժողոված հարկերի համար շնորհում է Ամարասի վանքի առաջնորդությունը, իսկ Մեսրոպին տալիս է դպրության չորս աստիճան և ուրարակրի պաշտոն, նորից պահելով իր մոտ որպես կոնգակագիր:

Շուշում եղած ժամանակ Մեսրոպը վարում է մեծ մասամբ մեկուսացած կյանք. նրա վրա իջնում է ծանր հուսահատու-

թյուն. շաղակրատ, տգետ, իրենց վայելքին տված ընկերների շրջանում, նա իրեն զգում է հավիտենապես խորտակված: Այդ ծանր վիճակից նրան հանում է իր սիրելի ուսուցիչը՝ Պողոս Ղա-
րապաղցին, որը գտնվում էր Շուշում:

— Դու ուսումը քեզ համար օգապարիկ նմույշ է,—ասում է Ղարապաղցին, համոզելով նրան չկորցնել կրթությունը շարունակելու հույսը:

— Մի նախանձիր քո ընկերների երգելու շնորհքին,—շարունակում է ուսուցիչը,—նրանց ձայնը հաղիվ մի սենյակից մյուսին է անցնում, իսկ դու սովորիր և քո համբավը կտարածվի աշխարհից աշխարհ:¹

Հաղպատում եղած ժամանակ Ներսես Աշտարակեցին ցանկություն է հայտնում Մեսրոպին տանել իր հետ Թիֆլիս: Մեսրոպը վճռականորեն մերժում է:

Չնայած 1812 թվականից Ներսես Աշտարակեցին հեռացել էր Էջմիածնից, բայց և այնպես նա իրազեկ էր վաճառի անցողաբձին. շատ մանրամասնություններ էր լսել Մեսրոպի մասին, և բացասական տրամադրությամբ լցվել ուրիշների պատմածներից, համարելով նրան «մի փոքր բարձրադարանոց»: Մեսրոպի՝ Թիֆլիսում եղած ժամանակ Աշտարակեցին ակամայից խոստովանում է, որ նա դիտավորյալ կերպով ոչ մի շնորհի չի արժանացրել նրան: Ներսես Աշտարակեցին տանել չէր կարողանում Մեսրոպի ուղղածիտ բնավորությունը, քննադատող միտքը և խիղախությունը: Նա կամենում էր ոչնչացնել ըմբոստ, բայց շատ ընդունակ պատանու բնավորության այդ դժերը և ենթարկել իրեն: Սակայն Մեսրոպն անընկճելի էր:

1822 թվականի գարնանը Հաղպատին գալիս Պարսկաստանի դեսպան Դավիթ խան Շատուրյանը և Հնդկաստանի նվիրակ Թովմաս վարդապետը: Նրանք հետաքրքիր բաներ են պատմում Նվրդայի և Հնդկաստանի մասին: Մեսրոպի մեջ նորից բորբոքվում է կրթությունը շարունակելու ջերմ փափագը: Աղերսագիր աղեսագրի ետևից տալով, նա Նիբեմին խնդրում է արձակել իրեն վաճառից Նվրդա գնալու համար:

— Իմ սրտում արթնացած սերն այլևս չի համաձայնում

¹ Մ. Գ. Թադևոսյան — «Ճանապարհորդութիւն ի Հայաստան», էջ 294:

մնալ այստեղ առանց կրթության, եթե խնդրածս ողորմությամբ չստանամ, կամ կվախչեմ, կամ այնպիսի չարիք կգործեմ, որ կարժանանամ ձեր հալածանքին,—հայտարարում է նա կաթողիկոսին¹

Վանականներն սկսում են ծաղրել Մեսրոպի մտադրությունը, բայց Եփրեմ կաթողիկոսը ստիպված տալիս է իր համաձայնությունը: Երբ Մեսրոպը պատրաստվում է դուրս գալ Հաղպատից, Մարուքեն՝ վանքի կառավարիչը հրաժարվում է ձեռնամաղրել, ասելով, որ նա մի կտոր հացի համար ծառա է եղել վանքում և դեռ հանգչում է պահանջներ ներկայացնել:

Այնուամենայնիվ Մեսրոպը մնում է հաստատ իր որոշմանը. վերցնելով իր հետ Զորաբյանի հրատարակած Աստվածաշունչը, Պետրոս Բերգումյանի «Աստուածանմանութիւն» աշխատության ձեռագրի իր ձեռքով արտագրված օրինակը, 1822 թ. մայիսի 8-ին դուրս է գալիս Հաղպատից:

Ութ տարի հետո նրա ճանապարհը բռնում է վանքի մի ուրիշ գպիր ևս՝ Թ. Արուվյանը: Այն օրը, երբ նույն Մարուքեն գաղանի նման հարձակվում է ոտքով ճանապարհ ընկած Արուվյանի վրա, խլում նրա ճամփի պաշարը, անհաց և անդրամ թողնելով նրան, Արուվյանը պետք է որ հիշեր Մեսրոպին, որն իր նման հալածված և դառնացած թողեց վանքը, լուսավորության մեծ ճանապարհը բռնելու համար:

* * *

«Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքում, Հայաստանի տընտեսական և քաղաքական կյանքի ուսումնասիրությանը զուգընթաց, Թադիսթյանը տվել է հարուստ դիպվածներով լի իր կյանքի առաջին շրջանը, մինչև Հնդկաստան ուղևորվելը:

Իր կյանքի հաջորդ տարիները ևս նա փորձել է շարադրել նման ձևով, կապելով այն Պարսկաստանի ու Հնդկաստանի ժողովուրդների կյանքի և պատմության ուսումնասիրության հետ, գրել առնելով նաև իր շրջագայությունների ընթացքում այդ երկրներից ունեցած բազմաթիվ տպավորությունները: Այդպիսի գործերից մեկն է եղել նրա «Ճանապարհորդութիւն ի Պարսս» աշխատությունը, որի մասին առանձին կխոսենք իր տեղում:

¹ Նույն տեղ, էջ 358:

Հայաստանի Դրական Թանգարանում, Նալբանդյանի ար-
խիվից հայտաբերվեց այդ կիսով չափ տպագրված և կորած հա-
մարված գործը:

Այդ գրքի մեզ հասած հատվածի կենսագրական փաստերը
հնարավորություներն են տալիս մի փոքր շարունակել Թաղիադյա-
նի ճանապարհորդության նկարագրությունը:

Համաձայնությամբ դալով Մաքսուդ Սմանի հետ, Թաղիա-
դյանը նրա քարավանի հետ հասնում է Թավրիզ: Այստեղ նա
իջևանում է տեղի Հովհաննես անունով մի հայ քահանայի տա-
նը, սղասելով Թեհրան գնացող քարավանի. 15 օր անց Թա-
ղիադյանին հաջողվում է դուրս գալ Թավրիզից Աբբաս Միրզա
արքայորդու դաստիարակ Հաջի Մաղանդարունու քարավանի
հետ և ճանապարհվել Թեհրան:

Ծածկելով իր հայ լինելը, Թաղիադյանը, Հովհաննես քա-
հանայի խորհրդով, Հաջի Մաղանդարունուն ներկայանում է որ-
պես Երմոլովի կողմից Թավրիզ գործուղված պետական պաշտոնյա:

«Ծպտվեցի վրացական տաբաղի մեջ (մազերս թողնելով
տակավին գլխիս անվթար), ծալեցի զանաղան թղթեր, դրի ծրա-
րի մեջ, կնքեցի զանաղան կնիքներով, Հովհաննեսի ձեռքով շի-
նած, որը մասնագետ էր փորագրություն արվեստի մեջ, գրեցի
մաղախի մեջ և կեղծված, որպես մի խոշոր անձնավորություն
ճանապարհ ընկա Հաջի աղայի քարավանի հետ»:¹

Այնուհետև Թաղիադյանը մանրամասն նկարագրում է Թեհ-
րան գնացող այդ քարավանը, ճանապարհորդներին, իրեն՝ Հաջի
Մաղանդարունուն, նրան ցույց արվող ծառայությունները, ապա
իր հետ պատահած հետաքրքիր դեպքերը և այլն: Ընդհատ-
ված տպագրության պատճառով մեզ մնում է անհայտ նրա հե-
տագու ճանապարհորդության նկարագրությունը: Մենք գիտենք
միայն, որ նա Թեհրանից մի նոր քարավանով մեկնել է Բուշիր
և այնտեղից նախով՝ Հնդկաստան:

Հասնելով Կալկաթա Թաղիադյանը վնասվում է իր ծանոթ
Պողոս վարդապետին և նրա ետևից միևնույն Կալկաթայի մոտ
գտնվող Դաքա քաղաքը:

Մի տարու չափ Թաղիադյանն ապրում է Դաքայում, վա-
րելով սարկավազի պաշտոն Երուսաղեմի նվիրակ Աբրահամ Բյու-

¹ «Ճանապարհորդութիւն ի Պարսա», էջ 169.

քականցու մոտ: Միևնույն ժամանակ նա ինքնուրույն սովորում է անգլերեն:

Հաջորդ տարին Պողոս փարգապետի և Աբրահամ Բյուրականցու հետ Թաղիադյանը տեղափոխվում է Կալկաթա, մտնում հայոց Մարդասիրական ճեմարանը, հայոց լեզվի դասատուի պաշտոնով:

Կալկաթայում այդ ժամանակ միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը անգլիական հոլիսկոպոսական ճեմարանն էր, որի ուսկոորն էր Հնդկաստանում անգլիական իկհոկցու պետ, հայտնի Ռիչինալդ Հիբբը: Աբրահամ Բյուրականցու միջնորդությունով Թաղիադյանը կարողանում է համաձայնություն ստանալ մասնակցելու ճեմարանի դասընթացներին, սկզբում որպես ունկնդիր, հետո՝ ուսանող:

1826 թվականի փետրվարի 2-ին Թաղիադյանը մտնում է հոլիսկոպոսական ճեմարանը: Այդ օրը նրա կյանքի ամենանշանավոր օրերից մեկն է լինում: Վերջապես կատարվում է երկար տարիների նրա իղձը:

Կարճ ժամանակում Թաղիադյանը մեծ համբավ է ձեռք բերում ճեմարանում. երիտասարդ հայ վանականի ընդունակությունները, մանավանդ լեզուների արագ յուրացման մեջ, արժանանում է ուսկոորի հատուկ ուշադրությունը: Թաղիադյանի համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ խորանալու ստացած գիտելիքների մեջ:

Մի տարի անց մեռնում է Ռիչինալդ Հիբբը: Նրա ցանկություններն իրագործելու համար ճեմարանի վարչությունը որոշում է ընդունել երկու հայ աշակերտի՝ անկասկած կրոնական-քաղաքական նկատառումներով:

Ի նշան երախտագիտություն, 1828 թ. Թաղիադյանը հրատարակում է Ռիչինալդ Հիբբի «Պաղեստին» պոեմի հայերեն իր թարգմանությունը, կցելով մի առաջաբան, որտեղ մանրամասն նկարագրել է իր ուսումնառություն շրջանը Հնդկաստանում:

Այդ առաջաբանն ունեցել է իր ընդարձակ վարիանտը, գրված դեռևս 1823 թվականին. դա է, որ ձեռքի տակ ունեցել է Լեոն իր «Մեսրոպ Թաղիաթյան» աշխատությունը գրելիս:

Լեոնի մեջբերումներից երևում է, որ այդ վարիանտը գրված է եղել Ներսես Աշտարակեցուն ուղարկելու համար:

«Հովհաննես Շահխաթունյանցի կենսագրության» ծանոթությունների մեջ Սեդրակյանի հրապարակած մի նամակը (1826 թ. հունիսի 18) հաստատում է այդ ենթագրությունը:

«Վասն որոյ և ահա գտեալ իմ զգանձարանս շնորհաց, որում ցանկայի, գրեմ առ Ձերդ սրբազնութիւն ուրախ լինիլ ըստ Հօրն, որ ասաց Վորդիս մեռեալ էր և նկաց»,¹ գրում է Թադիադյանը Ներսես Աշտարակեցու ուղղած նամակում:

Լուսավորության համար օտար հորիզոններ ձգտող երիտասարդն արդեն վառվում էր հայրենիք վերադառնալու ջերմ ցանկությամբ: Նրան հրապուրում էր հայրենի հողի վրա նոր հիմունքներով առաջին հայկական դպրոց բացելու ցանկությունը. իսկ առանց հովանավորող ձեռքի անհնար էր դրա իրագործումը:

Նույն թվականի դեկտեմբերի 5-ին նա գրում է իր երկրորդ նամակը Ն. Աշտարակեցուն: Այս անգամ արդեն նրա կարճ և խիստ տոնից երևում է, որ նա վերավորված է Աշտարակեցու հիշաչար լուծթյունից, այնուամենայնիվ Թադիադյանը խնդրում է նրան համաձայնել իրեն վարդապետ ձեռնադրելու՝ հայ մանուկների կրթությանը նվիրվելու համար:

«Եթէ քարեհաճոյ երեւեսցի սրբազանութեան Ձերոյ, տեսանել զիս առ ոտս ձեր և քաղիլ զպտուղ գեղեցիկ վշտակութեանցս, յօրուտ մանկանց հարստութեան մերոյ, արժան համարեաց հրամայել Պօղոս եպիսկոպոսի, զի ձեռնադրեալ ինձ վարդապետ առաքեսցէ առ Ձեզ (որ թեպէտ քանիցս հրավերեալն է իւրովի, սակայն իմ չէ յանձն առեալ տակաւին):»²

Թադիադյանի բոլոր զիմուքները մնում են անպատասխան:

Առ ժամանակ թողնելով հայրենիք վերադառնալու միտքը, նա իր ձեռքն է վերցնում տղարանի հայկական բաժնի հրատարակության գործը:

1828 թվականին Թադիադյանը լույս է ընծայում էջմիածնից իր հետ բերած Պ. Բերզումյանի (Նախիջևանցու) «Աստուածամանուկութիւն» աշխատությունը, իր ծանոթություններով և

¹ Ա. Սեդրակյան—«Հ. Շահխաթունյանցի կենսագրությունը», էջ 232:

² Նույն տեղ, էջ 236:

A 31703

Կարապետ արքեպիսկոպոսին ուղղված ընծայականով: Դրան հետևում է կրոնական ըովանդակութուն ունեցող «Ճշմարտութիւն քրիստոնէական հաւատոյ» Դրովտիրոսի լատիներեն զրքի թարգմանությունը (գրաբար):

1830 թվականին նա ձեռնարկում է իր առաջին ինքնուրույն գործի տպագրությանը: Դա հունա-հոմեական դիցաբանության մասին մի հանրամատչելի ձեռնարկ էր «Դիցաբանութիւն» վերնագրով:

Այնուհետև Թադիադյանը տպագրում է Ռիշինալդ Հիրրի «Պաղեստին» պոեմի իր թարգմանությունը:


Այս բազմազան ձեռնարկումները ցույց են տալիս, որ Թադիադյանը տակավին ուսանողական տարիներից արդեն դրսևւորում էր գիտա-ստեղծագործական լայն գործունեութուն, որը ծավալեց նա հետագայում:

Բնական թվականների վերջերին հայրենիքից Հնդկաստան են հասնում բերկրալի լուրեր: Հայաստան մտած ուսանական դորքերը ազատագրում են երկիրը պարսկական լծից: Արեւիկյան Հայաստանից առհավետ վերանում է ասիական քոնակալ լուծը:

Ներսես Աշտարակեցուն են հասնում ամեն կողմից ցնծության ձայներ: Ազատագրված Հայաստանը դառնում է գաղութաբնակ հայության հուսալի հենարանը: Հայաստան ուղարկված բազմաթիվ ողջույնների և ուզերձների մեջ աչքի է ընկնում 1828 թվականին երևանյիներին գրած Մ. Թադիադյանի նամակը:

Թադիադյանի նամակը հայրենասիրական մի կոչ էր ուղղված հայ ժողովրդին. այնտեղ նա առաջադրում էր քաղաքական լուսավորական մի ամբողջ ծրագիր, ազատագրված երկրի հետագա զարգացման համար:

19-րդ դարի 20-ական թվականներին Թադիադյանն առաջիններից մեկն է եղել, որ գիտակցել է Ռուսաստանի պրոգրեսիվ դերը ասիական դեսպոտիաների՝ Պարսկաստանի և Թուրքիայի լծի տակ տառապող ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի ազատագրման, նրա ֆիզիկական գոյության և տնտեսական կյանքի ապահովման գործում: Այդ տեսակետից նա



մեծ նշանակութիւնն է տվել արեւելահայ հասովածի ազատագրութեանը պարսկական լծից՝ Ռուսաստանի միջոցով:

«Աչքներդ լույս, որ մեր քաղցր Աշխարհքն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, Քրիստոնեի տերութեան ներքո ընկավ: Փառք բարերարին ասածո, որ այսուհետեւ ավել ննդութիւնն չեք ունենալիք, ազատ քաղաքի քաղաքացի պիտիը անվանիք, ձեր ազգասիրութեան՝ իմաստասիրութեան լուրն և արվեստից հառաջադիմութիւննն բոլոր Աշխարհ պիտիը տարածվին...»¹

1820-ական թվականներին հայ մտավորականների մեջ Թաղիադեյանն առաջիններից էր, որ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան զարգացումը կապեց լուսավորութեան զարգացման հարցի հետ:

«Բայց հուսամ երբ որ ազնվութեան հոգին կնորոգվի ձեր միջումն,—գրում է նա այնուհետեւ,—դառն գերութեան քաշութիւնն կմոռանաք, էն վախտն կիմանաք, թե ի՞նչ է իմ լացս: Ախ իմ լավ քաղաքացիք, մի, հոգիս հարայ ա կանչում, հին խմորն թողիք, նոր Ազգի լուսավորութեան և պայծառութեան հետեցեք», գրում է «Վերք Հայաստանի» հեղինակի համաձայն ձգտումները հիշեցնող Թաղիադեյանն իր նամակում:

Թաղիադեյանը կոչ է անում կաղնակերպիկ լուսավորական գործը, թոթափել դարավոր ստրկութիւնը, դրա հետ ագիտութիւնը և նախապաշարումները:

«Եվ ինչպե՞ս կոպիտ սովորում են, էնպե՞ս էլ կոպիտ սովորեցնելով գնում են: Արվեստ պայծառացնիլ չեն դիտում, նոր արվեստ գտնիլ չեն կարում», հիշելով լուսումն, որ մի տեղ աղջիկը գրել կարգալ ա սովորում, դարձանում են, երբ ինգլիզ կամ ֆրանց հն տեսնում, կարծում են Աստված է երկնից իջել ոտներն ամպաթաթախ: Եվ ի՞նչ է պատճառն ազաչեմ, հիշե ոչ գիտութիւնից դուրկ մնալն»²

Թաղիադեյանն առաջարկում է հրեանցիներին հավաքել «Շհարի, Կոնդի, Ձորագլուղի» երեխաներին և դպրոց հիմնել, որի համար նա իր ծառայութիւնն է առաջարկում, լոռատանալով

¹ Հ. Մ կրեա ն—«Կենսագրութիւն Մ. Դ. Թաղիադեյան», էջ 133:

² Նույն տեղ, էջ 136:

հայրենիք բերել տպագրական մեքենա, գրականություն և դրամ,
գլխոց կազմակերպելու համար:

Նամակը տպագրված է եղել մի էջի վրա և բազմաթիվ
օրինակներով հասել է Հայաստան:¹ Թե ինչ արձագանք է դրել,
հայտնի չէ: Միայն մեկ հասել է Նվերեմ կաթողիկոսի կոնդակը,
որով նա շնորհում է Թաղիադյանին իր օրհնությունը, ցանկու-
թյուն հայտնելով տեսնել նրան էջմիածնում:

1830 թվականին Թաղիադյանն ավարտում է Կալկաթայի
անգլիական հոգևոր ճեմարանը և ստանում արվեստների մագիս-
տրոսի կոչում:

1831 թվականի գարնանը նա Ն. Զուղայից մի խնդրագիր
է ստանում, որով տեղի հասարակությունը հրավիրում է նրան
կազմակերպելու նոր դպրոց:

Այդ մասին նա գրում է իր օրագրում:

«Որ ծնաք ի ծառայել ազգի մերում, և ի նմին զարգացեալ
ի մանկութենէ թողաք զհպիսկոպոսական ճեմարանն Անգղիաց-
ւոց ի Կալկաթա՝ յուսով առաւել ծառայելոյ հայրենեաց և
հասանք ի նոր Զուղայ, զհետագայ խնդիր հոգեւորականաց և
աշխարհականաց նորա՝ ոչ արհամարհեցաք. կարօտ որքան և էաք
ծնողաց և ազգականաց մերոց՝ լաւ համարեցաք հոգեւոր կարօ-
տութիւն գնոր Զուղայ լցուցանել՝ քան զմեր ինքեան. և այն՝
ոչ այնքան վասն վարձու, որում և դրամօք և օգնեցաք քան
եթէ վասն սիրոյ և պարտեաց»:²

17-րդ դարից սկսած, Յաջատուր վարդապետի հիմնած
գլխոցից հետո, նոր Զուղան կանոնավոր դպրոց չէր տեսել. բո-
լոր փորձերը միշտ մատնվել էին անհաջողության: 19-րդ դարի
սկզբին գլխոց ունենալու պահանջն առանձնապէս սրվեց տեղում
բողոքական դպրոցներ կազմակերպելու պատճառով:

1830 թվականին Մադրասի բնակիչ Զուղայեցի Գրիգոր
Սամյանի կտակը արագացրեց դպրոցի կազմակերպման գործը:

1831 թվականի հունիսին Թաղիադյանը հասնում է Ն.
Զուղա: Չափանելով նույնիսկ կտակարարի հատկացրած գումար-
ների ստացմանը, նա իր սեփական գումարով կարգավորում է

¹ Ի օրինակը պահվում է Հայկ. ՍՍԻ պետական ձեռագրատանը
(Մատենդարան):

² «Ազգասէր Արարտեան», 1849, էջ 285—286:

գլխավորական շենքը և հուլիս ամսին կատարում հանդիսավոր բացումը: Դպրոցն անվանվում է «Ամենափրկչեան ճեմարան»:

Սակայն Թաղիադյանի հռահիմյան դործունեությունը տևում է մինչև նոյեմբեր ամիսը: Հոգաբարձուների անտարբեր վերաբերմունքը, դոմարի ստացման ձգձգումը, դուցե ավելի շուտ Հայաստան ընկնելու փափազը ստիպում է նրան Թողնել Նոր Զուղան և ճանապարհվել դեպի Էջմիածին:

ԹԱՂԻԱԴՅԱՆԸ ՀԱՅՐԵՆԻՓՈՒՄ

1831 թվականի նոյեմբերի 8-ին Մ. Թաղիադյանը հասնում է Էջմիածին: Այդ օրը կաթողիկոս էր օծվում Վրաստանի Թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Հովհաննես Կարբեցին:

Թաղիադյանը հայրենիք էր վառվում իր լուսավորական ծրագրի իրականացման ջերմ երազներով տարված:

«Մեսրոպ Թաղիադյանը եկել է Հնդկաստանից և իր հետքերի է վեց բեռ զրականություն, տալարան, և դրամ, մի ոմն բարերարի օգնությամբ երևանում հայոց դպրոց հիմնելու համար»¹, կարգում ենք Սալլանթյանի տակավին անտիպ նամակներից մեկում, ուղղված Ս. Աբովյանին:

Նույն տեղեկություններն է հաղորդում Աբովյանին Թաղիադյանի մասին Թիֆլիսից Մ. Մսերյանը (Զմյուռնացին). «Մ. Թաղիադյանը, որի մասին դուցե լսած լինեք, գալով Հնդկաստանից, ջանք է դնում մի դպրոց բանալու Վաղարշապատի ավերակներում՝ հայրենիքի որդիներին լուսավորելու համար՝ Հրաշք կլինի եթե գլուխ գա, ինչպես ինքը հույս ունի...»²

Ոգևորված Աբովյանը հեռու Դորպատից իր շնորհավորանքներն է հղում նորընտիր կաթողիկոսին, աշխատում համակել նրան հայրենիքը լուսավորելու վառ ձգտումներով. «Լուսավորությունը է բարձրանում աղգը, լուսավորությունից է ելնում ամեն բարեբախտություն»³, դրում է իր նամակում հայ ժողովրդի ապագա լուսավորիչը: Առաջադրելով լուսավորական գոր-

¹ Հայաստանի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 328:

² Ն. Շահադիզ—Դիլան Ս. Աբովյանին, 1940 թ., էջ 274:

³ Նույն տեղ, էջ 38:

ձուռնեության մի ամբողջ ծրագիր, նա խորհուրդ է տալիս Կար-
քեցուն հավաքել իր շուրջը Կարող ուժերին և վերականգնաց-
նել էջմիածինը. «մեկն ահա զբանցից ունեք հանձին Մ. Թա-
ղիաթյանի. հետևորդներ կլինեն նրան բազում, բազում»:

Սակայն այդ բոլորը լոկ երազ էր միայն:

Թե Թաղիաթյանին և թե Աբովյանին վիճակված էր ապրել
այն ծանր ճակատագրերը, որն ունեցել է յուրաքանչյուր լուսա-
վորիչ կղերա-ավատական զոգմաներով կաշկանդված հետամնաց
խրակահույթյան մեջ:

Դեռևս էջմիածնում եղած ժամանակ, մինչև 1812 թիվը, Ներ-
սիս Աշտարակեցու ջանքերը՝ վանքի միաբանությունը հանել
քնդարմացած վիճակից, ոչ մի հաջողություն չունեցան: Այդ
ժամանակ նա ծրագրում էր վանքը լուսավորության օջախ դարձ-
նել, բայց նրա հույսերն ի դերև ելան: Այդ է հաստատում
նաև 1831 թվականին Մ. Մսերյանի հրատարակած գիրքը «Պատ-
մութիւն կաթողիկոսաց էջմիածնի»: Պարզվում է, որ Սիմեոն կա-
թողիկոսի հիմնած տպարանը երկար ժամանակ անօգտագործելի
մնալով վեր էր ածվել բրդի պահեստի. մատենադարանը մատ-
նըված էր կատարյալ անտերության. հնագույն արժեք ունեցող
գրականությունը և ձեռագրերը, առանց ցուցակագրման թափ-
ված էին իրար վրա, ինթակա փոման և ոչնչացման: Վանա-
կանների տղիտությունը և այլանդակ վարքն ու բարքը հասել
էր ծայրահեղ սաստիճանի: Լուսավորության ամեն մի ձգտում
խեղդվում, ոչնչանում էր այդ ճղճիմ միջավայրում:

Ներսիսի աքսորից հետո, քաղաքական նոր դեպքերի բե-
րումով հայրապետական զահը շահած Հովհաննես Կարբեցին ա-
ռաջին իսկ օրից լիապես դրսևորեց հոգևորականության թշնա-
մանքը սակավաթիվ մտավորականների մեջ խմորվող լուսավո-
րական դադավարների հանդեպ:

Իր անձնական ապահովության և հակառակորդներին մե-
կուսացնելու դրոժով տարված Կարբեցին ժամանակ չունեւր զբաղ-
վելու լուսավորական որևէ ձեռնարկումով: Միայն նոր տարվա
փետրվարին է Թաղիաթյանը ստանում թուլյություն՝ սարկա-
վադներից և գյուղական մի քանի մանուկներից մի խումբ կազ-
մել՝ ուսուցման համար: Դպրոցի հետ միասին Թաղիաթյանն
առաջարկում է իր ծառայությունը նաև տպագրական ասպարեզի

համար: Վերջապես Կարբեցին որոշում է հրատարակել էջմիածնի-
օրացույցը, այդ գործը հանձնարարելով Թաղիադյանին: Արո-
վյանին գրած Սալլանթյանի մի նամակից երևում է, որ կաթո-
ղիկոսը սկզբում խոստացել է ղրամական վարձատրություն,
բայց հետո հրաժարվել է իր խոստումից, Թաղիադյանին թողնելով
անելանելի վիճակի մեջ: «Յուզակ ստացեալ աղխից...» երգիծա-
բանական բանաստեղծություն մեջ Թաղիադյանը մանրամասն
նկարագրում է այն ոլբերդական կացությունը, որի մեջ դառնու-
լիս է եղել ինքը: Երկու ամիս աշխատելուց հետո, ապրիլի 1-ին
նա թողնում է վանքը և գիշերով փախչում Երևան:

Մյուս օրը մեծ իրարանցում է բարձրանում վանքում:
բաժնասանքներով և դավերով լեցուն մթնոլորտը աշխուժանում
է: Մեղադրանքի ահալօր լուսանքներ են թափվում Թաղիա-
դյանի հասցեին. անցյալում էլ միաբանությունը ինքնակամ լրած-
սարկավազն այժմ իր արարքով պատասխանատվության էր-
կանչվում ողջ հոգևորականությունից: Երևի:

Անտիպ և տպագրված մի քանի նամակներ մեր առջև
բացում են այն գաղջ միջավայրը, որի մեջ է եղել Թաղիադյանի:
էջմիածնում գտնված շրջանում:

«Մեսրոպ Թաղիադեանց իբրև ղլեառն առականեալ ա-
ռասպելին ի Հնդկաստանէ աստի, ձայն բարձեալ ուժգինսս պոչե-
ալ եկն հաս յէջմիածին, աղնդիւղաս ամբարտաւանութեամբ
իւրով մուկն չնչին ծնաւ ի նախատինս իւր»,¹ — ծաղրում է նրան
Ա. Արարատյանը, Աբովյանի և Մեսրոպի ընկերներից՝ եկեղեցու
մոլի ջատագով, թշնամի եվրոպական լուսավորություն տարած-
մանը մեր երկրում (հետագայում այդ նույն Արարատյանը տն-
ցավ ռեակցիայի կողմը և թշնամական պայքար սկսեց Արո-
վյանի, Նազարյանցի և Նալբանդյանի դեմ, համարելով նրանց
լուծբերականներ, ազգի սուռնը քանդողներ):

Ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հովհ.
վարդապետ Շահխաթունյանը Մսերյանին գրած իր մի նամա-
կում. նրա գրած արհամարհական խոսքերից երևում է, որ բացի
նյութապես նեղվելուց և կաթողիկոսի անտարբերությունից,
Թաղիադյանը վանքի միաբանների կողմից ենթարկվել է գաղտ-

¹ Հայաստանի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 22:

նի հալածանքի, նրա ճրի ծառայութեան մեջ նրանք ցանկացել են տեսնել ինչ-որ շահի ակնկալութիւն. նրա դասավանդման և առհասարակ մտքերի արտահայտման մեջ ղգացել են «անխոհեմութիւն և անպատշաճութիւն», լրտեսել են նրա դասերը և մեղադրել նրան լութերական դավանանքի քարոզման և այլ մեղքերի մեջ:

Շահխաթունյանի նամակից երևում է նաև, որ նա անձնապես հակակրել է Թաղիադեյանին, քննադատելով նրա «եվրոպասիրութիւնը», որը նրա կարծիքով քնաս էր բերում ավելի, քան օգուտ: Շահխաթունյանի ատելութեան պատճառներից մեկն էլ պետք է համարել այն, որ Թաղիադեյանն իր բազմակողմանի պատրաստութեամբ նսեմացնում էր նրա դիտական հեղինակութիւնը. Շահխաթունյանը դրանով էլ բացատրում էր կաթողիկոսի կողմից որոշակիորեն ղգացվող սառնութիւնն իր հանդէպ, որը և առիթ էր տվել նրա ղգոհութեանը կաթողիկոսի դէմ:

Այդ ժամանակներում առանձին թափով առաջ էր գնում Սևանում «Ուխտի միաբանութիւն» կազմակերպելու գործը. հեռու Դորպատից դրան արձագանքում էր և Աբովյանը: Շահխաթունյանի պրած մի նամակից երևում է, որ նրանք աշխատել են այդ գործը դադարի պահել Թաղիադեյանից, չցանկանալով մասնակից դարձնել նրան, պատճառ բերելով նրա անհանգիստ բնավորութիւնը՝ հակառակ նրա «ողջախոհ մտքի»: Թաղիադեյանի շուրջը պտտվող հերյուրանքներն ու բամբասանքները ցրվում են կաթողիկոսի ներկայացրած բողոքով «Հայոց աշխարհի» նահանգապետ Բենքուտովին. չափազանց վրդովված կաթողիկոսը բողոքում է, որ ինքը իբր տեղյակ չի եղել Թաղիադեյանի նյութական ծանր վիճակի մասին և զայրացել է, որ նա իրեն իրազեկ չի արել այդ մասին և թողել, փախել է վանքից: «Եթե որեք պետք ունիր, կարող էր մեղ հայտնել» գրում է նա Բենքուտովին: Կաթողիկոսի խոսքերից պարզվում է, իբր Թաղիադեյանը ենթակա չի եղել ոչ «Ֆալախկայի և ոչ Գարետան վտանգին». վանականների կասկածները լութերական մտքեր քարոզելու մասին եղել են լոկ բամբասանք, և, որ գլխավորն է, կաթողիկոսը ինքը գոհ է եղել նրա եռանդուն և բարեխիղճ աշխատանքից. — Մեր հույսն օր ավուր աճում էր, մենք դուրախ էինք,

որ գործը օր ավուր հաջողում էր ի պայծառություն մայր աթոռի և ազգին:¹

Կաթողիկոսը պահանջում է վերադարձնել Թաղիադյանին էջմիածին, հակառակ դեպքում զրկել նրան ռուսական սահմաններից դուրս գալու իրավունքից, դատապարտելով անգործության և հուսահատության:

Այդպես էլ եղավ: Թաղիադյանը մերժեց էջմիածին դառնալ: Նրան էլ մերժեցին դուրս գալ ռուսական սահմաններից: Հուսահատված Թաղիադյանը փորձեց Երևանում դասատուի պաշտոն ստանալ, բայց նոր բացված ռուսական արքունական դպրոցում հայոց լեզու չէր դասավանդվում: Անհրաժեշտ էր միջնորդություն Հայաստանի կենտրոնում հայերեն լեզու դասավանդելու թույլտվությունը ստանալու համար: Թաղիադյանը գործի անցավ: համաքից քաղաքի մեծամեծներին և մի խնդրագիր կաղմեց կաթողիկոսի անունով: Դիմումի մեջ նրանք առանձնապես ընդգծում էին այն, որ անհրաժեշտ է օգտագործել Թաղիադյանի Երևանում լինելու հանգամանքը, «ապա թե ոչ կլինա Թաղիադյանը և մեր մանուկները կմնան զուրկ մայրենի լեզվի ուսուցումից, առանց որի անհնար է օտար լեզուների և օտար գիտությունների մեջ առաջանալը»:² զրկել էին նրանք իրենց դիմումի մեջ:

Այդ դիմումին Սինոդը, կաթողիկոսի անունից, մերժում է ընթացք տալ միջնորդելու միջոցով, համարելով այդ անհնարին պահանջ:

Թաղիադյանին մնում էր անհույս և աննպատակ թափառել Երևանի և Վաղարշապատի փողոցներում:

Պետական Ձեռագրատանը-Մատենադարանում պահպանվող Թաղիադյանի մի քանի նամակները, ուղղված իր մտերիմ ընկեր Սաչառուր Բեգ Շահնազարյանին, բացահայտում են նրա վերաբերմունքը վանքի և իր շրջապատի հանդեպ, միաժամանակ պատկերում են նրա հոգեկան ծանր կացությունն այդ դժվարին պայմաններում:

1832 թ. օգոստոսի 2-ին ղրած նամակում Թաղիադյանը

¹ Սեդրակյան Արիստ. Կաթողիկոս—Լով. Կաթ. Շահնաթյունյանցի կենսագրությունը, 1898 թ., էջ 240:

² Նույն տեղ, էջ 241—2:

գնատւմ է վանքի միաբանութեան և նրանց նյութած դասերի մասին. նա գրում է, որ ողջ միաբանութեանը մեղադրում է իրեն «ամբարտաւանութեան և հպարտութեան» մեջ, մինչդեռ ինքը, միաբանութեանը օրավուր կորցնում է իր դեմքը, մխրձվելով այն տիղմի մեջ, որ պատրաստել են հենց իրենք:

Ամբան ամիսներին Թաղիադեանը տառապում է տենդով, որը տևում է համարյա միևնույն նոյեմբեր—դեկտեմբեր ամիսները:

Նոյեմբերի 25-ին Շահնազարյանին գրած նամակից երևում է, որ Թաղիադեանը գնացել է կաթողիկոսի «տաքը», խնդրել նրանից օգնութեան, և կաթողիկոսը բարյացակամ վերաբերմունք է ցույց տվել, թույլ տալով 15 օր շրջագայել Մասսի կողմերը, օգտվելով միաբան համար: Այդ նամակից պարզվում է նաև այն, որ կաթողիկոսը խոստովանել է արել, և ինքը դա համարում է «ազգաշահ հաջողութիւն»: Նամակի ընդհանուր տոնից նաև երևում է, որ Թաղիադեանը շտապում է առողջանալ հայրենիքի օգտին ծառայելու համար, որը նոր օգնութեամբ է սկսում նրա հոգին: Սակայն դեկտեմբերի 2-ին գրած նամակը խիստ հուսահատ և թախծոտ շեշտ ունի, մյուս կողմից էլ ծանր հիվանդութեանն է սաստիկ նեղում նրան. «ողջ եմ միայն օգնչելու հնարավորութեան չափ» գրում է Թաղիադեանը այդ նամակում: Կտրված դրսի աշխարհից, նա ապրում է հոգեկան անձկութեամբ:

«Գրեթէ իսպառ զուրկ եմ յընկերակցութիւնէ մարդկան զորս Դիոգինէս ճրագաւ փնտռելոյ ի լոյս միջօրէացեալն Արեգական: Խուժկան բրտութիւն եղնավարաց տեղւոյս ոչ իւրք մխիթարել կարէ զիս, ուստի ի կարծեցեալ ապահովութեան կենաց իմոց՝ թուիմ լինիլ ի բանտի»:¹

Դեկտեմբեր ամսին Թաղիադեանը խնդրագիր է գրել Թեոփոսիա՝ Խալիբյանին, ներկայացնելով իրեն՝ խնդրել է ընդունել որպէս դասատու տեղի դպրոցում: Պատասխան ստանում է թե ոչ, մենք այդ չպիտեւք, բայց նույն ամսին նա դիմում է անում Էջմիածնի Սինոդին, խնդրելով հատկացնել հողամաս երկրագործութեամբ զբաղվելու համար:

Ահա թե ուր է հասնում իր հայրենիքի լուսավորութեան

¹ Հայկ. ՍՍՌ Պետական Զեռագրատուն, «Կաթողիկոսական դիվան», Թղթապանակ 38, գործ № 278:

աղնիվ ձգտումներով տարված, բայց դրա փոխարեն քաղցի և տառապանքի մատնված հայ ժողովրդի առաջին լուսավորիչներից մեկը:

Այդ վիճակի մեջ է Թաղիադյանը թևակոխում 1833 թվականը:

1833 թվի ընթացքում էջմիածնում տեղի ունեցած նորընդյունները սլառահա դարձան Թաղիադյանի վիճակի փոփոխությանը:

Մեկուսացնելով ներսեսի կողմնակիցներին, Կարբեցին այնուհետև հայնիվ չկարողացավ խաղաղ վերացնել իր դեմ եղած դժգոհությունները:

Կարբեցու կաթողիկոսության երկրորդ տարին այդ դժգոհություններն արդեն սուր կերպարանք ստացան և արտահայտվեցին ութ եպիսկոպոսների հրապարակական բողոքի մեջ, Կարբեցու կամայական իշխանության հետևանքով միաբանները կատարելապես զրկվել էին նույնիսկ տարրական իրավունքներից: Ըմբոստացողների հետ էին նաև Հովհ. Շահխաթունյանը, Հովհ. Ղրիմեցին, Մանվել Կյումուշխանեցին և ուրիշները: Շահխաթունյանը, որը Թաղիադյանից հետո վարում էր նրա պաշտոնը, բողոքի հետ միասին Կարբեցուն ներկայացրեց իր հրաժարականը:

Կառավարության օգնությամբ Կարբեցուն հեշտությամբ հաջողվեց խեղդել այդ ընդվզումը, պատասխանատվության հսկարեկելով բողոքողներին:

Այդ ժամանակ է ահա, որ Թաղիադյանը նորից հրավերվում է իր նախկին աշխատանքին, փոխարինելու արգեն Հովհ. Շահխաթունյանին:

Տարիներ անց Թաղիադյանն իր «Ազատ»-ում հրապարակում է այն պայմանագիրը, որ կնքել էր իր հետ Սինոդը այդ թվականի հունիս ամսին, որով նա պարտավորվում էր անսղուծաբար ծառայել վանքին:

Երկու տարվա ծանր տառապանքներից հետո ֆիզիկապես քայքայված և հոգեպես ընկճված Թաղիադյանին մնում էր ենթադրվել Կարբեցուն: Հուլիս Հունիսի 1-ով այլևս լուսավորության սերմեր աճեցնել հայրենիքում, նա մտածում էր դեթ որևէ կերպ օգտակար լինել նրան:

1833 թվականի ամռանից նա կրկին իր ձեռքն է առնում

գալրոցը, տպարանը և մատենադարանը: Այդ և հաջորդ տարվա-
նրա գործունեութեան մասին մենք տեղեկութեաններ ունենք
1834 թ. մարտին Կարբեցու գրած մի կոնդակից՝ Անդրկովկա-
սյան կառավարչապետ բարոն Ռոզենին: Կոնդակը վերաբերում է
ամբողջապես Թաղիադյանին: Իրենից և իր իշխանութեանից
գոհ Կարբեցին այս անգամ արդեն, կամենալով ցույց տալ իր
բարյացակամ վերաբերմունքը հանդեպ իր ստորադրյալները,
գովում է Թաղիադյանի տաղանդը, ջանասիրութեանը, գործու-
նեութեանը զբաղման արդյունքները և խնդրում բարոն Ռոզենից
կայսերական որևէ շնորհ: Սպասում էր Թաղիադյանը կայսերա-
կան շնորհի թե ոչ, այդ հայտնի չէ. հայտնի է միայն, որ Թա-
ղիադյանն այդ նույն ամիսներին առանց որևէ ակնկալութեան
նորից թողնում է էջմիածինը և բռնում Նոր Զուղայի ճանա-
պարհը:

Նոր Զուղայի հասարակութեանը 1834 թվի մայիս ամսին
երկրորդ խնդրագրերն է գրում Թաղիադյանին, որով խնդրում է
իր նախկին տեսչին վերադառնալ Ն. Զուղա, վերականգնել
գալրոցը:

Նոր Զուղայից Թաղիադյանի գրած մի նամակը կաթողի-
կոսին պարզում է, որ նա խորապես դժգոհ է եղել էջմիածնի
գալջ մթնոլորտից և ամեն բոլոր ցանկացել է դուրս արձնել
Կարբեցու և նրա արքանյակների իշխանութեանից:

Կարբեցին դժգոհ է մնացել Թաղիադյանից Ն. Զուղա գնա-
լու համար: «Հետևելով ձերոյց երիտասարդական կրից, չկարո-
ղացիք իմանալ զդին շնորհաց և աշխատանաց Ձերոց, միանգա-
մայն և դարձողութիւն մերոց հայրական առ Ձեզ գրոց»¹, — գրում
է Կարբեցին Թաղիադյանին: Թաղիադյանը պատասխանում է
նրան 1834 թ. սեպտեմբերի 14-ի նամակով. քննադատելով կա-
թողիկոսի «հայրական այդ գթութեանը» նա հայտարարում է,
որ էջմիածինը միշտ էլ ծանր է թվացել իրեն և ինքն ավելի
լավ է համարում լինել «տարագիր օտարութեան մեջ», քան
հայրենիքում հալածվել անարժան կղերականների կողմից:

Թաղիադյանի դժգոհութեաններին ավելացել էր և այն, որ
ցարական կառավարութեանը ձեռնամուխ էր եղել արդեն հայ-

¹ Հայկ. ՍՍԻ Պետական արխիվ, ֆոնդ 57, «Կաթողիկոսական դիվան»,
գործ 7, էջ 33—34.

Պակն դպրոցները կըճատուանը. այլևս հուշս չկար նոր դպրոցի կազմակերպման համար և Թաղիադյանին թվում էր թե այլևս ոչինչ չունենր անելու հայրենիքում:

Առաջին տարին Ն. Զուղայում Թաղիադյանն անց է կացնում խաղաղ և աշխատանքի համար արդյունավետ ամիսներ: Հավաքելով ցրված աշակերտներին իր շուրջը, նրանց թիվը հասցնում է 160-ի, որ մեծ հաղթանակ էր այն ժամանակվա ուսումնական մի հաստատության համար:

Էջմիածնի ծանր տպավորություններից հետո, իր նոր ծրագրերով ոգևորված Թաղիադյանը նույնիսկ չէր նկատում նյութական այն նեղ պայմանները, որոնց մեջ գտնվում էր նա այնտեղ:

«Պարոն Մեսրոպս Վարժապետը լինելն ընկոն ցնծման էր»,—գրում է նրա աշակերտներից մեկը՝ Հ. Հարությունյանը, Թաղիադյանի մասին գրած իր հուշերի մեջ:

Այդ տարին էլ հենց տեղի է ունենում Թաղիադյանի ամուսնությունը Ն. Զուղայի վաճառական Մկրտիչ Սեթի աղջիկ Թանգ Խաթունի հետ:

Մեսրոպ Սեթը, որը Թանգի եղբոր տղան էր, 1926 թվականին հրատարակած իր «Գրիչ ոսկեգրիչ մատենագրին Մ. Դ. Թաղիադեանց» համառոտ կենսագրական ակնարկի մեջ տալիս է Թաղիադյանի կյանքի այդ շրջանի մի քանի մանրամասնությունները: Այնտեղ նա, ի միջի այլոց, մեջ է բերում նաև Թանգի մի նամակը Թաղիադյանին, գրված նրա փոքր եղբոր՝ Հակոբի (Մ. Սեթի հոր) ձեռքով: Նամակը թելադրված է Զուղայի հայերենով և արտահայտում է Թանգի պատանեկան անկեղծ ու ջերմ զգացումները, նրա պարզ հոգին և խորը պատկառանքն իր փեսացուի և «ամենագետ վարժապետի» հանդեպ:

... «Շատ և շատ շնորհակալ եմ,—գրում է Թանգը,—որ ինձ մտածել տա և գիր տա գրել. շին կենաս, ապրի արեդ և միշտ ալայծառ էլնիս, որ դուշմանի սրտով չեկնի: Էս քանի շարքն զոր կարողացա գրեցի ձեր հրամանաց աշակերտ և իմ փոքրիկ եղբոր սիրելի Հակոբի ձեռնով, քուրիկ Վարդխաթունիցն գաղտնիկ և էն գրիչն, որով գրեցի էս գիրն, որ լուսահոգի հայրս բերե էր իր խեղ Սուրաթուց, էն էլ որպես մեն պատիկ յադգարի ուղարկում եմ գլխական վարժապետիդ, իմ սիրելի մորաքույր

Սիրվարդի ձեռնով, որ թեպետ և ղաբլիաթ չունի, ամեն անգամ-
երբ որ գործ կածես էդ գրիչն, կմտաբերես հրամանոց խոնարհ
և խղճուկ թանգ խաթունին, որպես ես միշտ պիտի մտաբերեմ
իմ գիտնական վարժապետին ամեն անգամ, երբ որ տեսնեմ, իմ
սիրուն մատանին իմ մատուժս:

Մնամ հրամանաց խոնարհ աղախին և ծառա թանգ խա-
թուն Սեթյան, Ն. Զուղա, 15 հոկտեմբերի՝ (1834 թ.):

Նոր Զուղայում հաստատվելու երկրորդ տարին խիստ սըր-
վում են թաղիադյանի և դպրոցի կառավարիչների փոխհարաբե-
րությունները:

Ինչպես առաջին, այնպես էլ այս անգամ, կառավարիչներն
իրենց անտեղի միջամտություններով շարունակ խանգարում էին
թաղիադյանին:

Իրենց ձեռքը վերցնելով Սամյան կտակի գումարները,
ներառ Վճարում են թաղիադյանի հասանելիքը՝ կիսով չափ,
մնացածը յուրացնում. թաղիադյանն ընկնում է նյութակա-
ն ծանր պայմանների մեջ:

Վարժապետ Մեսրոպն յուր լավագույն ջանք գործ դնել
վասն աշակերտաց հառաջանելոց,—գրում է նրա աշակերտներից
մեկը,—և հառաջանար, բայց շուղայեցիք նրա արժեքը չիմացան,
այդ աղագավ վարժապետի սիրտը սառեց, հրաժարվեց յուր պաշ-
տոնիցը. վերջը չուղայեցիք զղջացին այդպիսի վարժապետ կո-
րուսանելն»:¹

Այդ ժամանակ Ն. Զուղայի առաջնորդն էր թաղիադյանի
նախկին վարժապետ Հովհ. Բագրևանդացին: Առաջին շրջանում
բարյապկամ վերաբերմունք ցույց տալով իր աշակերտի հան-
դեպ, Բագրևանդացին շատ շուտ սկսում է նրա հետ վարվել
«տնավարի», ինչպես անցյալում, անտեսելով նրա տարիքը, փոր-
ձը և ընդունակությունները. հետևելով «զորագունդ խմբին»
(թաղիադյանն այսպես է անվանում իր դպրոցի հոգաբարձուներ-
ին), սկսում է հալածանք նրա դեմ:

Թաղիադյանի անհանդուրժող բնավորությունը, նրա անա-

¹ Մ. Սեթ—«Գրիչ ոսկեգրիչ մատենագրին Մ. Դ. Թաղիադեանց», 1926
թ., էջ 11—12.

² Հ. Շահնաղարյան—Սարգսյան—«Դիտողագիր կենսագրութ.
Մ. Դ. Թաղիադյանի», 1888 թ., էջ 33.

չառ քննադատությունն ավելի են սրում կառավարիչներին իրենց վարժապետի դեմ. Թաղիադյանին կոչում են «ինքնահալած»՝ էջմիածնում նրա հետ կատարված դեպքերի համար. արհամարհում են նրան, անվանելով «դրսիցի վարժապետ» և այլն:

Դպրոցի հոգաբարձուներից Ղևոնդ Ավագյանը, որը Թանգի ազգականներից էր, անգամ աշխատում է համոզել Թանգին հեռանալ Թաղիադյանից, խոստանալով նախօրոք համաձայնություն վերցնել առաջնորդից և պսակալույժ անել նրանց, եթե Թանգը ցանկանա:

1835 թվականի նոյեմբերի 26-ին կաթողիկոսի գրած մի կոնդակից երևում է, որ Թաղիադյանը գանգատվել է նրան Հովհ. Բագրևանդացուց և կաթողիկոսից ստացել է հորդորանք, մոռանալ եղածը և նույն եռանդով շարունակել աշխատանքը դպրոցում: Թաղիադյանի մի ուրիշ նամակից երևում է, որ նա մի քանի անգամ թողել է դպրոցը և նորից համաձայնության գալով վերսկսել իր աշխատանքները հուլյս ունենալով լեզու գտնել նրանց հետ:

1836 թվականի, հավանաբար, վարնանը, Թաղիադյանի գրած մի նոր նամակը կաթողիկոսին, բացում է վարագույրը կատարված այն դեպքերի, որոնք պատճառ են դառնում նրա ընդմիջտ հեռանալուն Ն. Զուղայից:

Նորից թողնելով դպրոցը, Թաղիադյանը դիմում է Թավրիզի ուղևոր գործերի ներկայացուցիչ Դուրնովին, բացատրելով իր հերթին բողոքագիր է ներկայացնում Դուրնովից բարձր կանգնած բարոն Բոդեին և մեղադրում Թաղիադյանին նրա երախտամոռության համար: Թաղիադյանին Դուրնովը ցույց է տալիս առաջնորդի գրած նամակը և պարզվում է, որ նա գրել է Բոդեին, թե իբր Թաղիադյանը 8 տարի էջմիածնում ապրել է իր հաշվին, Հնդկաստանում կրթություն է ստացել իր հաշվին, որ ինքն է Թաղիադյանին Զուղա հրավիրել էջմիածնից, հոգալով նրա ծախքերը և վերջին 8 ամսվա ընթացքում նրան տվել է առձեռն 202 թուման, և այժմ բոլորից հետո իբր թե Մեսրոպը ճանապարհի և անպատիւ անձ է և չունի ոչ ոք ընդ նմա գրութիւն»:

Կաթողիկոսին գրած նամակից երևում է, որ Թաղիադյանը կանչել է տալիս առաջնորդին Բոդեի մոտ և պահանջում նրանից

քաղաքաբնութիւնն և ապա ջրում նրա «եպիսկոպոսական ճշմարտութիւնները»:

Այնուհետև Հովհաննես առաջնորդը թույլ է տալիս իրեն նոր կեղծիք: զարոցի հոգաբարձուների անունից (ի դեպ, որոնց թաղիադշանն իր նաժականում անվանում է գինեգործներ և ոչ լուսավորութեան մոտ կանգնած մարդիկ) նա Դուրնովին գրում է թե «ազգը, այսինքն ջուղայեցիք չեն ընդունում նրան, որպէս վարժապետի»: Դուրնովը հասկանում է առաջնորդի դավերը և պահանջում է նրանից թաղիադշանի համար գումար, որպէսզի սա հնարավորութիւն ունենա թողնել Զուղան, Հետագայում հիշելով այդ դառն օրերը, թաղիադշանը գրում է իր «Ազգասեր»-ում, որ այնտեղ իր հետ «ավելի պարսկորեն վարվեցին, քան ազգորեն»:

1836 թվականի ամռանը թաղիադշանն իր կնոջ հետ դուրս է գալիս Զուղայից և ճանապարհովում թափրից:

Գալուստ Շիրմազանյանի հաղորդած տեղեկութիւնների համաձայն թաղիադշանը թափրիցում անդլերինի դասեր է տալիս արքայաղն Մելիք Ղասա Միրզային, իսկ հետո տեղավորվում թափրիցի հայկական դպրոցում:

«Եթե թաղիադշանը ճշտութեամբ ստանար իր ոռճիկը, նա իրկար ժամանակ կծառայիր մանուկներին, բայց ցավելով պիտի ասեմ, որ շատ անգամ ոռճիկը պակաս լինելու համար, նա ստիպված է լինում փոխ գրամ ասնել իր ծանոթներից օրական պարենը հայթայթելու համար»¹, — գրում էր նրա մասին Գալուստ Շիրմազանյանը Տ. Սադանյանի մասին գրած կենսագրականի մեջ:

1837 թ. նոյեմբերի 18-ին անհաջող ծննդաբերութիւնից մեռնում է թաղիադշանի կինը, 21 տարեկան թանգ Խաթունը: Թաղիադշանը սև մարմարից մահարձան է կանգնեցնում թափրիցի հայ եկեղեցու որմերից մեկում, հետևյալ մակագրութեամբ.

Թանգ Մեարմալայ Թաղիաթյան

Օտար յիփոց հայրենեաց

Ի ծնանել գմարդ աշխարհի

Մնայ ինքնին առ Աստուած:

1837 ամի 18 նոյեմբեր.

¹ Հատվածներ Տ. Ս. Սադանյանի կենսագրութիւնից, «Մասիս», 1876 թ., № 1759.

Կնոջ մահից հետո Թաղիադյանը թողնում է Թավրիզը և
կրկին ճանապարհ ընկնում դեպի Էջմիածին: Ինչպես միշտ,
այնպես էլ այս անգամ նրան հանդիպում է խորը հիասթափու-
թյուն: Պոլսի հիման վրա կատարված փոփոխություննե-
րը, կաթողիկոսի կամայականություններին ավելացած Սինոդի
պրոկուրոր Դորդանովի, ատենադպիր Քարտաշյանի միահեծան
իշխանությունը, ծանր ու ավելի խեղդող էր դարձրել Էջմիա-
ծնի մթնոլորտը: Մի երկու ամիս Թափառելով Երևանի և Էջ-
միածնի փողոցներում, Թաղիադյանը մատնվում է լրիվ հուսա-
հատության: Մի անգամ, ինչպես պատմում է ինքը, գալով Էջ-
միածին, նա մտնում է վեհարան կաթողիկոսի մոտ: Վեհարանը
Թափուր գտնելով, նա նկատում է թանաքամանի վերածած մի
հախճապակյա աման, որը Հնդկաստանում որպես թքաման են
գործածում և այդ նպատակով էլ ուղարկված է լինում Էջմիա-
ծին. նա վերցնում է մի կտոր թուղթ և հանպատրաստից գրում
հայտնի դարձած քառատողը.

Երբ թքամանն թանաքաման
Դարձել է, տես, յայս վեհարան,
Զի՛նչ այլ քեզ յոյս աստեն մնալ,
Փնխիր փութով, Մեսրոպ Դավթեան:

Թուղթը թողնելով սեղանին, Մ. Թաղիադյանը նույն օրը
դուրս է գալիս Էջմիածնից և բռնում Պոլսի ճանապարհը, Եվրո-
պա անցնելու մտադրությամբ:

ՆՈՐԻՑ ՏԱՐԱԳԻՐ

1838 թվականի մայիսին Մ. Թաղիադյանը հասնում է
Պոլիս:

Օր յոլովի հինգերորդ,
Յոր ես պանդուխտ 'ի Պոլիս
Սմբուլի վան անձանօթ
Վաստակաբեկ կամ հողիս...

գրում է բանաստեղծը իր «Հայկ ի տեսիլ հայկադնին» պոեմի
առաջին մասում, հիշելով իր անցկացրած ծանր օրերը հայրե-
նիքում:

Թափաբամով հոգևորականներից և տղետ, անհոգ առևտրականներից հալածված Թաղիադյանը եղադուժ էր լուսավորության շողեր տեսնել քաղաքակրթությանը մոտ կանգնած Պոլսի հայկական դադութուն:

Հաստատվելով Պոլսում, Թաղիադյանը տեղավորվում է քաղաքի հայտանի տմիրա Սերվերյանների տանը՝ դաստիարակի պաշտոնով, միաժամանակ դասախոսություններ վերցնելով Գուգուենջուկի ճհամալսարաններում¹:

Այդ ժամանակ Պոլսում հասունացող քաղաքական նոր մթնոլորտը պետք է որ Թաղիադյանին ներշնչած լիներ նոր հեռանկարներ, լուսավորության դարգաշման համար:

Երկարատև պատերազմներից և Ֆետդալական հակասություններից քայքայված, օտարերկրյա կապիտալի տիրապետությանը ենթակա Թյուրքիան ճանապարհ էր օրոնում դուրս գալու անտեսական-քաղաքական ճգնաժամից: Նպաստավոր պայմանն այդ ժամանակ Թյուրքիայի արտաքին գործերի մինիստր Ռեզիդ-փաշայի առաջադրած ռեֆորմի ծրագրին էր, որը որպես օրենք հանդիսավոր կերպով հնչեց 1839 թվականի նոյեմբերի 8-ին Պոլսի Գյուլ-Հանեի գլյակից:

Թաղիադյանի՝ Պոլսում եղած ժամանակ այդ օրենքի հրապարակման հեռանկարն առանձին աշխուժություն էր առաջ բերել Թյուրքահայատակ ազգերի, զբաղեց թվում և հայ դեմոկրատական խավերի մեջ:

Հայ արհեստավորներն ու առևտրականները, որ մի ժամանակ իշխում էին ներքին շուկայում, սկսում են տեղի ապրիկուրական գործարանային էժան արտադրանքի առջև: Տնտեսական քայքայումը նսեմացնում է նաև նրանց դիրքը հայ հասարակական կյանքում:

Էստաֆության և մանր առևտրականության քայքայման գործում առանձին դեր են կատարում հայ ամիրաները:

¹ Գուգուենջուկի համալսարանների մասին մենք տեղեկություններ ունենք Մրմրյանից. «Էին առնները,—գրում է նա Տերոյինցի կապակցությամբ,—այսպիսի զիտուն անձնավորություններ սովորություն ունենին առանձին հարկերու մեջ դասախոսելու, անոնց, որ կրանասիրին այն ձև դասախոսությունները, տեսակ մը փոքրիկ արեւիյան համալսարաններ էին, որոնց նախկին օրինակը աված է 17-րդ դարի կեսերից...»:

Ֆինանսական կախման մեջ դնելով կառավարութեանը, հայ ամիրաները իրավունք են ստանում տնօրինելու հարկատվութիւնը երկրում: Կառավարութեանը տված անվերջանալի պարտքերը մարելու համար, նրանք բազմատեսակ հարկեր են սահմանում, ավելի խորացնելով տնտեսական քայքայումը ժողովրդական լայն խավերի ներսում:

Ամիրաների լուծը հայ աշխատավորութեան վրա կրկնակի էր: Իրենց ձեռքը վերցնելով հայ հասարակական-քաղաքական կյանքի ղեկավարութիւնը, նրանք աշխատում էին չեղոքացնել էսնաֆների ունեցած հասարակական ազդեցութիւնը:

Երեսնական թվականների վերջին ամիրաների մեջ հատկապես առանձին դեր և իշխանութիւն ունեին Սերվերյան և Պալյան ամիրաները: 1838 թվականի աշնանը բացվեց նրանց նախաձեռնութեամբ կազմակերպված Ոսկյուտարի ճեմարանը:

էսնաֆների բողոքն իրենց մասնակից անելու դաւրոցական ղեկավարմանը անտեսվեց նրանց կողմից: Էսնաֆները հրապարակորին հրաժարվեցին իրենց երեսնաներին ուղարկել այդ զբաղումը: Տրտունջներն ու բողոքները ստացան ընդհանուր բնույթ: Սերվերյան-Պալյան ամիրաները, օգտվելով իրենց ունեցած արտոնութիւններից, դիմեցին ռեպրեսիվ միջոցների. դպրոցի շուրջը ծափալված պաշքարը խորանալով հասավ մինչև 1861 թվականի էսնաֆների հայտնի ցույցը Բարձրագույն դռան և ամբարշտութեան դեմ:

Մ. Թաղիադյանը ներկա է եղել Ոսկյուտարի ճեմարանի բացմանը, ոգևորվել և նույնիսկ ոտանավոր է ձոնել նրա հիմնադիրներին:

Ապրելով Սերվերյանների տանը, հետաքայլում նա ականատես է եղել տեղի ունեցող անցքերին: Հովհաննես Մկրչյանի հոր վկայութեամբ Թաղիադյանն աչքի է ընկել Պոլսի հայ մտավորական շրջաններում իր «պատրաստաբանութեամբ» և բոլոր դեպքերի հանդեպ ցուցաբերված բուռն հետաքրքրութեամբ: Դրանից երևում է, որ Թաղիադյանը պետք է որ ակտիվ կերպով արձագանքած լիներ իր շուրջը կատարվող դեպքերին: Այս ենթադրութիւնը ճշտվում է նաև նրանով, որ 1838 թվականի փետրվարին Թաղիադյանը գժտվում է Սերվերյան ամիրայի հետ և հեռանում նրա տանից: Մնալով միայն «Դուզգունջուկի

համալսարանում» որպէս դասախոս, երկու ամիս անց, նա ստիպւ-
աւած է լինում նույնիսկ թողնել Պոլիսը՝ «ցմահ» բանտարկու-
թյան վտանգից ազատվելու համար:

Ինչպէս հայտնի է, այդ տարիներին ժանապանդ պոլսահա-
յերի մեջ զարգանում է բողոքական շարժումը. բազմաթիվ մի-
սիոններն ու դաւիա էին արեւմուտքից և լուսավորության տարած-
ման քողի տակ ուժեղացնում եվրոպական պետութիւնների ազ-
դեցութիւնը երկրի ներսում: 1838 թվականին Պոլիս է դաւիա
միսիոներական շարժման պարագլուխներից մեկը՝ Կյուրոս Համ-
լինը: Պոլսում հիմնվում է բողոքական բարձրագույն դպրոց
«Ռարբա կոլեջ» անունով: Դրա հետ մեկտեղ կաղմակերպվում են
նաև զիշերօթիկ դպրոցներ, որտեղ միսիոններն ընդլայնում են
նպաստավոր պայմաններով աշխատում են ընդգրկել չքավոր
երեխաներին բողոքական սերունդ դաստիարակելու համար:

1839 թվականի սկզբներին, երբ խորանում են ամիրաների
և էսնաֆների հակասութիւնները, Ուսկյուտարի ձեւաբանում
նկատվում է ուժեղ ժաղում: Էսնաֆներից եղան մարդիկ, որոնք
իրենց դայուլթի արտահայտեցին նրանով, որ իրենց երեխա-
ներին հանցին ձեւաբանից և ուղարկեցին բողոքական դպրոց:

Սա բավական էր, որ Սերվերյան և Պալյան ամիրաները
մեծ հաւածանք սկսեին էսնաֆների դեմ: Հաւածանք է սկսվում
նաև պատրիարքարանի դեմ, որովհետև Ստեփաննոս Աղափի
պատրիարքը մեծ ժողովրդայնութիւն էր վայելում Պոլսի էս-
նաֆների լայն զանգվածների մեջ:

Սերվերյան և Պալյան ամիրաներին անհրաժեշտ էր այն-
պիսի պատրիարք, որ կատարեր նրանց բոլոր պահանջները: Նրանց
անձնական պատասխանատվութեամբ փետրվարի վերջին Ստե-
փաննոս Աղափին ազատվում է պատրիարքի պարտականու-
թիւնից և պատրիարք է դառնում Մարզվանի և Ամասիայի
առաջնորդ Հակոբ Սերոբյանը:

Մարտի երկրորդ կեսից սկսվում են հաշվհարդարի ծանր
օրերը. կասկածանքի տակ են առնվում ոչ միայն բողոքական,
այլ և ոչ բողոքական քաղաքացիները, գլխավորապէս նրանք,
ովքեր դժգոհ էին ամիրաններից. հաւածվում և բանտարկվում են
հայտնի դեմքեր, որոնց թվում Պողոս վարժապետ Պետրոսյանը
(Ֆիզիկոս), Միսրոպ Թադեոսյանը և ուրիշները:

Այս բռնատարիության մասին Այվազյանն իր «Շար հայ կեանսագրութեանց»-ի մեջ «Քիթապչի Մարգարին» նվիրված գլխում գրում է.

«Այս շրջիկ գրավաճառներուն կարգն չմփ կրնար դասել՝ քաջ հայադետ և հեղինակներն, անգլիկներն, լատիններն և պարսկերենի հմուտ՝ սրբոյ էջմիածնի սարկավազ՝ Կարբեցի Մեսրոպ Դ. Թադիադյանց, որ 1838-ին մայիսի մեջ ի Պոլիս եկած է եւրոպական տարադով և պարսկական գտնելով և նախ Զյուլպուլիքանը օթեկանած. հետո ի Գուլգուշուճուկ՝ արքունի ճարտարապետ, կեսարացի Սերվերյան Հովհաննես ամիրայի պաշտպանությամբն յոթն ամսոյ չափ վարժապետութուն ըրած է նորին պայադատաց և այլոց, վսեմաւիայլ Ասլանյան փաշայի ծախած տան մեջ, գիշերներն հիշյալ ամիրային տունը հյուրընկալվելով: Մական նույն տոնն հարուցված կրօնական տարապարտ կասկածները տարածվելով նաև դիտնական սարկավազին վրա, իսկույն պաշտոնէն կհրաժարեցուցվի: Այնուհետև Թադիադյանց, խիստ կարոտ մնալով կստիպվի օրապահիկ մը յանձանձեղու համար՝ շրջիկ գրավաճառությամբ զբաղիլ, Աստվածաշունչ ծախելով, միանգամայն Ամերիկացի դոկտոր Կյուրոս Համլինի Հայերէն ուսուցանելով»¹

Այվազյանի շարադրած փաստերը ցույց են տալիս, որ Թադիադյանը ենթարկվել է կասկածանքի կրօնական հոգի վրա և հեռացվել նաև Գուլգուշուճուկի «համալսարաններից»: Հովհ. Մկրչյան քահանայի բերած փաստերից ավելի հանգամանորեն է պարզվում իրողութունը: Հակոբ պատրիարքը Սերվերյան ամիրայի զրդումով ուղարկում է իր «ձեռնասուններից» Հովհաննես անունով մի վարդապետի, հետևելու Թադիադյանի դատախոսութուններին: Դրա հետևանքը լինում է այն, որ երևան են բերվում «բողոքական» մտքեր. այստեղ կրկնվում է այն, ինչ պատահեց նրա հետ էջմիածնում: Լուսավորական դադափարներով տագործված, լայն հայացքների տեր հասարակական գործիչը զոհ է դառնում կղերական դասի և իշխանութուն ունեցող հարուստների կամայականութուններին և դավերին:

Հայկական միջավայրում որևէ աշխատանք գտնելուց հույ-

¹ Այվազյան—«Շար հայ կենսագրութեանց», 1893 թ., հ. 11, էջ 9—10»

ալ կտրած, Թաղիադյանը դիմում է վճռական քայլի. հենվելով իր օտար հպատակության վրա, նա դիմում է հենյ նրանց, որոնց անունով նրան ենթարկում են հալածանքի, այսինքն բողոքականներին՝ նրանց ղեկավար Կ. Համլինին: Մեզ հասել է իրեն՝ Համլինի թողած տեղեկությունները Թաղիադյանի հետ ունեցած հանդիպման մասին. պարզվում է, որ հայ գիտնականը մեծ տպավորություն է թողել նրա վրա որպես բազմակողմանի զարգացած հայ լուսավորչական: Թաղիադյանն իր հերթին Համլինի միջ պիտի է հուսալի մի հենարան, որի միջոցով նա կարող էր ազատվել իր աղգակիրների հալածանքներից և հայթայթել իր օրվա ապրուստը: Համլինի տեղեկություններով հուսահատ Թաղիադյանը համաձայնում է հասարակ պրավաճառի պաշտոնին: Սակայն բողոքականների զրավաճառատանը սկսած նրա ծառայությունը տևում է շատ կարճ:

Ապրիլի վերջին, դեռերով նրա մոտ է գալիս հեղեցու բաբայանը և կանչում պատրիարքարան: Թաղիադյանը ներկայանում է նոր պատրիարքին: Զերմ, հյուրասեր ընդունելություն ցույց տալով, պատրիարքը ազատ է արձակում նրան և քիչ անց հեղեցու, աղոթքի ժամին անսպասելի բանտարկել տալիս: Մի գիշեր ֆալով պատրիարքի նկուղում, Թաղիադյանին հաջողվում է մյուս օրն իր բարեկամների միջնորդությամբ ազատվել կալանքից և անմիջապես թողնել Պոլիսը:

1839 թվի մայիսի 16-ին Անդրեաս Ուսպելյանին գրած իր նամակում Թաղիադյանը պատմում է իր բանտարկության մանրամասնությունները, որից պարզվում է, որ Սերվերյան ամիրան պատրիարքի հետ միասին կալմակերպել են Թաղիադյանի բանտարկության գործը, բողոքական մտքեր քարոզելու պատժվակով. հետո, երբ անհաջողության են մատնվել կաշառել են ուսաց դեսպանատան աշխատողներին, որպեսզի Թաղիադյանին հետևեն որպես ուսահպատակի և Տրապիզոն հասնելուն պես բանտարկեն, Սիբիր աքսորելու համար: Նախօրոք իմանալով այդ մասին, Թաղիադյանը ծպտվում է նավում և բարեհաջող հասնում Տրապիզոն, հասնելուն պես նա ներկայանում է պարսից զեսպանին, ցույց է տալիս Պարսից արքայորդու ձեռագիրը, որի դասատուն էր եղել Թավրիզում եղած ժամանակ, և խընդրում անցագիր, էրզրումի վրայով Պարսկաստան գնալու համար:

Թաղիադյանին Պոլսում հալածելու հանդամանքը տարբեր մեկնաբանություններ է գտել շահագրգռված կողմերի մոտ։ Խոսքը վերաբերում է Պոլսի «Բիւրակն» ամստարանական թերթի 1832 թվականին տպագրված մի հոդվածին՝ «Ծագումն և ընթացք աւետարականութեան ի Պօլիս»։ Հանդամանորեն շարադրելով ամստարանականների գործունեությունը հայերի մեջ, թերթն առանձին պիտու թաղիադյանի մասին գրում է հետևյալը.

«Հայն ժամ Մեսրոպ Թաղիադյանց լսելով դայն շարժում և ուրախանալով, որ ի Թյուրքիա իր ազգակիցներեն ոմանք, վասն ամստարանի և վասն բարեկարգության կը տառապին և կհաշածվին, կուգա Կ. Պոլիս սուլյն շարժման մեջ ինքն ալ կարեւոր դեր մը կատարելու մտոք...»¹

Մեր կողմից շարադրված փաստերն ինքստինքյան հերքում են «Բիւրակն»-ի ենթադրությունը, սակայն, «Բիւրակն»-ը շարունակում է իր հերյուրանքները, հայտարարելով թե Թաղիադյանը Պոլսից գնացել է Ռուսահայաստան և դարձել է ամստարանական թերթի խմբագիր։ «Բիւրակն»-ի այդ տեղեկությունները Թաղիադյանի օրագրից բերած համապատասխան փաստերով նույն թերթի միջոցով հերքել է Հովհաննես Մկրչյանը, միանդամայն ժխտելով Թաղիադյանի շուրջը եղած բոլոր կասկածանքները բողոքականության վերաբերյալ։²

Թաղիադյանը Պոլիսը թողնում է 1839 թվականի մայիսի 11-ին (հ. տ.), այդ օրը Եգիպտոսի փոխարքա, բայց նրա փաստական տեր, Մահմեդ Ալի Փաշայի զորքերը մտել էին արդեն Թյուրքական սահմանները. Թյուրքիան պատերազմական դրության մեջ էր, հրք պարսկական անցագիրը ձեռքին Թաղիադյանը շտապում էր Պարսկաստան, այնտեղից Հնդկաստան գնալու համար։ Ամենուրեք ստեղծված արգելքները նրան հնարավորություն չեն տալիս շարունակել իր ճանապարհը, Մեծ դժվարություններով և ենթարկվելով բազմաթիվ պատահարների, կարիների, Դերջանի, Ակնի, Արաբկիրի վրայով կտրելով պատմական Ծոփքը և Աղձնիքը, նա անցնում է Մծբին, Բաղդադ, ապա

¹ «Բիւրակն», 1832 թ., էջ 265:

² Նույն տեղ, էջ 297—304:

Բասրա, այնտեղից Հնդկաստան: Իր արկածալի ճանապարհորդությունից «Աղգասէր»-ի էջերում Թաղիադյանը պատմում է հետաքրքիր էպիզոդներ, ինչպես զերի ընկնելը արաբների ձեռքը և այլն, որոնք զրահորում են ամեն տեսակի զօվարություններ հաղթահարելու նրա անսահման համբերատարությունը, դարձանալի եռանդն ու կորույր:

1839 թվականի գեկտեմբերի վերջին Թաղիադյանը հասնում է Հնդկաստան: Առաջին ամիսները նա հյուրընկալվում է հնդկահայ հայտնի հարուստ Հ. Արզարյանի կողմից, իսկ հետո նորից մնում տնօրհան: «Աղգասէր»-ում տպագրած իր օրագրերից մեկից երևում է, որ նա այդ օրերին դադարել է նույնիսկ ձկնորսությամբ զոյւթյունը պահպանելու համար: Մի օր, երբ նա դատարկ ուռկանով իր ընկերակից Բարսեղի հետ դուրս է գալիս գետով՝ կուլի Բաղարի կողմերը, գեղերում աննպատակ, մտածելով թի ինչպես հագեցնի իր քաղցը, նրա մեջ կուտակվում են դառն խոհեր, կյանքի և մարդու ճակատագրի մասին:

«Թե տասն տարի էլ կուլի Բաղարում խարխալ դցած մնայի, կարծումաս ոչում փոխյթ էր: Ո՛չ ծնողը ունեի և ոչ սերելի կին, որ աչքներն իմ ճանապարհիս մեկը, իսկ ժամանակիս բարեկամություն էլ աստված բարաքաթ տա, որ միայն երեսահանց ա...»

Եթե մարդ փող ունենա՝ ուր որ գնա յուր համար ընտանիք պահապան. թող դպրոտն, աղիքներն ևս կերկարացանեն, որ գուցե՝ իրար հասնի, և սիրելի ընտանի դառնան միմյանց. բայց եթե փող չունենա, վաճ յուր խեղճ զլիխն, քան զմեր տերն խեղճ՝ կմնա, որո բարեկամք և մերձավորք հուր եղեն՝ ի նմանէ, օտարացան և եղբարք նորա: Թող անփող մարդն հեղ լինի և խոնարհ. կասեն էն էջն ես ասում, որ բերանխուփ նշատած ա մնում մին տեղ՝ առանց խոսելու թող՝ ճարտար լինի և բանիբուն, կասեն էն գլխն ես ասում, որ քամի ա կուլ տալման և խոսալով մարդ ա զզվաքնում: Թող յուրն մոռանա և միայն հայրենյացն ծառայի, կասեն, իհարկէ էջն որ կա ստեղծվելա, որ հարսանիքի ջուր կրի, ինչ պարծանք յուրն: Թող ալթմ լավ կիրակի անցկացանող սրբադաններն գան, տեսնենք, իր մտածողությունը՝ են, որ մարդիս աշխարհքիցս հեռացրած Աստուծո կմոտացանեն: Ասեն, երբ մարդն աշխարհ չունենա, որ յուրն

զբաղացանի, հարկելով պիտի մինն դտնի, որ նորանով զմայլի՞ն¹ նույն տեղում Թաղիադյանը պատմում է, թե ինչպես մյուս օրը նա որոշում է այցելել Աբգարյաններին. այնտեղ նա պատահաբար հանդիպում է նրանց որդու տոնական հանդեսին. նստած պատմաբան հյուրերի հետ, նրանցից շատ և շատ բարձր, բայց քաղցր մատնված գիտնականը մտածում է, թե ինչպես վայելի սեղանի բարիքները, որպեսզի չմատնի իր սարսափելի քաղցը:

«... Ամեն ծաղատակի պատառն կուշ տալման, երեսս զարձնում ի դեպ առ Թունիկն. խալիսը կարծում ին, թե շատ սիրելուցս էր, բայց աղբորն էս ա, որ թիքեքս շատ մեծ դոյով երեսս զարձնում ի, որ մյուսանին չտեսնին, թե ամեն կուշտալման ուժիցն աչքիցս արտասուք էր կաթում»²:

Թաղիադյանի բազմաթափառ և տառապանքներով լի կյանքի էջերը լի են նման ծանր հուսահատական ապրումներով: 1840 թվականի գարնանը Թաղիադյանը նորից մտնում է Կալկաթայի Եպիսկոպոսական ճեմարանը, այս անգամ տպարանում որպես զբաղար:

Մոռացության տված իր տառապանքները, անհոգ իր ներկա խղճուկ վիճակին, Թաղիադյանը նորից տողորվում է լուսավորական գաղափարներով: Օգտագործելով տպարանի հետքավորությունները, նրա առաջին գործն է լինում տպագրել իր մանկավարժական տարիների փորձը զրոհորող «Մեսրոպեան աշրքեմարանը» և «Մեսրոպեան շարադրիչը»: Դրանց հետևում է «Հնդկաստանի պատմություն» եռահատոր ուսումնասիրության առաջին մասը իր մեկենասի՝ Հ. Աբգարյանի նկարով և նրան ուղղված ընծայականով:

Բացի իր գրքերի հրատարակումից, Թաղիադյանը մշակել էր հրատարակչական ավելի լայն ծրագիր: Մեկ հասել է նրա գրած երկու համակները Ստեփան Ուսպելյանին և Ներսես Ստեփանյանին, որտեղ նա մանրամասն շարադրել է իր մտադրությունները, այն է հավաքել հայաբնակ բոլոր վայրերի պատմական արժեք ունեցող հնագույն ձեռագրերը, կազմել հրատարակչական ընկերություն, ազգի շահագրգռված անդամների օգնությամբ, զարկ տալ դրական նորագույն շարժմանը, օգնելու

¹ «Ազգասեր», 1847, էջ 151:

² Նույն տեղ, էջ 152:

Քրիտասարդությանը համարձակ էերպով դրական ասպարեզ
գութնս դալու համար:

«Տասնութ հատոր դրվածքների միայն,—գրում է նա Ուո-
պելյանին,—իմ կողմից կան շարադրված պատրաստ տպագրու-
թյան համար և կարոտ են ազգասերների օժանդակության. եթե
շնորհ անեք դոնե մի փոքր օգնել ինձ, ուրեմն ես կնվիրեմ
իմ ամբողջ կյանքը ադախ օգտին, կաշխատեմ առանց աշխարհիկ
շահի ակնկալության»:¹

Սակայն հայ լուսավորականների ճակատագիրն այդ ժա-
մանակներում այնպես չէր սահմանված, որ նրանց բուռն ցան-
կություններն իրականություն դառնային:

Սպասվող նյութական օժանդակությունը չի հասնում Թա-
ղիադյանին: Փաշայվաժ, ծրագրերը տապալվում են կրկին. ընդ-
հանուր հուսահատությանն ավելանում է նրա հիվանդությունը—
տենդր:

1842 թվականին Թաղիադյանը որոշում է թողնել տպա-
րանը, հեռանալ Կալկաթայից դեպի Հնդկաստանի խորքերը:

Երկրորդ անգամ ամուսնանալով, նա սկսում է թափառա-
շրջիկ կյանք վարել, զբաղվել նույնիսկ փերեզակությամբ: Սա-
կայն նրան վիճակված չէր և առևտրականի բախար: Երկու տարի
թափառելով Գանգեսի ափերին, նա կորցնում է իր ամբողջ
զբաղակալը և սնանկացած վերադառնում նորից Կալկաթա:

Հետագայում իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքի
առաջաբանում հիշելով այդ օրերը, նա գրում է դառնությամբ.

«Ե ուր պիտեկան և է ուր անպիտան վտարանգեալ ուր ի
բեմբ, և ուր ի բանդ, ելի առանց վրէժխնդրութեան և խոյս էտու
ի Հնդկիս վերստին: Ուրանօր մերթ դրաշար տպարանի, մերթ
պատմաբան Հնդկաստանի, մերթ փերեզակ յերկրամիջի և մերթ
հիւանդ գետնախշտի, դաժա հինգ անդադար աշխատեցայ. այլ
շահեցայ և ոչինչ՝ մինչև եկաց Արարատեան Ընկերութիւն,
սպաս հարկանել Ազգին գրագիտութեան: Ուրոց ի ծառայել իմում,
ծառայից ազգին ծառայելով՝ դանձն երջանիկ համարիմ զարդիս
և բուն նպատակին հասեալ»:²

¹ Հ. Մ. Կրեան—«Կենսագրութիւն Մ. Գ. Թաղիադեան», էջ 116:

² «Ճանապարհ. ի Հայս»—Առաջաբան. էջ 4:

1845 թվականին հնդկահայ աչքի ընկնող վաճառականներից Մանուկ Զորարյանը հավաքելով իր շուրջը գրասեր առևտրականներին և աչքի ընկնող մի քանի մտավորականների, կալվածքադաքում հիմնում է «Արարատյան ընկերությունը»: Ընկերությունը հրապարակած հայտարարությունից պարզվում է, որ նա նախատակ ուներ պրոպագանդա անել հնդկահայ առևտրականների մեջ ազգային ոգին պահպանելու, հայրենի հողի հետ կապվելու և ազգային նորաստեղծ բուրժուազիայի քաղաքական ձգտումներին հաղորդակից անելու օգտին: Ընկերությունն իր առջև խնդիր էր դնում թերթի և գրականության միջոցով պայքար ծավալել տգիտություն, նախապաշարունակների դեմ, տարածել լուսավորություն, եվրոպական քաղաքակրթություն հետ:

Ընկերության աշխատանքներին գործնական գեղավարություն և զազափարական ուղղություն ցույց տալու նպատակով հրավիրվում է իր գիտելիքներով և լուսավորական ձգտումներով հայտնի դարձած Մ. Թադիադյանը: Լուսավորության ասպարեզը թողած մանրավաճառությունում իր գոյությունը պահպանող հասարակական գործչի համար անսպասելի կերպով բացվում է նոր ասպարեզ. բաղմամբիվ փորձություններից և տառապանքներից հետո նա իր ձեռքն է առնում հնդկահայ օջախի քաղաքական կյանքի կազմակերպման գործը:

1845 թ. օգոստոսի 16-ին ընկերությունը հրատարակությունում և իրեն թադիադյանի խմբագրությունում լույս է տեսնում մի թերթ հետևյալ վերնագրով— «Ազգասեր»— «Օրագիր Արարատյան ընկերության, քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելիքների»: Թերթի ձևկառուցված զարգացում էր Արարատյան ընկերության խորհրդանշանը՝ Մասիս սարը՝ զազաթին Նոյի տապանը, ստորոտում բացված մի գիրք հետևյալ մակագրությունում: «Ուսումն առնէ զմարդն երջանիկ»:

«Արարատյան ընկերությունը» իր գոյությունը պահպանեց մոտ երեք տարի: Ընկերության հիմնադիր Մ. Զորարյանի մահը զրկեց նրան նյութական օժանդակությունից: Մյուս անդամները ևս դադարեցրին իրենց օգնությունը, ընկերությունը քայքայվեց:

վեց, հրապարակի վրա մնաց Մ. Թաղիադյանը, ընկերությունից մնացած աղաքանով և «Ազգասէր» թերթով:

Կարճ ընդմիջումից հետո, նույն թվականի սեպտեմբերի 16-ին Թաղիադյանը իր սեփական միջոցներով հրատարակում է իր նոր թերթը «Ազգասէր Արարատեան» վերնագրով, և նոր մոտ-տոյով. «Մաքուր խղճմտանքն առնէ զմարդն հրջանիկ»:

«Ինչպես Մասիս սարը բարձրանալը հեշտ բան չէ, ըստ վկայության Հակոբ Մծբինացի վարդապետի, բայագեւոցի Իբրահիմ փաշայի, գերմանացի իմաստասեր Պարրոտի,—գրում է Թաղիադյանը թերթի առաջին տողերում,—այնպես էլ հեշտ բան չէ հանդգնություն ունենալ և շարունակել խափանված ընկերության օրագրությունը»:¹

Թաղիադյանն իր առջև խնդիր էր դրել հաղթահարել բոլոր խոչընդոտները, ճանապարհ բացել դեպի իր նպատակների իրագործումը:

Անսպառ եռանդի, քաղաքական-լուսավորական պրոպագանդայի և կուլտուրական լայն ձեռնարկներից ու էրուդիցիայի լավագույն արտահայտությունն են հանդիսանում Թաղիադյանի խմբագրած թերթերը:

Իրենից առաջ և իր ժամանակին հնդկահայ թերթերի մեջ նրա թերթն առաջինն էր, որ դուրս եկավ սահմանափակ պահանջներից, տնտեսական նեղ հարցերի քննարկումից և կապվեց ընդհանուր հայության մեջ սկիզբ առնող ազգային լուսավորական շարժման հետ:

«Խեղճ Թաղիադյանը»—գրել է 1858 թվականին «Հիւսիսափայլ»-ի էջերում մեծ լուսավորիչ Մ. Նալբանդյանը,—խաղաղություն քո հոգուն, չարչարվեցար ազգի լուսավորության համար, բայց չհաջողեցավ քեզ, որպես և շատերին, տեսանել քո մարդարեական ազդու քարոզությամբ պտղաբերությունը մեր ազգի մեջ»:²

Ինչպիսիք էր պայմանավորված 40-ական թվականների այդ շարժումը. քաղաքական-լուսավորական լինչ խնդիրներ է դրել Թաղիադյանը, որոնք իրենց հետագա զարգացումը գտան ազ-

¹ «Ազգասէր Արարատեան», 1848 թ., էջ 1:

² Մ. Նալբանդյան—Երկերի լիակատար ժողովածու, 1940, հ. 1, էջ 267:

գային-լուսավորական շարժման մեջ, որոնք էին նրա աշխարհայացքի թերութիւնները:

19-րդ դարի սկզբներից հայ գաղութներում և բնաշխարհում տեղի էին ունենում արմատական փոփոխութիւններ. չդիմանալով եվրոպական հզոր մագնատների մրցմանը, երբեմնի տիրապետող դիրքեր զրաւած հնդկահայ խոշոր առևտրականութիւնը հետզհետե դիջում էր իր դիրքերը: Ընծւում եվրոպական առևտրական ֆիրմաների մեջ, իր ուժը այնտեղ պահպանելու համար: Տնտեսապես ավելի նվազ շերտերը կորցնում էին իրենց դիրքերը, միջոցներ որոնում ազատելու օրհասական կործանութից: Այդ միջոցներից մեկը հանդիսանում էր նրանց ձգտումը հայրենիքում տնտեսական բազա ստեղծելու, իրենց կապիտալներն աճեցնելու համար: Դա ավելի խորացավ, երբ Հայաստանի մի մասն անցավ Ռուսաստանին: Հնդկահայ օջախն այդ շրջանում ապրեց որոշ աշխուժացում:

1844 թվականին «Բաղմավէպ»-ում լույս է տեսնում հընդհանայ աչքի ընկնող մտավորականներից մեկի, հետագայում «Արարատյան ընկերութեան» անդամ Թադեոս Խան Ավետուսյանի հոդւածը «Ազգային առաջադիմութեան» վերնագրով: Այնտեղ հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի քայքայված վիճակը, որն ըստ նրա՝ առաջ էր եկել դարավոր ստրկութեանից, անմիաբանութեանից և տգիտութեանից: Հեղինակն իրաւապահանջում է պատմական անցյալը, և նրանից հասած տրագիգիաների վրա դարգացնում իր առաջադրած խնդիրները, հայրենասիրութեան, լուսավորութեան, միաբանութեան, խնդիրներ, որոնց իրականացումը կարող է վերականգնել անցած երջանկութեանը:

Ավետուսյանը 40-ական թվականներին առաջին մտավորականներից էր, որ առաջ էր քաշում արևմտահայ մանր արտադրողների տնտեսական քայքայման հարցերը, դրանով դրսեւորում ազգային նորածագ բուրժուազիայի դեռևս չձևավորված ձգտումները, այն է՝ կանխել այդ քայքայման պրոցեսը, երկրի տնտեսական բազայի վրա ստեղծելով առևտրական հիմնարկութեաններ, զարգացնելով ազգային առևտրական կապիտալը:

1845 թվականի «Ազգասէր»-ի էջերում Թադեոս Խան Ավետուսյանի հոդւածը, դրանով տատաղում է Թադեոս Խան Ավետուսյանի հոգւածը, դրանով

սկիզբը դնելով թերթում առանձին տեղ դառն հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական հարցերի արծարծմանը:

Դեռևս 1828 թվ. երևանցիներին գրած իր պատմական նամակի մեջ, ինչպես տեսանք, Թաղիադյանը շոշափում էր հայ ժողովրդի լուսավորության, նրա քաղաքական զարգացման խնդիրները: 18-րդ դարի վերջին, հնդկահայ առաջավոր գործիչների օրինակով Թաղիադյանը հայ ժողովրդի պատմական զարգացման ճանապարհը տեսնում էր Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու մեջ: Թաղիադյանի ուսման տիպան՝ Ռուսական իշխանության սահմաններում հայությանը տեսնել ոչ միայն ֆիզիկապես այլև տնտեսապես ապահով, լուսավորված, ուներ իր պատմական որոշ արդարացումը, տախկան դարավոր անշարժության մեջ հայ ժողովուրդը ի վիճակի չէր համախմբել իր ուժերը, կադմակերպվել քաղաքականապես, լուսավորական նոր ուղիներ հարթելու համար: Ռուսական պետության թյուրումը իր կադմակերպվածության մասին տարբերվում էր ասիական ֆեոդալական առարկիկ պետություններից; դա չարիքներից փոքրագույնն էր հայ ժողովրդի պատմական զարգացման համար: Հետագա տարիներին խորանալով եվրոպական լուսավորական գաղափարներին մեջ, միևնույն ժամանակ ակնառիկ լինելով թուրքական, պարսկական ֆեոդալիզմի բռնություններին, Թաղիադյանը ծառանում է ֆեոդալական սխտեմի դեմ, քննադատելով նաև Ռուսական ֆեոդալիզմը: Թաղիադյանի այս քննադատությունը արդասիք էր 40-ական թվականներին սկսած հասարակական խմորումների և շարժման, որի առջևից ընթանում էին ձևավորվող հայ ազգային բուրժուազիայի առաջավոր շերտերը: Այս երևույթները կապվում էին բնաշխարհում ֆեոդալական կապանքների թուլացման և նոր պայմաններում ազգային առևտրական կապիտալի զարգացման հեռանկարներին հետ:

Թաղիադյանն առաջինն է եղել իր հայ ժամանակակիցներին մեջ, որ լրջորեն անդրադարձել է ֆեոդալական արևելյան բռնակալական կարգերում ապրող ժողովուրդների տնտեսական քայքայման հարցերին: Նկարագրելով 20-ական թվականների դուրդացու տնտեսությունը, նա ցույց է տվել, թե ինչպես բազմատեսակ հարկերը, խանական բռնությունները քայքայել են գյուղացուն, ենթարկել նրան անսահման զրկանքների:

«Վասն զի Հուսերին խան բդեաշխն Երեանայ, որպէս ամե-
նայն գիւղօրէից աշխարհին նոյնպէս և բաժանորդ լինէր ամե-
նայն հերիոց: Տայր իւրաքանչիւր տան լուծն մի եզանց և սիր-
մանիս, կորիզոյ բաժակի և այլևս շահաբեր արդիանց և արգա-
սեաց: Յանեին նոքա և ի ժամանակի հնձոցն առաքէր նախ ընդ
մէջ կիսէր զկալ նոցա ի բաժին ապա մնացորդացն հատանէր և
զհասն արքունի, մինչև զի, չմնայ ինչ նոցա և ծախուցն բաւա-
կան: Եթէ դեպ լինէր կրեմն կրկնառաք պատուհասիւք ստեր-
ջանալ անգործից և զլանար ի բերան, սա զմնասն զանցառութե-
ամբք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խրժ-
դեժութեամբ առնոյր զբաւել իւր զոր ինչ ի տունս և նոցա
գտաներ զկահս և զկարասիս և ի պակասիչ նոցուն զկանայս և
զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում: Նա շատ
և այն էր զի գերակեալ յայսցանէ դանիւք, ծնուցաներ իւր ոսկիս
և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արեւն յարբուսն իւր,
աշխարհն համորեն կեղեքանօքն մաշէր և քրտամբք նոցա կեր-
տէր իւր դաստակերտս ի Ղազարին ճոխացուցանէր զգանձն»¹

Վ. Ի. Լենինը «Որ ժառանգությունից ենք հրաժարվում
մենք» հոդվածում, քննադատելով Միխայլովսկու բռնած դիրքը
«Ռուսական աշակերտների» վերաբերյալ ասում էր, որ Միխայ-
լովսկին մեղադրում էր նրանց ռուսական հասարակության ա-
ռաջավոր մասի լավագույն արտգիւցիւններից կտրվելու, դեմո-
կրատական թիւը նրանց կողմից խզելու վտանգի մեջ: Յույց
տալու համար նրա սխալ և ֆրասակաւ տենդենցը, Լենինը կանգ
է առնում Սիլվիինի հրապարակախոսական մի շարք հոդվածնե-
րի վրա, ցույց տալով այն պրոգրեսիվը և դրականը, որ ընդուն-
վում և յուրացվում էր ռուսական աշակերտների կողմից, հակա-
ռակ Միխայլովսկու կարծիքների:

Լենինը այդ կապակցութեամբ շարադրում է 40—60-ական
թվականների լուսավորիչների հայացքները: Մեր իրականութեան
առանձնահատուկ պայմանների մեջ այդ հայացքների մի շարք
կարեւոր մոմենտները երևում են և Թադէադյանի լուսավորական
գործունեութեան մեջ:

«Ձի կարելի մոռանալ, որ այն ժամանակ, երբ գրում էին
18-րդ դարի լուսավորիչները (որոնց բուրժուազիայի առաջնորդ-

¹ «Ճանապարհորդութիւն ի Հայս», 1847 թ., էջ 226 և 227.

ների շարքն է դասում ընդհանուրից ճանաչված կարծիքը), երբ
գրում էին, մեր լուսավորիչները 40-ական թվականներից մինչև
50-ական թվականները, հասարակական բալար: հարցերը հանգում
էին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների դեմ
մղվող պայքարին: Հասարակական-տնտեսական նոր հարաբերու-
թյունները և նրանց հակասություններն այն ժամանակ դեռ
սաղմնային վիճակում էին: Ուստի և այն ժամանակ բուրժուա-
դեմոկրատների մեջ ոչ մի շահախնդրություն չէր գրսևոր-
վում: Ընդհակառակը, թե՛ Արևմուտքում և թե՛ Ռուսաստանում
նրանք միանգամայն անկեղծորեն հայտնում էին ընդհանուր
բարօրության և անկեղծորեն ցանկանում էին այն, անկեղ-
ծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակա-
սություններ այն կարգի մեջ, որ ճորտատիրականից էր աճում:¹

Հայ իրականության մեջ ֆեոդալական սխառմի տա-
րբեր առաիճանների ներքո (թյուրքական անարխիան, ու-
սական բյուրոկրատիան) հայ ժողովրդի պատմական զարգացման
տենդենցների մեջ ընկալելով նորը, նրա միասնության, ամբող-
ջականանալու տենդենցը, Թաղիադյանն զգում էր ճորտատիրա-
կան կարգերի բացասական դերը հասարակական նոր ուժերի
զարգացման, նրա իդեալների իրականացման համար:

«Երկրորդ բնորոշ գիծը,—գրում է Լենինը,—որ ուսական
բոլոր լուսավորիչների համար ընդհանուր է,—լուսավորության,
ինքնավարության, ազատության, կյանքի եվրոպական ձևերի և
առհասարակ Ռուսաստանի բազմակողմանի եվրոպականացման
եռանդագին պաշտպանությունն է»:² Հիշվի, Թաղիադյանի մոտ
ևս այս մոմենտը դառնում է հիմնական հարցերից մեկը, որի
մեջ նա երևան է բերում 18-րդ դարի լուսավորիչներից իր կրած
ազդեցությունները: Թաղիադյանի համար ամենակարևոր հարցը
ճորտատիրական կարգերի քննադատության հետ կապված ազ-
դային կյանքի կադավերապման խնդիրն էր, նա խորապես հա-
մոդված էր այն բանում, որ ազգային կյանքի կազմակերպումը
այդ պայմաններում հնարավոր էր լուսավորության զարգացման
դիպքում: Նա զարգացնում էր լուսավորված անհատի դերը հա-

¹ Վ. Ի. Լենին—«Մեր ժողանդությունից ենք հրաժարվում մենք»,
1946 թ., էջ 21:

² Նույն տեղ, էջ 19:

սարակութեան մեջ, մեծ տեղ տալով գիտութեաններին, որոնք հիմնական միջոցներ են լուսավորութեան տարածման համար, որը ըստ նրա, հնարավորութեան կտար պայքարելու բռնութեան, կաշկանդումների և ֆնացած բոլոր հնամենի օրենքների նախապաշարումների դեմ:

«Զի ազատութիւն առանց գիտութեան վտանգաւոր է ժողովրդեան աշխարհիս այսօրիկ»:¹

Գիտութեանները զարգացումը երկրի ներսում, ըստ Թադիադյանի պետք է հնարավորութեան ստեղծի հազթահարելու նույնիսկ բնութեան դժվարութեանները: «Լիքն է աշխարհը սքանչելիք» ոգևորված բացականչում է նա, նկարագրելով այն օգուտները, որ կարող է ստանալ հողագործը, գիտութեան նվաճումներին ծանոթանալով:

«Վասն զի որ հողագործ ոչ կարիցէ հասու լինել թե զիարդ հատն զոր սերմանէ յանդի յիւրում սնանի. աճի և տա ընդմիտն հարյիւր»:²

Կամ թե՛

«Ըստ այնմ պարտականութիւն է մարդոյ ուսումն առանց որոյ ոչ ցորեանը հաց կդառնա և ոչ թութը ապրեշուք»:³

Թադիադյանի պատկերացմամբ ճորտատիրական կարգերը վերացումը կազատի մարդուն ամեն կապանքներից, քանի որ մարդը բնութեանից ծնվելով ազատ, հասարակութեան մեջ էլ պետք է իրեն զգա ազատ. «Եթէ ազատ օրենք և ազատ կեանք չիցէ նոցա, այնպիսի ոք ուրեմն համարեն ծնեալ ի բանտ և մեռանի ի բանտի»:⁴

Թադիադյանի լուսավորական հայացքները վեր են բարձրանում հայ նորածագ բուրժուազիայի սահմանափակ պահանջներից: Չհասկանալով այն խորը հակասութեանները, որ գոյութեան ունենին իր հայացքների և նոր բարձրացող դասի պահանջների և իրականութեան պատմական զարգացման տվյալ էտալի տենդենցների միջև, Թադիադյանը հայ հետամնաց իրա-

¹ «Ազգասէր», 1847, էջ 154.

² Նույնը, 1845 թ., էջ 15.

³ Նույնը, 1845 թ., էջ 139.

⁴ Նույնը, 1847 թ., էջ 153.

կանության մեջ ցանկանում էր ստեղծել եվրոպական լուսավորիչներին երազած հասարակարգը:

Իր քաղաքական երազանքը Թադևոսյանը կապում էր իր կոնկրետ ծրագրի իրականացման պայմանների հետ: «Ազգասէրում» և «Ազգասէր Արարատեանում» և ապա «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ նա մանրամասն կանգ է առնում Հայաստանի աշխարհագրական դիրքի, նրա ընդերքի, հարստութիւնների, հողի բերքատւության չափերի, դանազան կուլտուրաների աճեցման հնարավորութիւնների, երկրի ֆաունայի, ֆլորայի, դետերի ջրառատության, տրանզիտային հայտնի և անհայտ ճանապարհների վրա և այլն. կատարելով քաղաքական, տնտեսագիտական, աշխարհագրական, բնագիտական, պատմական ուսումնասիրութիւն, նա ծրագրում է բուրժուազիայի հետագա դարգացման բոլոր հնարավորութիւնները մայր հողի վրա: Թադևոսյանը կոչ է անում համախմբվել հայրենիքում, կադմակերպել ընկերութիւններ, զարկ տալ երկրագործությանը, մշակել հողը տեխնիկայի նոր առաջագրած ձևերով, զարգացնել արհեստները, բացել առևտրական դպրոցներ, տարածել կրթութիւնը երկրի ներսում և այլն:

«Մեք տեսա արմատական ծառեր չեմք», գրում է նա իր «Ազգասերում», դիմելով հնդկահայերին. «մեր արմատը մեր հայրենիքն է և եթէ չջանամք մի կամ միւս եղանակաւ մեր հայրենեաց երջանկութեան հաստատիլ, չէ որ մեք երջանիկ ապրեմք. եթէ ինձ չորս ձիանի կառօք տանեն մի գեղեցիկ տալատ, հարիւրաւոր ծառայք իմ հրամանի հնազանդ կանգնացուցանեն և ասեն, որքան կուգես կեր, խմիր և ուրախ կաց և միևնույն ժամանակում իմ խեղճ մօրից կամ ընտանիքից գիր գտանեմ, որ շատ դառն նեղութեան մեջ ան կարծում այս բոլոր քաղցրութիւն ի դառնութեան ի թոյն ի մահ չի՞ թուա. ինձ, կթուա, ուրեմն ով կամի երջանիկ կար, նախ պիտի իր հայրենեաց երջանկութեան միտ դնի»¹:

Թադևոսյանը ձգտում էր հաւաքել հայութիւնը հայրենի հողի վրա, կադմակերպել հասարակական կյանքը, արագացնել, բարձրացնել այն, ցանկանալով յուրաքանչյուր հայի մեջ խորաց-

¹ «Ազգասէր», 1845 թ., էջ 139:

նել ազգային ինքնագիտակցությունը, հավատալով, որ նա իբր մեջ ունի արաքերն խոչընդոտները իր սեփական ուժերով հաղթահարելու պոտենցիալ հնարավորություններ:

Քաղաքական ակնկալումների մեջ Թաղիադյանը տեսնում էր այն նախապատրաստական հոգը, որը ցանկանում էր ստեղծել նոր բարձրացող դասը կապիտալիզմի դարգացման համար: Նրա պրոգրեսիվ և պրակտիկ միջոցառումները իրենց բովանդակությամբ բուրժուական էին և դնում էին նրա դարգացման օգտին, սակայն նա չէր տեսնում այն հակասությունները, որ բերում էր իր հետ այդ նոր դասակարգը: Դա նկատելի էր առհասարակ լուսավորիչների մոտ: Լենինը այդ երևույթը անվանել է «պատմական օպտիմիզմ»:

Տոգորված լինելով հայ ժողովրդի քաղաքական ազատության, լուսավորության իզեալներով, Թաղիադյանը առաջին պլանի վրա է դնում արտաքին հակասությունները, պայքարի մեջ տեսնում հայ ժողովրդի ազատության պայծառը: 40-ական թվականներին թե թյուրքահայ և թե ռուսահայ իրականության մեջ տարբեր աստիճանները վրա խմորվող ղեմոկրատական շարժման տեղեկները, հատկապես լուսավորության պահանջի իրագործման պայմանը: Թաղիադյանը տեսավ այդ նոր դասակարգը քաղաքական դարգացման մեջ, մինչդեռ ամենակարճ ժամանակում հայ բուրժուազիան ցույց տվեց իր սահմանափակ ձգտումները, լուսավորության և քաղաքական պահանջների հանդեպ: Այն հակասությունները, որ Թաղիադյանը տեսավ «քաղաքակրթված» եվրոպայի մեջ, այդ հակասությունները չէր կարող ըմբռնել 40-ական թվականներին գեռևս չդարգացած բուրժուական դասի և ժողովրդի մեջ: Այդ պատճառով էլ նրա մոտ նկատվում է ազգային ուժերի գերադնահատման առանձին մոմենտներ, նա սխալ պատկերացում ունենալով ներդասակարգային պայքարի ու հարաբերությունների վերաբերյալ, իդեալականացնում է պատմական անցյալը և երազում անցյալի արագիցիաների օգտագործման ճանապարհով վերականգնել հայության երբեմնի ծաղկած ուժերը, նրա կյանքը:

Թաղիադյանի աշխարհայացքի որոշ սահմանափակության օրինակներից մեկը ծագում է նրա վերաբերմունքը հայ եկեղեցու և նրա դերի հանդեպ: «Ճանապարհորդութիւն ի

Պարսա՝ անտիպ աշխատութեան մեջ, խոսելով առհասարակ կրոն-
ների ունեցած ազդեցութեան մասին, Թաղիադյանը գրում է, որ
«Հայտնագոյն նշան կործանելոյ տէրութեան է հոգևորականաց
մխել յիրա աշխարհականաց» (էջ 31—32), սակայն անդրադա-
նալով հայ իրականութեանը, Թաղիադյանը մնում է կառչած
հայ եկեղեցու պատմական դերի և նրա նշանակութեան մասին
կղած պահպանողական մտածողութեանը:

Թաղիադյանը ուժեղ քննադատութեան է ենթարկել հոգևո-
րականներին և էջմիածնի հոգևոր իշխանությունը: Նա ծաղրել
է նրանց տգիտությունը, առանձին հոգևորականների այլանդակ
վարքը, ազահությունը, կաշառակերությունը, ապա նրանց ուսու-
ցանած սխուրաստիկ գիտությունը և այլն: Սակայն նա առանձին
նշանակութեան է տվել հայ եկեղեցու պատմական կուլտուրա-
կան դերին, համարելով այն միակ կազմակերպված հիմնարկու-
թյունը՝ հայ ցրված իրականութեան մեջ, որը ի վիճակի է հա-
մախմբելու իր շուրջը հայութեան հոգևոր ուժերը, նրա լուսավո-
րութեան և քաղաքական միասնությունը իրականացնելու հա-
մար:

«Ազգասէրի» էջերում մենք հանդիպում ենք հոգվածներին,
որտեղ նա բազմաթիվ է հայտնում հոգևոր իշխանութեան կա-
տարելիք դերի հանդեպ: «Ախ էջմիածին, էջմիածին,—գրում է
Թաղիադյանը,—նախկին աթոռ քրիստոնէութեան մերոյ, կար-
ծեմ հասկանալու ինչ եմ ուզում տեսի, այս և այս միայն թէ
ահա քեզ դարուն շնորհաբեր ի ներքս հովանավորութեան ամե-
նաողորմած կայսրութեան ուսուսց. արի մի անգամ միայն զուխ
բարձրացրու և քո համորեն ուստերաց և զստերաց արդարեւ մայր
հանգիստցիք»:¹

Թաղիադյանը մինչև վերջն էլ մնաց հայ եկեղեցու բարեկո-
րոգման պատրանքների սահմաններում: Ն. Աշտաղակեցու կաթո-
ղիկոս դառնալու հետ կապելով իր հույսերը, Թաղիադյանը երա-
զում էր նրա մեջ տեսնել քաղաքակրթութեան սարածողին, սա-
կայն նրա հույսերը շատ շուտով ի դերե ելան. «Կէս դարուց և
այսր բովանդակ ազգ հայոց զոգ ծերունին սիմէօնեանայր սի-
րայրեաց փափագանօք տեսանել զՆերսէս իւր աթոռ սրբոյ Լու-

¹ «Ազգասէր», 1845 թ., էջ 64:

սաւորչին հաւատացեալ թէ համանգամայն ծաղկեր աղզն առե-
նաշառաւիղ գիտութեամբ և աշխարհն պայծառանայր արեւստիւք
և քաղաքականութեամբ: Եկն էհաս փափազանաց իւրոց. բայց
դեռ աղզն փափագի հասանել իւրոցն և դեռ ոչ էհաս փափագա-
նաց իւրոցն և դեռ ոչ էհասս:¹

Հայ եկեղեցու բարենորոգման ձգտումը իր քաղաքական
ձեւակերպումը գտաւ հետադայում Ստեփաննոս Նաղարյանի մօտ,
որպէս ամբողջական աշխարհայացք, սակայն Թաղիադյանն իր
ժամանակին ապրեց երկվություն, զգալով այն ճեղքվածքը, որ
կա եկեղեցու իր պատկերացրած դերի և իրականութեան միջև:

Թաղիադյանի լուսավորական գաղափարները զարգացման
համար դեռևս չէր ստեղծվել բարենպաստ հող, 40-ական թվա-
կանների հասարակական կյանքի կաղմակերպման պրոցեսում,
կարված հայրենի հողից, նրա շարժման ակունքներից, Թաղիա-
դյանը չտեսաւ նրա զարգացման հեռանկարը, նա ապրեց հասա-
րակական ծանր ողբերգություն իր իդեալների խորտակման հա-
մար, առանց պատկերացնելու, որ հեռու Հյուսիսում, ուռուհիւ
գաղութներում արդեն խմորվում էր աղգային, լուսավորական-
նոր շարժում, որը բերում էր իր հետ քաղաքական-հասարակա-
կան պայքարի նոր կուլաններ և նոր հեռանկարներ:

* * *

Թաղիադյանը, ինչպէս և ամեն մի լուսավորիչ, հանդիսա-
ցել է նաև բազմակողմանի զարգացումով, մեծ էրուզիցիայի տեբ-
գիտնական:

Սյդ տեսակետից խիստ ուշագրավ են «Ազգասէր» և «Ազգա-
սէր Արարատեան» թերթերում տպագրված նրա պատմագիտա-
կան բազմաթիւ հոդվածները և առանձին ուսումնասիրություն-
ները, որոնք զրոհորում են նրա վերաբերմունքը ինչպէս ընդ-
հանուր, այնպէս էլ հայ ժողովրդի կուլտուրայի պատմութեան
կարևորագույն հարցերի վերաբերյալ, իր պատմագիտական գոր-
ծերի մեջ նա երևան է բերել մեծ գիտելիքներ հայագիտութեան
և ընդհանուր արեւելագիտութեան բնագավառներում: Նա առաջ է
քաշել և մեկնաբանել շատ հարցեր ու պրոբլեմներ, որոնք վերա-

¹ .Ազգասէր Արարատեան, 1849 թ., էջ 226.

գերում են հայ լեզվի պատմութեանը, հնագիտութեանը, ազգագրութեանը, բանահյուսութեանը, նաև Հնդկաստանի և Իրանի պատմութեաններին, նրանց էպոսին, դիցաբանութեանը, ինչպես նաև՝ տնտեսագիտական, ստատիստիկական և աշխարհագրական հարցեր, ցուցաբերելով զարմանալի հմտութիւն:

Քաջ տիրապետելով արևելյան լեզուներին՝ հնդկերենին, պարսկերենին, թուրքերենին, հրեերենին, ապա նաև լատիններենին, հունարենին, անգլիերենին, Թաղիադեանը փորձել է հավաքել հատկապես վերջին դարերի ընթացքում ցրված հայութեան պատմութեանը, նրա մեջ ընդգծելով ազգային ինքնապաշտպանութեան և ինքնագիտակցութեան զգացումը, որն օգնել է, իր կարծիքով, հայ ժողովրդին պահպանելու ոչ միայն իր ազգային նկարագիրը, այլև պայմաններ է ստեղծել հաղորդակից լինելու եվրոպական առաջավոր կուլտուրային, պահպանելով հանդերձ անցյալից բերած նյութական և հոգևոր մշակույթի քարձր արժեքները:

Իր հոգևածներում Թաղիադեանը կոչ է արել անհայտութիւններից լույս աշխարհ հանել ազգային լուսավորական գաղափարներով տոգորված հայ կուլտուրայի գործիչներին ծավալած գործունեութիւնը:

Ճանապարհորդութիւններին ընթացքում Թաղիադեանը հավաքել է մեր պատմութեան վերաբերող ձեռագրեր, որոնց մասին նա տեղեկութիւններ է հաղորդել իր թերթում. այդ ձեռագրերից մեկը 18-րդ դարի հեղինակ Հակոբ Սոջամալյանի գիրքն է «Պատմութիւն Հնդկաց» վերնագրով, որի երկրորդ մասը հրատարակել է ինքը Թաղիադեանը ծանոթագրութիւններով և առաջաբանով:

Խիստ ուշադրով է «Ազգասեր Արարատեան» թերթում Թաղիադեանի հրատարակած մի ձեռագրի առաջաբանը. խոսքը վերաբերում է 1755 թ. ոմն Զաքարիա Սպահանցու «Ճշմարիտ իմաստութիւն» վերնագրով մի Թարգմանութեան առաջաբանին, գրված աշխարհաբար լեզվով: Այդ Թարգմանութեան հիմնական նպատակը եղել է աշխարհաբարի սլոգանգառումը: Առաջաբանում հեղինակը մանրամասն բացատրում է աշխարհաբարի անհրաժեշտութիւնը, համարելով այն միակ ճանապարհը գրականութեանը ժողովրդին հասկանալի դարձնելու համար:

«Հնդկաստանի պատմութեան» առաջին հատորին կցված առաջաբանի մեջ Թադիադյանը խոսում է նաև հաջորդ հատորների բովանդակութեան մասին: «Հնդկաստանի պատմութեանը» սկսվում է հնդիկ ժողովրդի հնագույն էպիքական անցյալից մինչև Հարուն-Ալ-Ռաշիդի էպիխան, Երկրորդ հատորը, հեղինակի սկսած տեղեկութեամբ, ընդգրկում է իսլամութեան շրջանը, սկսած Մահմուդ Ղադնևիցուց մինչև 1757 թվականը: Երրորդ հատորը սկսվում է անգլիական «միահեծան» տիրապետութեան օրերից, որտեղ մտնում է և հնդկահայ գաղութի պատմութեանը:

Իր ուսումնասիրութեանը կատարելիս Թադիադյանը օգտվել է գոյութուն ունեցող բոլոր սկզբնաղբյուրներից, ինչպես և անգլիական ուսումնասիրութեաններից, մինչև ժամանակ քննադատելով բոլոր այն սխալ տեսակետները, որ ունեցել են անգլիական ուսումնասիրողները. այդ բոլորից հետո, ինչպես ինքն է տեսնում, նա աշխատել է տալ Հնդկաստանի մինչև այժմ չգրված «առավել ճոխ և ճշմարտապատում» պատմութեանը:

«Հնդկաստանի պատմութեան» առաջին հատորում Թադիադյանը կանգ է առնում եվրոպական գաղութային քաղաքականութեան հարցի վրա. իր ժամանակակիցների մեջ նա առաջինն էր, որ փորձում էր վերլուծել այն դասակարգային հակասութեանների ֆոնի վրա, Նա նկարագրում է եվրոպական գաղութարարների ներխուժումը Հնդկաստան, որից հնդիկ ժողովուրդը հետզհետե կորցրեց իր անկախութեանը, ենթարկվելով սկզբում առևտրականների, հետո եվրոպական պետութեանների տիրակալութեանը:

«Քրիստոնէութիւն ի Հնդկիս» գլխում Թադիադյանը խոսում է Հնդկաստանի նվաճման առաջին շրջանի մասին, նկարագրելով այն բռնի ուժը, որ զործադրել են եվրոպացիք—Անգլո-օվկայանյան թալանի շրջանում. «Նա նոցա զեղուն փորթուղալիք և կրօնաւորք նոցա, որպէս Սպանիացւոցն ի Մեքսիկոն ի ձախ բարձին զխաչ և յաջ իւրեանց դսուսներ, բռնի ածել զնոսա ի հաւատս իւրեանց, Զօրացան ետ նոցա Դանիք, Գաղղիացիք և Անգլիացիք և զբազումս թէ ի հաւատացելոց և թէ յանհաւատից՝ որսացան և որսան ի կողմն իւրեանց առանց խտրանաց»:¹

¹ Մ. Թադիադյան—«Պատմութիւն հին Հնդկաստանի», 1848, էջ 224:

Այս առդերը խիստ ընդունելի է թաղիապետի հայացքների համար, ժամավանդ էլ թե ավելացնենք բերված ցիտատի փակագծային մասը (Շամաչիսցին արդարև իշխանք հաւատացելուց, որոց փառաժողովիւն սիրոյն յիրաւունս համարի զաղանային անդթու թեանց)։ Այս առդերն արդար վերդովմունքի արտահայտութիւնն էն թաղիապետի մոտ ընդդեմ հզոր կապիտալիստական, թալանչիական պետութիւնների, ընդդեմ փոքր ժողովուրդների հարստահարութեան։

Անդրիայի օրինակի վրա նա ցույց է տվել, թե ինչպես կվերապահի զգալու թաքարները, օգտագործելով բոլոր միջոցները (բունի ուժով քրիստոնեություն տարածում, պատերազմներ և ներքին խլրտումներ կազմակերպում, քաղաքակրթության տարածման խարուսիկ լողուններով օգտագործում և այլն), հսկայական հարստություններ էին տեղափոխում իրենց երկրները, ամենահեղինակալ հասկացություն մատենով բնիկներին:

«Յամին զեօթնհաբելը միլիօնս լիբայից քարղեն ի հարկաց Հնգկաստանի և ոչ գոնե զմիլիօն մի ծախսեն ի վճար ուսման այնքան քաղվածեան տուողացն զայն: Եւ Հիցե այս բռնաբարութիւն ի ծայրագոյն աստիճանի, անտանելի և քան զմոժիկութիւնն Ռուսաստանի և զկեղեքանս Պարսից»:¹

Սորա ցնեկով գաղութային քաղաքականությամբ քննադա-
տությունը դեռևս Մ. Նալբանդյանից առաջ, համարյա նրա
խոսքերով թաղիադյանը մերկացնում է եվրոպական տիրակալ-
ների մարդասիրական քաղաքները՝ տակ թաքնված թախանչիա-
կան ձգտումները:

[illegible]

¹ «Աղգառէր Արարատեան», 1849 թ., էջ 215:

«Պետմուքին Պարսից» ուսումնասիրության մեջ Թաղիա-
դյանը նկարագրում է արևելքից և արևմուտքից Պարսկաստան
մտած հրոսակախմբերը, որոնք ունեցել են աշխարհակալական
ձգտումներ և ներկայացնում են «Ժանտախտ ապականութիւն
ազգին»:

Այնուհետև Թաղիադյանը մանրամասն կանգ է առնում
18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին երեսնամյակում
կատարված քաղաքական ղեպքերի, Պարսկաստանի ներսում ծա-
վալված խռովությունների, անիշխանության, ֆեոդալական
մասնատման, հարկերի ծանրության, հողեռահանության սո-
սաճման իրավունքների վրա և այլն:

Թաղիադյանը հետաքրքիր տեղեկություններ է տալիս նաև
Պարսկաստանի հայկական օջախների, նրանց մոտ աչքի ընկնող
հայ հայրենասերների, Նոր Զուղայի տնտեսական հարստահա-
րումների մասին:

Չնայած գիրքն ընդգրկում է Պարսից ամբողջ պատմու-
թյունն իր համառոտ ձևով, սակայն առաջաբանում Հովհաննես
Սալմաստեցուն նվիրած տողերից պարզվում է, որ Թաղիադյանը
գրած է հղել և սրա երկրորդ հատորը. այդ հատորի բովանդա-
կության մասին նա համառոտ տեղեկություններ է տալիս այդ-
տեղ:

«Երկրորդ հատոր գործոյս, որ 'ի լոյս բերէ զստորդ տեղա-
գրութիւնս Ատրպատականի, Եկպատանայ, Պարսք նահանգի և
կղզեաց Պարսկային ծոցոյ, զԵրինս, զԳաշտս, զանապատս մե-
ծամեծս, զԲերս, զհանքս, զԳետորայս, զՋրանցս, զծով, զբարս և
զբաժանումն ժողովրդեան, զիզու, զկրօն, հին և նոր զծէս, տա-
տնին և առանձինն հանգամանօք անձին և պատահարաց, մնաց
այլում ժամանակի ապաստան»:

1848 թվականի «Ազգագիր Արարատեան»-ում մենք հանդի-
պում ենք մի հայտարարության, որը ազդարարում է «Ճանա-
պարհորդութիւն ի Պարսս»-ի սկսված տպագրության մասին: Սա-
կայն քիչ անց տպագրվում է երկրորդ. հայտարարությունը
(էջ 30), որից պարզվում է, որ «Ճանապարհորդութիւն ի Պարսս»
գրքի հրատարակութիւնը խափանվել է նյութական օժանդա-

կությունն չստանալու պատճառով և մնացել է տպարանում «կիսակատար»:

Հետագայում պրպտուհներ են կատարվել այդ գործի ձեռագիրը կամ նրա տպագրված մամուլները գտնելու ուղղությամբ, բայց անհաջողության են մատնվել դրանք:

Թաղիադյանի կենսագրության շուրջը կատարած որոնումներն ընթացքում, Գրական թանգարանում, Մ. Նալբանդյանի արխիվում մեզ հաջողվեց հայտնաբերել այդ «կիսակատար» մնացած զրքի տպագրված մամուլները: Մ. Նալբանդյանը Հնդկաստանում եղած ժամանակ հետաքրքրվել է Թաղիադյանով և հավանաբար Խաչկյան քահանայի մոտ գտնվող Թաղիադյանի տպաբանից իր հետ է վերցրել այդ կիսատ տպագրված գործը: Դա խառը մամուլներով կազմված մի փոքրիկ դրքույկ է, որի առաջին մաքուր թերթի վրա կա 40—60-ական թվականներին հատուկ ձեռագրով գրված հետևյալ քառատողը.

«Շատ կերար սեր և մածուն
Ներկա կեր և տրամուլիւն,
Ազգասէրին էր կապած
Գո այս չնչին գրութիւն»:

Ո՞վ է գրել այս տողերը. ժամանակակիցներէջ որեէ մեկը, գուցե Մ. Նալբանդյանը, որը ցանկացել է ակնարկել Թաղիադյանի անհաջողությունը, հեգնելով ժամանակակիցների վերաբերմունքը նրա արտադրանքի հանդեպ:

Գիրքը բացվում է չթվագրված էջով, որտեղ խոշոր տառերով գրված է հետևյալ վերնագիրը.

«ԾԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
Ի ՊԱՐՄ¹
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ»

Հաջորդ էջը թվագրված է 146. պարզվում է, որ դա սկիզբը չէ, այլ ինչ որ մի գլուխ, որը շարունակվում է մինչև 180-րդ էջը, որա անմիջական շարունակությունը 73-րդ էջն է, որը հասնում է մինչև 108-ը, վերջանում տողագրված թառով և այստեղ գիր-

¹ Ի Պարս—վերջինս-ն ընկած է:

քը կիսվում է: Հաջորդ էջից բացվում է մի այլ գլուխ հետևյալ վերնագրով.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ս. Դ. ԹԱՂԻԴԱՆՅ

ի

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Հ. Բ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՆ

Այս էջից սկսվում է այն գրքը, որի մասին եղել է հայտարարություն և որը համարվում էր կորած. այդ առաջին էջը շարունակվում է մինչև 72 ըզը և սրանով տպագրված էջերը վերջանում են:

Մամուլներն ուղիղ դասավորելու. դեպքում պարզվում է, որ ամբողջական գրքից հասել է մեզ 1-ից մինչև 108 էջը (9 մամուլ), պակասում է շարունակությունը (3 մ.), այնուհետև (145—180 էջերը)—3 մամուլ. սա նշանակում է, գիրքը տպագրվել է 15 մամուլ, որից կորել է 3 մամուլ (109—145 էջերը):

Ելնելով գրքի առաջին մասի բովանդակությունից, կասկած չի մնում, որ դա հենց այն գիրքն է, որի մասին հեղինակը խոսում է իր «Պարսից պատմություն» ներածական մասում: Այնտեղ թվարկված գլուխները լիովին համապատասխանում են այստեղ նշված գլուխներին. առաջին մասն այստեղ ընդհատվում է «Բէշ Պարսից» գլխով, մինչև 145 էջը, որտեղ մի մասով շարունակվել է հին կրոնի—Քեշի մեկնությունը, ապա հավանաբար պետք է լիներ նոր մահմեդական կրոնը և ազգային կրոնական ձևերը, որով և պետք է ավարտվեր «Պատմություն Պարսից» գրքի Ա. մասը:

Գրքի երկրորդ մասը (145—180) իր մեջ բովանդակում է գերազանցորեն տեղագրական, հնագիտական, ազգագրական, ինչպես ինքն է ասում իր գրքում «հանդերձ առտնին և առանձին հանգամանք անձին և պատահարաց»: Այստեղ Թաղհադյանը նկարագրել է իր ճանապարհորդությունը Ղեպի Պարսկաստան, որի մի մասին ծանոթացանք առաջին գլխում: Այս մասում նույնպես հեղինակը կանգ է առնում կրոնի, պետականության,

Ֆեոդալական կարգերի, Պարսկաստանի կյանքի առանձին կողմերի վրա, որը խիստ կարևոր նշանակություն ունի վերջինիս կենցաղի ուսումնասիրության համար:

Ավարտելով Թադիադյանի պատմադիտական գործերի մասին ընդհանուր ակնարկը, պետք է նշել, որ խիստ նշանակալից են ոչ միայն պատմադիտական հարցերին, այլև դիցաբանություն, էպոսին, աղբադրություն և այլ բնագավառներին նվիրված ուսումնասիրությունները:

* * *

Իր լուսավորական հայացքները Թադիադյանը զարգացրել է նաև հայ մանուկների դաստիարակությունը և կրթությունը վերաբերող մանկավարժական հոգիվածների և ձեռնարկների մեջ: Քսանական թվականներին Հնդկաստանում, դեռևս ուսանողական տարիներին, նա երազել է հայրենիքում հիմնել նոր տիպի դպրոց, հիվոսական քաղաքակրթությունն իր ժողովրդի մեջ տարածելու նպատակով:

«Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատությունը միջ Թադիադյանը խիստ քննադատություն է ենթարկել վանական կրթությունը, մանրամասն նկարագրելով այն բացասական հետեթույթունը, որ թողել է այն հայ ժողովրդի վրա — ագիտություն, վանքները, որ թողել է այն հայ ժողովրդի վրա — ագիտություն, նախապաշարունակների միջոցով, Ֆեոդալական կապանքների էլ ավելի ուժեղացում և այլն: Երեսնական թվականներին արդեն նա փորձել է բուն հայրենիքում կազմակերպել իր երազած դպրոցը, սակայն նրա ցանկությունները խափանվել են. խավարամիտ և հնամուլ հոգեդրականները հալածել, ծաղր ու ծանակի են ենթարկել ոչ միայն կրթություն նրա սխառեմը, լուսավորված մտքերը, այլև նրա անձը:

Մանկավարժական գործունեությունը, ինչպես ասացինք, նրան հաջողվել է ծավալել սկզբում Ն. Զուղայում, ապա հնդկահայ գաղութում:

1846 թվականին Արարատյան ընկերություն օգնությամբ Թադիադյանը կալիթա քաղաքում հիմնում է Ս. Սահլիսյան դպրոցը, որն իր գոյությունը պահպանում է մինչև 1857 թ.:

Քսանական թվականներից արդեն հայ գաղութներում, հատկապես լուսավորական օջախներ ստեղծելու հետ, առաջ է

գալիս և մանկավարժական նոր սկզբունքներ կիրառելու պահանջը. Աստրախանում, Թիֆլիսում, Պոլսում հիմնված դպրոցների համար մշակված կանոնադրությունները և դասագրքերն ինքնուստինքյան ցույց են տալիս այդ (1808 թ. Ներսիս Աշտարակեցու կազմած Աստրախանի դպրոցի, ապա 1804 թ. Պոլսի Ուսկուտարի ձեռնարանի կանոնադրությունները, Զմյուռնիայում հրատարակված այբբենարանները, աղջիկների դաստիարակությանը վերաբերող Թարգմանական ուսումնասիրությունները և այլն):

Երեսնական թվականների վերջերին Թիֆլիսում Աբովյանի հիմնած մասնավոր պանսիոնն արդեն բերում էր իր հետ մանկավարժության նոր սկզբունքները: Պայքարի ելնելով պահպանողական խավերի դեմ, Աբովյանը մանկավարժության նոր սկզբունքները կապում էր հայ իրականության մեջ արդեն ստացված և անփոփոխ առաջավոր ձգտումների հետ, խոշոր հեղաշրջում առաջ բերելով մանուկների դաստիարակության և կրթության գործում,

Թաղիադյանի մանկավարժական ողջ գործունեությունը և նրա գաղափարները ևս սերտորեն համընկնում են Աբովյանի և նրան հաջորդող սերնդի առաջավոր պահանջներին:

Բացասելով ուսուցման մեջ մինչ այդ գոյություն ունեցող սխոլաստիկ մեթոդները, Թաղիադյանն առաջ քաշեց իր ժամանակին եվրոպայում ընդհանրացած տառուսուցման ձևերից մեկը՝ տառահեզական մեթոդը:

«Մանկունք խաղուց յաւէտ հակումէտք քան եթէ գրոց,— գրում է նա 1840 թվականին հրատարակած իր «Մեթոդական Սյրբեմարանի» առաջաբանում,— բաղում անգամ ծուստեն դտետրակ իւրեանց յառաջ քան ուսանել զաթութայս նոցա. իսկ հեղինակը այբբենարանաց զցոյց գիտութեանց յաւէտ սիրելով քան զսոսկ պիտոյս խնուն զնախաշուիղ ուսանելէացն խորդուբորդ կողովմանօք և տարտամեցուցանեն բաղամէտ ժամանակաւ և ծախիւք, զաշակերտս, զծնողս նոցա և զանձինս իւրեանց...» Սա նշանակում էր, որ Թաղիադյանը խորապես ըմբռնում էր երեխայի հոգին, նրա բնական ձգտումները,

Թաղիադյանի կարծիքով երեխան պետք է առաջին հերթին ճանաչի իր շրջապատը. նա պետք է յուրացնի այն, ինչ շոշա-

փեկի է և տեսանելի իր համար: Յուրաքանչյուր տառ ուսուցանելիս նա ընտրել է այնպիսի վանկեր, որոնք հիշեցնում են երեխային ծանոթ առարկաները, բնության երևույթները: Սա բխում էր հեղինակի՝ ճանաչել, հեզել և հասկանալ հիմնական սկզբունքից:

Թաղիադյանն առանձին ուշադրություն է դարձրել քերականության ուսուցման վրա. քննադատելով իր ժամանակին դրությունն ունեցող քերականական դժվար ըմբռնելի կանոնները, նա աշխատում է դյուրություններ մտցնել նրա մի շարք ձևերի մեջ, հեշտությամբ այն յուրացնելի դարձնելու համար:

Հեզարանից և շարադրիչից հետո Թաղիադյանը երեխայի ձեռքն է տալիս ընթերցարանը. այս ընթերցարանը նա կազմել է հատկապես հնդկահայ երեխաների համար, ուրեմն և ուշադրություն է դարձրել հայկական առասպելների և ժողովրդական առակներով համեմատած բարոյախոսական զրույցների վրա:

Դասագրքերից բացի Թաղիադյանը հրատարակել է նաև մի զրբույկ՝ «Ճառ դաստիարակութեան օրինդդաց» (1848). այստեղ նա զարգացնում է իր մտքերը ազգային դաստիարակության և կրթության վերաբերյալ:

Խոսելով հասարակության մեջ անհատի ունեցած կարևոր դերի մասին, Թաղիադյանը կանգ է առնում այդ հասարակության հիմնական օղակի՝ ընտանիքի վրա. ընտանիքն է, որ հիմքն է հանդիսանում կազմակերպված հասարակության. ընտանիքը պետք է կազմված լինի քաղաքակրթված անհատներից: Այդտեղ առանձին նշանակություն է ստանում նրա մոտ կրթված և դաստիարակված կնոջ հարցը, որը հասարակությանը տալիս է այդ բուսավորված անհատներին: Կինը, ըստ Թաղիադյանի, պետք է ունենա հոգևոր և կուլտուրական այնպիսի դաստիարակություն, որը բխի նրա ոչ միայն քաղաքացիական շահերից, այլև իր ազգային տրադիցիաներից. նա պետք է կարողանա հասարակության համար պիտանի անդամներ պատրաստելու հետ, տոգորել նրանց և հայրենասիրական գաղափարներով:

Անդրադառնալով ազգային տրադիցիաների վերացման վտանգին՝ Թաղիադյանը դրա պատճառներից մեկը համարում է օտարամոլությունը: «Ազգութիւն կերպասի պատմուճան կամ

անկուածոյ քօղը չէ՝ զոր երբ կամի ազնվութիւնդ ազանի և երբ կամի մերկանայ, այլ ընդ արեան և ընդ կենաց նորոս ունի դան-բաժան հաղորդութիւն»¹

«Ազգասեր» և «Ազգասեր Արարատեան» թերթերում մենք հանդիպում ենք բազմապիսի մանկավարժական հոդվածներին, որոնց նպատակն էր սխտեմատիկ կերպով ծանոթացնել դաս-տիարակութեան և կրթութեան նորագոյն հարցերին, ինչ-պես նաև Նոր-Ձուղայում, Կալկաթայում, Պոլսում և այլ վայ-րերում եղած դպրոցների նորամուծութիւններին, դասավանդ-ման նոր ձևերին և այլն:

Պայքարելով սխոլաստիկ մանկավարժութեան դեմ, Թադիա-դյանը գրաբարի հարցում արտահայտեց իր ժամանակի մտա-վորականութեան մի մասի կրկնութիւնը:

«Ինձ շատ ծանր է թվել Թադիադյանցը այն հայերի կար-գում, որ մտածում էին մեռյալը գործիք չինել, ժողովրդի մեջ կյանք ներս բերելու համար»²—գրում է Նալբանդյանը իր «Մե-ռելահարցուկ»-ի ծանոթութիւններէից մեկում:

Ինչով բացատրել այդ երևույթը:

Աշխարհաբարի գործածման պահանջը Թադիադյանն զգա-ցել է Արեւմտեանից առաջ, դեռևս 20-ական թվականներին, երբ նա գրում էր իր պատմական նամակը՝ Երևանցիներին:

Ճանապարհորդութիւններ ընթացքում Թադիադյանը գիտ-նական հմտութեամբ ծանոթացել և ուսումնասիրել էր հայ բարբառները, հավաքել բաղաձայնի գրույցներ, երգեր, առակներ: 1832—34 թվականներին էջմիածնում եղած ժամանակ նա գրել է բանաստեղծութիւններ՝ աշխարհաբար լեզվով:

Հաշիվ առնելով Չուղահայերի պահանջը, Թադիադյանը 1845 թվականին Կալկաթայում հրատարակում է իր «Ազգասեր»-ը նույնպես աշխարհաբար լեզվով: Նշանակում է, որ Թադիադյանը զգում էր ժամանակի պահանջը աշխարհաբարի հարցում: Աշ-խարհաբար լեզուն լայն դարձացման հող էր որոնում արդեն 19-րդ դարի սկզբներէից, հրապարակի վրա երևում էին աշխար-

¹ Մ. Թադիադյանց—«Ճառ դաստիարակութեան օրնորդաց», 1848 թ. էջ՝ 43:

² Մ. Նալբանդյան—«Երկերի լիակատար ժողովածու», 1940 թ., I հ. էջ՝ 275:

հարար լեզվով ձեռնարկներ, պարբերաթերթեր, որոնք ձգտում էին մատչելի դառնալ ժողովրդին, հաղորդակից լինելու նրա կենսական պահանջներին:

Տարբեր նկատառումներով, հատկապես Թյուրքիայում, լեզվի հարցով զբաղվում էին, նաև, միախոհները, որոնք իրենց քարոզներն համար օգտագործում էին լանավոր և գրավոր աշխարհարար խոսքը. և ապա Մխիթարյանների մի մասը, որոնք հատկապես պարբերաթերթի միջոցով նպատակ ունեին ժողովրդի լեզուն մաքրել, հղկել՝ գրաբարին մոտեցնելու համար:

Սակայն Թադիադյանի աշխարհաբարը, Աբովյանի աշխարհաբարի նման, բխում էր անմիջապես ժողովրդի պահանջից, ելնելով ժողովրդական բարբառներից: Միայն Թադիադյանը Աբովյանի նման չհասավ աշխարհաբարի հասարակական գերի խոր գիտակցման աստիճանին. 1848 թ. սեպտեմբերին նա իր ընդհատված թերթը հրատարակեց գրաբար լեզվով, տեղի տալով հնդկահայ առևտրականների պահանջին: Շուրջ ռամկօրեն գրէ, վասն մասնաւոր՝ տեղւոյ աշխատի, իսկ որ գրաբար գրէ՝ վասն ամենայն ազգին և ընդհանրվոյ աշխատի»¹—գրում է նա իր թերթում: Սրանից երևում է, որ Թադիադյանը լուծում էր իր երկընարանքը աշխարհաբարի հարցում, անցնելով գրաբարի կողմը: Այս հանգամանքը խորապես աղդեց Թադիադյանի աշխարհայացքի զարգացման վրա: Հայկական մյուս օջախներում ծայր առած նոր շարժման հետ առնչվող նրա նախկին և ավելի առաջավոր գաղափարները կորցրին իրենց հետագա աճման կենսունակ հողը. նրա պանած սերմերը բերք չտվին հնդկահայ հողի վրա, և նա շատ հիռվից չտեսավ և չկարողացավ զգալ այն նոր տեղաշարժերն ու նրանց ընթացքը, որ 50-ական թվականներից սկսում էին տիրակաճ շեշտ ընդունել արևելահայ և արևմտահայ հատվածներում:

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Ինչպես տեսանք, Թադիադյանն իր լուսավորական լեզուններով ու գործունեությամբ կարողացավ վեր բարձրանալ հնդկահայ քայքայվող օջախի սահմանափակ պահանջներից և 30—40-ական թվականներին դրսևորեց ընդհանուր հայության մեջ խմորվող այն գաղափարները, որոնք հետագայում ավելի ամ-

¹ «Ազդասեր Աբարատեան», 1848 թ., էջ 3:

բողջական ձևով հանդես եկան Խաչատուր Աբովյանի և նրա հաջորդների, հայ վաթսուներկանների ազգային-լուսավորական գործունեության մեջ: Հեռու Հնդկաստանում Թադևոսյանի ծավալած գործունեությունն այդ տեսակետից դառնում է 40-ական թվականների հասարակական մտքի պատմության ուսումնասիրության համար ամենահետաքրքիր և հարուստ աղբյուրներից մեկը:

Մինչև «Ազգասէր»-ը և նրա ժամանակ, Հնդկաստանում հրապարակվել են և այլ թերթեր, սակայն ոչ մեկը դրանցից չէ արժանացել այնքան մեծ հետաքրքրության, որքան Թադևոսյանի «Ազգասէր»-ը և դրան հաջորդող «Ազգասէր Արարատեան»-ը: Հայություն տարբեր հատվածներից հայ մտավորականության տեսչավոր ներկայացուցիչները Թադևոսյանին ուղարկած իրենց նամակների, հոդվածների մեջ բարձր են գնահատել թերթի արտահայտած գաղափարները և ջերմ ցանկություն հայտնել նրա բեղմնավոր գործունեության և հետագա ծաղկման համար: Որպես բնորոշ օրինակ կարելի է բերել Շաշունց Խիսկի թոն կեղծանվան տակ Թիֆլիսսահակ մի հայ մտավորականի ուղարկած նամակը «Ազգասէր»-ի վերատեսչին: «Դուք ապրիս, գրում է նա, ուր ամենուամս իս էլի մեծբաժ. մին դամ Գիարդն Ռիչի բաղչումն, մին դամ Հայուց Թաղումն, մին դամ դիտի վերայ...»

Քանի ուր խելք կար գօզրումս, փառք տվի բարերարին, ուր էսքան հիռու աշխարքում մեր Ազգն, ուր հալալ աշխւտանքով էսքան իրիվելի է դառել ու էսքան գովդե վոնէ»¹

«Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան» թերթում եղած ստորագրություններից երևում է, որ թերթը սերտ կապեր է ունեցել Պոլսի, Զայուռնիայի, Թիֆլիսի լուսավորական օջախների հետ: Ինքը խմբագիրը անձնական կապերի մեջ էր «Արշալոյս Արարատեան» թերթի խմբագիր Պալտաղյանի, Պուտում հայտնի ամիրաներ Տատյանի, Մ. Շեղախլիյանի, հայտնի գրավաճառ Քիթապչի Մարգարի, Մխիթարյան հայրերի, Թիֆլիսի «Կովկաս» թերթի խմբագիրներ Արզանյան եղբայրների, Էնֆեանձյան եղբայրների և ուրիշների հետ:

«Ազգասէր»-ն իր գոյությունը պահպանել է ընդհատումներով. 1848 թվականի մայիսին «Արարատյան ընկերության» լու-

¹ «Ազգասէր», 1847 թ., էջ 55:

ծառքի նախօրյակին թերթն առաջին անգամ ընդհատվում է վերատեսչի հիվանդության պատճառով: Հետագայում իր «Վախճան և վերականգնացում» վերատեսչի ազդասերի» կենսագրական հոդվածում, Թաղիադյանը պատմում է իր հիվանդության մասին: Հասնում է մի պահ, երբ բժիշկներն իսպառ կորցնում են հույսերը Թաղիադյանի կյանքի համար, խփում է կալկաթայի հայոց եկեղեցու զանգակը, ազդարարում «Ազգասերի» վերատեսչի մերձիմահ վիճակը: Կալկաթայի հայ հասարակությունը համաքվում է ընկերություն մեծ դահլիճում, որի սենյակներից մեկում գտնվում էր հիվանդը: Գիտակցությունը դեռևս վրան, նա նախում էր իրեն շրջապատող մարդկանց լացակամած աչքերին և ասում. «Տեսա՞ր իմ, աչք իմ լի են աշխարհի աստիքը, եթէ մեռայց բաւականացեալ է, իսկ եթէ կեցից արգիօք վասն ազգի իմում զի ինձ ինքեան փոխալ եմ»:

Թաղիադյանն առողջանում է. թերթը 1848 թվականի սեպտեմբերի 16-ից սկսվում է հրատարակվել, այս անգամ արդեն առանց ընկերության գոյության: Թերթերը պահպանելու համար Թաղիադյանը իր տպարանում բաց է անում անգլիական հրատարակչության բաժին: Բայց 1851 թվականին նա ստիպված ընդհատում է «Ազգասեր Արարատեանի» հրատարակումը և արտասուքով դամբանական գրում իր հոգեզավակին.

«Գնահ, Ազգասեր, մեռիր որպէս ամենայն նախորդը քո. եթէ միայն քո պարծանաց աշխատիս և ոչ ընդհանուր ազգիդ: Ձի դոր ազգդ ոչ ունիցի, կամ ունի ոչ կամիցի, և քեզ ինքեան աւելորդ այն և անպիտան է»¹.

«Արշալոյս Արարատեան» թերթի խմբագիրը իր բաժանորդների մեջ հանգանակություն կատարելով օգնում է Թաղիադյանին՝ պարտքերը մարելու և թերթը նորից հրատարակելու: Մի քանի ամսվա ընդհատումից հետո նորից լույս աշխարհ է գալիս Թաղիադյանի «հոգեզավակը», բայց այս անգամ արդեն շատ կարճ ապրելու համար:

Զգիմանալով ծախսերին, Թաղիադյանն իր տպարանը և դպրոցը տեղափոխում է Կալկաթայի մոտ գտնվող Չիչրա քաղաքը: Թերթն իր գոյությունը պահպանում է մինչև 1852 թ. փետրվարի 15-ը:

¹ «Ազգասեր Արարատեան», 1851 թ. էջ 522:

Հնդկահայ և թյուրքահայ թերթերը խորը վշտով արձագանքում են «Ազգասերի» մահը: «Այո, ողբանք սակա մահուան Ազգասերին»,—գրում է Սինգափուրի «Ուսումնասեր» թերթը,— և ոչ ընդունայն ողբանք, քանզի նովաւ կորուսանք զարձանագրութիւնս ազգային զործողութեանս ի Հնդկիս և էտուր աշխարհիս նովաւ կորուսանք զպիտանի խթանս ազգային ուսումնասիրութեան և նովաւ կորուսանք զվայելագրութիւնս հմուտ քերթողին և վերատեսչին, նովաւ կորուսանք ազատամուտ քերթողին և վերատեսչին, նովաւ կորուսանք զհոգին ազատագրութեան և նովաւ կորուսանք ջատագովը ազգիս և զխրատիչս եղեռնագործիս և անիրաւաց և ի վախճանի նովաւ կորուսեալ և դամենայնի զորս պիտանի էր հասարակութեան, ուստի ցաւիմք և հեծեծանք ցաւիմք զկորուստն սիրելոյն «Ազգասերին»:

Այլևս չէր հնչում Թաղիադեանի ուժեղ, կազմակերպող ձայնը հեռու Հնդկաստանում: Այլևս չէր զգում նա իր մզած կրքոտ քարոզների արձագանքներն իր հայրենիքում: Կորցրած իր կենսական ուժերը, նա մարում էր հնդկահայ քայքայվող գաղութում, հարուստ առևտրականների անտարբեր միջավայրում, որտեղ հետզհետե անհետանում էր հայ լեզուն, հայկական կյանքը, տեղի տալով անգլիականին:

1852 թվականի փետրվարի 15-ին, իր թերթը փակելուց հետո Թաղիադեանը ցած է դնում և իր գրիչը: Զրկվելով թերթից, նա զրկվում է հրապարակախոս լուսավորչի իր կոչումից և նյութական, բարոյական օգնությունից: Փակված Զիչրայի իջդարոցի պատերի մեջ, մշտապես հիվանդ, նյութական ծանր պայմաններում, նա անց է կացնում իր կյանքի վերջին ամիսները և մոռյալ տարիները:

Մեսրոպ Սեթը իր «Իթիչ ռակեգրիչ մատենագրին Մ. Ի. Թաղիադեան» կենսագրական ակնարկի մեջ, պատմում է, թե ինչպես «Ազգասեր Արարատեանի» փակվելուց հետո նա կանչում է իր մոտ իր ընդունակ և անձնվեր աշակերտներից մեկին՝ Շահնազարյան-Սարգսյանին, հանձնում նրան թանգ խաթունի նվիրած կապարե գրիչը և ասում. «Թող զանտիպ երկասիրութիւնն իմ բազմապիտի, զորս ևս չկարացի ցարդ ի լոյս ընծայել, սակայն անգրասիրութեան և անողոր հակադրութեան արդի հնդկահայոց, յորս մահու չափ աշխատութեամբ ջանացաք, այսքան ամա դար-

Թուցանել զհոգի աղգութեան օրինակաւ քաջի գործոց նախա-
հարց, այլ սակայն իողուր, զի հնդկահայս այլևս անգլիացեալ է
և բահադոն ծուներ իջուցանէ ի ֆլաս աղգութեան, հուսամ, որ
ակն ունիմ ի գրչէ նմանօրինակ երկասիրութիւնն տխուր ազ-
գիւղ և հայրենեաց, ուր որ իցիս, զի ուսուցեալ եմ ես թէ՛ քեզ
և թէ՛ սիրելի աշակերտակցաց քոց ի Ս. Սանդուխտ դպրոցի,
ախրել միշտ դադգ և զհայրենիս, ուր որ գտանիցեք ընդ օտար
աստեղօք և ի սփիւռ հնդկաց աշխարհին, ուր, որպէս լաւ գի-
տես, դարուս կենացս փոխեցաւ աշուն տերեւթափ, սոսկ աղգին
օգուտ, այլ սակայն կոյր բախտիս բերմամբ հալածեցայ միշտ վասն
անաշտութեան իմոյ և ճշմարտութեան. ամաչեսցեն որ ի նանիւր
հալածեցին զանձն իմ, աստ և թէ յայլ տեղիս»:

Գրեց նրանից հետո Թաղիադէյանը, հայտնի չէ: Բայց նա
ապրեց այն ծանր հուսահատությունը, որին զոհ գնաց նման
խափար բոսկենիւրից մեկուսւմ մեծ լուսավորիչ խաչատուր Արով-
յանը:

Ժամանակի մտավորականության առաջավոր շերտերը բարձր
գնահատական են տվել ըմբոստ, անհանգիստ, տաղանդով և
խմացությամբ իր միջավայրից բարձր կանգնած Մեսրոպ Թա-
ղիադէյանին. «Եթէ հարգն ինքը դրագիտութիւնն ի միջի մե-
քում»,—գրում է նրա մտերիմներից Թ. Խ. Ավետուսյանը,—հա-
ջիւր մասամբ չափ եւրոպացւոց, աշխատութիւնք սորա հոյժ
աւելի լինէին քան որք եղել են»:

Թ. Խ. Ավետուսյանի նման սովորութիւլ անձնվեր բարե-
գիւմներ իրողքին Թաղիադէյանի շրջապատում եղել են նաև շատ
այնպիսի մարդիկ, որոնք իրենց սահմանափակ մտքով և չափա-
փութ կարողություններով չէին կարող ըմբռնել իր միջավայրից
բարձր կանգնած, բնավորությամբ կրքոտ, անմիջական, հասա-
քակական ուժեղ ջիւղ ունեցող պայքարող գործչին: Փափաղյանի
պատկերացմամբ Թաղիադէյանը պետք է եղած լիներ հոգով
հպարտ, բնավորությամբ աննկուն մի անձ, երգիծանքը բե-
քանին՝ խափարածուիների դեմ, ողբի տեղ ծաղր ու հեգնանք ու-
նեցող, սուր և խայթող լեզվի ու գրչի տեր քաղաքացի:

Օգտագործելով այն հանգամանքը, որ Թաղիադէյանը չէ
թողել իր լուսանկարը, բարեկամ ձևացող խաչկյան քահանայ
աշխատել է ներկայացնել նրան նույնիսկ իբրև մի այլանդա-

կություն, մինչդեռ իր աշակերտները և բարեկամները վկայութ-
յամբ, իրականում եղել է հակառակը. «միջանասակ էր նա-
ղեմքը կանոնավոր, տեսիլ ականց աղբու, խորիմաստ, տիպ դի-
տակին էր վիհանձն, անվհեր և մտավորական. վարք նորա-
քաջ և վստահ և ընդ ամենայն տեսիլ նորա հաճոյական և պատ-
կանելի»¹

Նույն Սաչկյան քահանայի վկայությամբ Թաղիադյանը
վերջին տարիներն անց է կացրել շատ ծանր դրության մեջ:
1855 թվականին թոքախտից մեռել է նրա կինը, Սաչկյան քա-
հանային գրած մի նամակում Թաղիադյանը նկարագրում է իր
ծանր վիճակը. «ես աղբի կողմ շատ եմ կրեալ ի վեր քան գլոյն
և ոչ վշտացեալ, ձանձրացեալ, ըստ որում աստուած ոչ ուրեք ինձ
սահմանեալ վիճակն ընդեր, որպէս թէ հղեալ անիծապարտն Ադամ,
տապն ջերման քաղեց զոգի իմ, երկարել զբանս չկարիմ, անի-
ծեալ աշխարհ, անիծեալ և սնտոի հոյս կենցաղոյս»:

1857 թվականին Թաղիադյանը որոշում է թողնել Հնդկաս-
տանը և նորից հայրենիք վերադառնալ: Նա փակում է իր դպ-
րոցը, ձեռագրերն ու օրագրերի մի մասը կտակի հետ հանձնում
իր մտերիմին՝ Թադեոս Սան Ավետուսյանին:

Մեկնելով Կալկաթայից, հիվանդ վիճակում հասնում է նա
Բոմբեյ, ուր երեք ամիս հետո միայն, մի փոքր ապաքինվելով
դուրս է գալիս օվկիանոս: 1858 թվականին նա հաղիվ կաթողա-
նում է հասնել Շիրազ, որտեղ և կնքում է իր մահկանացուն:
Նույն թվի հունիսի 19-ին նրան թաղում են Շիրազի մոտ Բա-
քաքյոն կոչված սարում, ուր գտնվում են և Հաֆիդի ու Սաադիի
ավանդական գերեզմանները:

Մեռնում է Թաղիադյանը օտարության մեջ, ինչպես եղել
էր իր ամբողջ կյանքում: Մեռնում է ժողովրդի լուսավորու-
թյան իղձը սրտում պահած, իր գաղափարների իրականա-
ցումը չտեսած: Թաղիադյանի մտերիմը՝ Թադեոս Սան Ավետուս-
յանը Կալկաթայից մահարձան է ուղարկում Շիրազ, որը կանգ-
նեցվում է հայոց եկեղեցու բակում հետեյալ մակագրությամբ.

Մեսրոպ Դաւթեան Թաղիադեան
Պերճ վարժապետ մեծ գիտնական

¹ Շահնազարյան-Սարգսյան-«Դիտողագիր», 1893 թ. էջ 261.

Վսեմ քերթող մատենագիր
Հանգիստ առ այս թուխ դամբան
Զքեզ հայոց գիտնոց տաճար,
Պատուասեր է միշտ սիրավառ
Եւ նոր Զուգա և Կալկաթա
Ոչ մոռացեն զքեզ իսպառ:

1858 թիվ, հունիս:

Քակ աշնտեղ, հյուսիսում նալբանդյանը ցավակցական հոգված է գրում թաղիադյանի մասին, բարձր գնահատելով իր տաղանդավոր նախորդին և «Հիւսիսափայլի» միջոցով խնդրում նոր Զուգայի Ամենափրկչյան վանքի միաբանությանը սրբությամբ պահպանել նրա թողած ժառանգությունը:

Սակայն Ն. Զուգայի վանքի կղերականները հեռու էին նալբանդյանի խնդիրը կատարելու գաղափարից:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Հայ գրականության պատմության մեջ թաղիադյանը տեղ է գտել որպես վիպագիր և բանաստեղծ:

Կարգալով «Սոս և Սոնգիպին» Մխիթարյանները նրան անվանել են «Սոխակ Հնդկաստանի»: Թաղիադյանը մեծ նշանակություն չի տվել իր ստեղծագործությունները, համարելով իրեն ավելի գիտնական, մանկավարժ, քան գրող: Սակայն, նա իր ստեղծագործությամբ նշանակալից դեր է կատարել հայ նոր գրականության մեջ, դառնալով նրա սկզբնավորողներից մեկը:

Նրա գեղարվեստական գործերի բնութագրումը տալուց առաջ, անհրաժեշտ է մի երկու խոսք ասել այն դերի մասին, որ ունեցել է «Ազգասէրը» հայ նոր գրականության ձևավորման շրջանում:

Քառասնական թվականներին, մինչև «Ազգասէրը», ինչպես թյուրքիայում, այնպես էլ Հնդկաստանում հրատարակվող թերթերը, իբրև նորություն, տպագրում էին իտալական մանրավիպերից կատարված թարգմանություններ. դրա հետ մեկտեղ հրապարակի վրա երևում էին թափառող մխիթներների կրոնական պրոպագանդան դրսևորող գեղարվեստական այնպիսի գոր-

ծեր, ինչպիսին էր օրինակ «Ուաշնարածին աղջկա երջանիկ մահը», որտեղ կյանքը ներկայացվում էր, որպես հավերժականության մի նախակայան, ուր ամեն ինչ նախապատրաստվում էր մահը երջանիկ զգացումով ընդունելու համար: Գոյություն ունեին նաև «Պղնձե քաղաքի», «Յոթն իմաստասերի» պատմությունները և արևածային մի քանի վեպեր, որոնք նույնպես ոչնչով չէին կարող բավարարել ժամանակի պահանջները:

Թադիադյանը «Ազգասէրն» առաջինն էր այդ շրջանում, որ կրոնա-բարոյական թեմաների փոխարեն զրականություն մեջ առաջ քաշեց ազգային-լուսավորական այնպիսի խնդիրներ, որոնք աբսոլյուտ էին ժողովրդի կյանքը, նրա մտածողությունը և այն նորը, որ պետք է տաներ զեպի նրա հետագա բարօրությունը:

Դեռևս իր կյանքի վաղ շրջանում կատարած ճանապարհորդությունների ընթացքում, ինչպես նշել ենք արդեն, Թադիադյանին հետաքրքրում էին ժողովրդի կենցաղը, զրույցները, երգերը, ասացվածքները և այլն, և այդ ամենը զրի առնելու, զրականության մեջ մտցնելու խնդիրները: «Մեր ազգի բերթողական, այսինքն բանաստեղծական կարողության վերա ի շատե տեղեկություն սիրողանին,—գրում է նա իր «Ազգասէրի» էջերում,—պիտի մեր զրախտի նման Հայաստան գոնե մի անգամ պատած լինին: Թե որ ներկա ևս նստիմ և մեր Հայրենյաց բոլոր շարժողական առիթները մեջ բերել ուղենամ, պիտի համարձակվիմ և սիրելի Ավետարանչիցն իւր գրած չափազանցության ձևն փոխ առնիմ»:¹

Մեր զրականության մեջ Թադիադյանը աշխատում էր մտցնել առաջավոր դադափարներ ու ձևեր, և դա ցույց է տալիս, որ նա ըմբռնում էր արդեն հայ նոր զրականության զարգացման հիմնական տենդենցը, որը պետք է մղեր նրան գեպի համաշխարհային կուլտուրայի ուղիները:

Իր ժամանակին հետաքրքիր նորություն է եղել «Ազգասէրում» տպագրված Թադեոս Խան Ավետումյանի գեղարվեստական քննադատությունը, «Արամայիս» վերնադրով: հեղինակը անվանել է «կեղծարանութիւն, լատ անգլիացուց նովել»: Սա մի փոքր պատմվածք է, գրված աշխարհաբար լեզվով, որտեղ հեղինակը

¹ «Ազգասէր», 1845, էջ 151.

արծարծել է իր ժամանակի համար կենսական նշանակութուն ունեցող ազգային-լուսավորական մի շարք գաղափարներ:

«Արամայիսի» հակիրճ բովանդակութունը հետևյալն է: Հերոսը, վշտացած իր շրջապատից, թողնում է հայրենիքը և ճանապարհվում հեռու Հնդկաստան: Նստելով նալ, նրա առաջ բացվում է անծայրածիր օվկիանոսը, բնությալն շքեղ տեսարանների հետ միասին. «Ողջույն ընդ քեզ, ավետաբեր թռչունդ ծովային, — ոգևորված բացականչում է նա Չայլդ Հարոլդի նման, կանգնած նալի կառամատուլյցում, — և ձեզ, ճյուղ և տերև ծառոց ձեզ ևս ողջույն. հաղարան բարությունք կան ի վերա աշխարհի, որոց հարզն շատ փոքր է հասկաման մարդս, մինչև որ չի ընկման նեղության մեջ»:¹

Արամայիսի խոսքերից երևում է, որ նա ձգտում էր թոթափել իր վրայից միջավայրի կաշկանդող շղթաները: Նա իրեն երջանիկ է զգում բնության ծոցում. բնությունը նրա համար դառնում է սպեղանի, մարդկանցից կրած վշտերն ամոքելու համար:

Նավը հասնում է Հնդկաստան. Արամայիսը հանդիպում է Վահագնին. այստեղից պատմվածքը զարգանում է նոր պլանով: Թախծոտ Արամայիսին հակադրվում է գործնական Վահագնը. հայրենիքից կարված Վահագնը ամբողջապես տոգորված է հայրենիքի վերաստեղծման երազներով, նրան հաջողվում է թոթափել Արամայիսի վրայից բայրոնյան թախիժն ու անգործնականությունը և վարակել նրան իր գործնական ծրագրերով: Պարզվում է, որ Վահագնը մտածում է դպրոցների ստեղծման, տընտեսական հիմնարկների կազմակերպման, արհեստների զարգացման մասին. նա ցույց է տալիս Արամայիսին իր նախաձեռնությունները ստեղծված լուսավորական մի շարք հիմնարկներ, արհեստանոցներ, որտեղ հայ աշակերտները սովորում էին տեսական և գործնական գիտելիքներ: Սա արտացոլում էր հայ առևտրա-արդյունագործական բուրժուազիայի առաջին գործնական քայլը:

Պատմելով հայ ժողովրդի կրած հալածանքների մասին, Վահագնը առանձին նշանակութուն է տալիս նորաստեղծ մտավորականության ունենալիք գերին. «չին կարող գոնե յուրյանց տեսածն ու լսածը գրելով մին գիրք շինեն կամ մեր նախնյաց

¹ «Ազգասէր», 1815, էջ 100:

պես ընտիր գրքեր օրինակեն, որով յուրյանց հիշատակն անմահացուցանեն»¹ Վահագնի քարոզների ազդեցության տակ Արամայիսը որոշում է վերադառնալ հայրենիք, նվիրել իրեն հանրօգուտ աշխատանքի:

Պատմվածքի մեջ ակտիվ դեր է կատարում ինքը հեղինակը՝ Նա զարգացնում է իր հայացքները լիզվի, կրթության, ազդեցության վերաբերյալ, որոնց մենք հանդիպում ենք նրա «Վառն առաջադիմութեան» հոդվածի մեջ: Գաղափարական նորույթների հետ մեկտեղ, այդ պատմվածքն իր հետ բերում է ումանալովի տարերի: Արամայիսը և Վահագնը հեղինակի մտքի արգասիքն են: Հեղինակն առանձին ուշադրություն է դարձնում նրանց խոհերին: Գործողությունը հաճախ կանգ է առնում, տեղի տալով ընդարձակ դատողությունների և գեղարվեստական գործը ստանում է հրապարակախոսական բնույթ: Պատմվածքը, որպես այդպիսին, ունի իր թերությունները. չի պարզվում թե ով է Վահագնը, որն է նրա վերջին նպատակը, ինչպես է նա վերափոխում Արամայիսին և այլն: Այդ ինքնատիպ բնույթի պատմվածքի ժանրը, որպես հրապարակախոսական ստեղծագործություն, մենք հանդիպում ենք 60-ական թվականներին, Շահազիզի և ուրիշների գեղարվեստական գործերի մեջ, որպես իր ժամանակաշրջանի տիպական երևույթ:

«Ազգասէրում» հրապարակված երկրորդ գործը հանդիսանում էր Թաղիադյանի «Վարդգես» վեպը, որն ամբողջապես լույս է տեսնում 1846 թվականին. նրան հաջորդում է «Վարսենիկ» վեպը, 1847 թ. հուլյնպես առանձին հրատարակությամբ:

Թաղիադյանի վեպերը հետաքրքիր երևույթներ են հղել հայ գրականության ձևավորման շրջանում:

Գրականության խոսքն անդաստանում, նրա առաջ քաշած խնդիրները միանգամայն նորություն էին, առաջին հարցը, որ հետաքրքրում է Թաղիադյանին, և որը կազմում է Աբովյանի գրքի հիմնական նպատակներից մեկը, դա ազգային-ժողովրդական թեմաների օգտագործման հարցն է մեր գրականության մեջ: «Պատահեցիք երբեմն լեզուագէտ սիրելույ, — գրում է նա «Վարսենիկ» վեպի առաջաբանում, — զի ընթեռնոյր առասպելս այլ ազգենիս, հարցրի թէ ընդէ՞ր հայերէն ոչ ընթեռնոյր, պատաս-

¹ «Ազգասէր», 1845 թ., էջ 115.

խանեաց, վասն ամենայն գրեանք մեր ծանր են և լուրջ գիտութիւնք են և զբօսանս մասց ոչ տան ցոյց, միայն զքաջալերութիւն քառապէս և ի դժին այգմիք, այնքան ոչ պակասն գրիչը ազգինը¹։ Թաղիադյանի երկու վեպերն էլ վերցված են աղբային-ժողովրդական կյանքից, զրանց մեջ դրսևորվել են 40-ական թվականներին հայ իրականության մեջ խմորվող լուսավորական գաղափարները, նրա ինքնուրույնությունը բարձրացնող, ազգային ինքնագիտակցությունը շեշտող գծերը։

1889 թվականին «Աղբյուրում», ապա 1910 թվին «Հորիզոնում» Դ. Աղայանը խոսում է Թաղիադյանի «Վեպ Վարդգեսի» մասին, հայտարարելով այն մի թարգմանութուն, որը կատարված է ազգասիրական նպատակով։ Աղայանը հիշատակում է Արիւն վերնազրով մի ուսանողին վեպ, թարգմանված իտալերենից, նշելով, որ բովանդակությամբ զրանք համարյա նույնն են. «Ինչու երբեք թարգմանութունը համեմատեցի հայերենի հետ և չգտա ոչ մի բան պակաս կամ ավելի, միայն հատուկ անուններն են հայացված, բնագրից եղել է իտալերենից, որից թարգմանել են յուրա ազգերը միմյանցից։ Գործողությունը կատարվել է վեպերի քաղաքում, որը հայերենում գտնել է Արմավիրը»²։

Որ նման գրքի հանդիպել է Աղայանը, կասկածից վեր է, բայց որ Թաղիադյանը հատկապես այդ գիրքը թարգմանել է և վրան գրել «Ի հնութեանց հայրենեաց փոխեաց յարդի Մ. Դ. Թաղիադեան», դա պետք է կասկածանքի տակ առնել։ Աղայանի հիշողության հիման վրա վերնագրված այդ գիրքը առայժմ մեր ձեռքի տակ չունենալով, մենք փորձում ենք հենվել իրեն թաղիադյանի բերած փաստերի վրա, ցույց տալու համար, որ Թաղիադյանը նպատակ է ունեցել գրել ազգային վեպ, օգտագործելով ժողովրդական ավանդությունը։ Իր «Վեպ Վարդգեսի» համար Թաղիադյանը գրել է մի առաջաբան, որտեղ պարզվում է, որ նա իր շրջագայությունների ընթացքում հանդիպել է Վարդգեսի և Երվանդի զրույցի մի նոր վարիանտին, որի մասին նա բավարարվում է հետևյալ հայտարարությամբ. «Շատ միայն զայս համարեա ծանուցանել թէ կարի նոր օրինակ իմն ձեռնալ

¹ «Վեպ Վարդգեսի», 1847 թ., Առաջաբան։

² «Հորիզոն», 1910, էջ 169։

մտաց պատմութեան մանկան Վարդգէսին տեսնոյ Տուաց»։ Այնուհետեւ նա շարադրում է իր գտած վարիանտի բովանդակութիւնը. այդտեղից պարզվում է, որ այդ վարիանտը մշակման ենթարկված մի գործ է եղել ավելի «քերթողական» բնույթի, քան «պատմական»։ Դրա համար էլ, ինչպես ասում է ինքը Թադիադյանը, Երվանդը ներկայացված է այնտեղ «որպէս ոչ ծնունդ աստուծոյ և ոչ մնունդ ի դայլոց»։ Ղա նշանակում է, որ նա դուրս էր եկել իր այդ մշակման միջ առասպելական ձևից և մոտեցել իրական մարդուն։ Այնուհետեւ Թադիադյանը իր առաջաքանում քննադատութեան է ենթարկում այդ սկզբնաղբյուրը տեսնելով նրա մեջ հակասութիւններ, որոնք ըստ նրա թոււացնում են վիպական կողմը։ «Սկիզբն պատմութեան բացեալ ի վերայ բազմահառաջ վտակացս Երասխից, արդարեւ թուացողական իմն է, ոչ ուրեք պատահեցան ընթեռնուլ թէ սակայն վէպի իրիք կամ առասպելք այսքան ցաւաղինս երևեցին ընթերցողին, ի գլուխ հոգոց մեծութեան»։ Իր թերութիւններէ հետ միասին Թադիադյանն այդ զրկած վիպական շարադրանքը համարել է մեր հայրենյաց հնութիւնների մեջ ազգային ուղին արթնացնող գոհարներից մեկը. «Մին տողն ի սմանէ,—գրում է նա իր առաջաբանում,—շատ արժին դարթուցանել զողին քաջացն Հայկազունեաց, որոնք յավէտս պէտս ունին քան զհազար մատեան վեհերոտացն»։ Այս խոսքերն ինքնըստինքյան բնորոշում են թեմայի խիստ կարևորութիւնը Թադիադյանի համար և ցույց են տալիս, որ նա նպատակ է ունեցել վերարտադրել անցյալի այն երևույթները, որոնք կապվում են ժամանակի առաջավոր գաղափարների հետ։ Այդ պատճառով, որպես ուղեցույց, նա ընդունում է հետևյալ բնաբանը, որ «ճշմարիտ ազգասէրին է օրինակ քաջի գործոց նախնեաց զորդին որդեոց դարթուցանել ազատութիւն հայրենեաց»։

Որ այդ սկզբնաղբյուրն իսկապես եղել է Թադիադյանի ձեռքի տակ, զա երևում է նաև «Ազգասէրում» տպագրված մի փոքրիկ նամակից. խոսքը վերաբերում է «Արարատյան ընկերության» նախագահ Մանուկ Զորաբյանի գրութեանը, որը խիստ հավանելով վեպը, թերթի միջոցով խնդրել է Թադիադյանին ծանոթացնել ընթերցողներին այդ հույժ հետաքրքիր ավանդութեանը, Թադիադյանը պատասխանել է նրան հետևյալ խոս-

քերով. «Յարգոյ համապատասխանեոյ և նովաւ պատուելի Ազգիւ-
 ընդհանրապէս յայտ լիցի, զի որպէս ընթերցողն նոյնպէս և
 զտպագիրն «Վէպին Վարդգեսի» քաջիկ ճանաչէի զօգուտն մեծ-
 որ ի վճիտ հանգամանաց անտի գիւտոյ և գրութեան նորա, բայց
 զարդիս ոչ կամեցայ տալ, քանզի գրեա թէ բոլոր կենօք աստան-
 դական բոլոր գրութեան իմ օրագրականք են, որոց մեծապէս անիրաւ
 էի, եթէ զամենայն հատուած առ հատուած բանայի և դնէի զա-
 ռաջեաւ»¹ Թաղիադյանի խոսքերից պարզվում է, որ նա մի քա-
 նի անգամ օժանդակութիւնն է խնդրել օրագիրը տպագրելու, սա-
 կայն դա մնացել է անհետեանք. «արդ ևս ի նոյն կանի կամ-
 եթէ սիրելի իցէ պատուելի ազգի իմում տեղեկանալ հանգամա-
 մանաց Վարդգեսի և սկզբնատարերաց ազգային նշխարաց, ցա-
 նելով աստ և անդ, էջս ազգասիրին, այսօրինակ, ուրեմն, շնորհ-
 արասցէ մի կամ միւս հղանակաւ զտպագրութիւնն և նորի մեջ
 քաջալերս մատուցանել և անդուստ տեղեկանալ, ապա թէ ոչ
 համբերեսցէ մինչև որ ես հարստացեալ և եթէ մնասցեմ, նոյնը
 ինչ որ և այս եմ, տպեցից քանդի, թեպէտ և ոչ հարստացայ ես
 ոչ գիտեմ, բայց լսեմ, որ ասեն թէ ճոխութիւն փոփոխէ զբնու-
 թիւն»²,

Այժմ մեզ հետաքրքրում է մի հարց, թե ինչ ձևով է հա-
 սել Թաղիադյանի ժամանակակիցներին Վարդգեսի և Նրվանդի
 վերաբերյալ եղած այդ ավանդութիւնը:

Նրվանդ «Սակավակյացի» մասին եղած պատումը կազմում
 է մեր վիպասանության հետաքրքիր էջերից մեկը: Հայ ժողո-
 վըրդի հիշողության մեջ մնացել է անօրինական ճանապարհով
 հայոց թագավորական գահը բարձրացած Նրվանդի զրական կեր-
 պարը, որն իր առասպելական ձևի մեջ ներկայացվել է նրա պե-
 տական գործունեության ասպարեզում ցուցաբերած զրական գծե-
 րը: Խորենացու տված պատմութիւնից հետո Թաղիադյանի բե-
 րած նոր տղբյուրը ցույց է տալիս, որ այդ զրույցը հետագա-
 յում ենթարկվել է մեծ փոփոխութիւնների, կրելով իր ժամա-
 նակի ազդեցութիւնը: Այդ զրույցը, որ կապված է Տուհաց գա-
 վառից գաղթած մանուկ Վարդգեսի վեպի հետ, հատկապէս այդ
 մասում կրել է մեծ փոփոխութիւններ: Վարդգեսի մասին եղած
 զրույցը կապվել է իր ժամանակին գոյութիւն ունեցող Թաիա-

¹ «Ազգասէր», 1843 թ., էջ 194—195:

² Նույն տեղ:

ռող սյուժեների հետ, որոնցից մեկը պետք է համարել Արի-
լոն-Արելին, գաղափարական ավազակի մասին եղած զրույցը:
Մնանուն հեղինակի վերաբերած սյուժեն հավանաբար պետք
է կադմված լինել այդ թափառաշրջիկ սյուժեների հետ պատմվող
ընդհանուր զրույցներին:

Վեպն սկսվում է Տուհաց երկրի իշխան Վարդգեսի երեան
գալով: Գիշերը հասնելով Արմավիրի պատերի տակ, թափառելով
Քասախ դեռի ափին, նա նկատում է Արմավիրի իշխաններից
մեկին, որին հետևում են ավազակները նրան սպանելու զիտա-
վորությամբ: Վարդգեսն ազատում է իշխանին, սակայն նրանից
որևէ հատուցում չստանալով, չարանում է և որոշում է միանալ
'նույն ավազակներին'՝ մարդկային չարությունը պատժելու հա-
մար: Այդ ժամանակ Արմավիրի իշխանները դավադրություն են
կազմակերպում Երվանդ Թագավորի դեմ և իրենց չար գործը
իրականացնելու համար կապ են հաստատում Արմավիրի շուրջը
պտտվող ավազակների հետ: Աչքի ընկնելով իր ուժով ու ճար-
տիչությամբ, Վարդգեսը շահում է ավազակների վստահություն-
ընդ և մասնակից դառնում իշխանների դավադրությանը, սակայն
այդ մասնակցությունը նրա համար դառնում է միջոց, պատժե-
լու չարագործներին և պաշտպանելու հայոց պետությունը կոր-
ծանումից: Հանդես գալով երկու անուններով՝ Արեղին և Աղվա-
նից իշխան Չուրան, նա կարճ ժամանակում կարողանում է
մաքրել երկիրը ավազակներից և մերկացնել դավադիր իշխան-
ներին: Կանգնած թագավորական ատյանի տոջե, նա պատմում
է հայոց պետության շահի համար իր գործած քաջությունները:
Թագավորը հիանում է ճարպկությամբ և տալիս է իր բույր-
հայկանուշին նրան կնության: Երկրում նորից վերականգնվում
է խաղաղությունը, Վարդգեսը դառնում է մի շարք գավառնե-
րի բեռնի:

Վեպը զարգանում է երկու պլանով. առաջին պլանի վրա
երևում է Վարդգեսի հանրօգուտ գործունեությունը. այստեղ
հանդես է գալիս պետականության շահի պաշտպանության հա-
մար իր կյանքը զրած անհատը: Գործին օգնում է Վարդգեսի
մեծ շնորհը, որը ծառայեցվում է միայն բարիք գործելու հա-
մար: Չուրանայ գործը, ասում է իր մասին Վարդգեսը, — բա-
րիք էին և փառացիք քան կիսադից, Հայկազանց նովաւ ուսայ

զբարին և փառացին նովաւ խրախոյս բարձի առ լաւն դերա-
գոյն: Սիրտ նորա ազատ ի կրից կամակորաց՝ միշտ մեծամեծա-
խորհեր և սքանչելիա: Ոչ երբէք խիթացաւ, յանձն առնուլ ճգունս
ի վերայ ճանապարհին առաքինութեան և ամենայն վշտաց տա-
րաւ ի սրբութիւն անմեղ արտասուաց բազմաց»:¹

Պետութեան շահը առաջ տանելու համար նա իր անձը են-
թարկում է բազմաթիւ գրկանքներէ: Հեղինակն այստեղ ընդ-
գծում է հատկապես նրա բարձր գիտակցությունը, որը մեծա-
պես օգնում է Երվանդ թագավորին, նրա պետությունը պահպա-
նելու գործում:

«Ի բազում պատերազմունս միայնակ քաջացայ,—ասում է
Երվանդ թագավորն իր մասին,—առ ամենայն վտանդ անձին
անդալ ի խռումնս թշնամեաց խոնեցայ գործ զմազդեղանց գոր-
ծեցի, յահարկութիւն լսողաց, և ոչ ուրէք այնքան զդրդեցայ
յանաստան մտաց իմոց, որքան ի գահոյս միահեծան տէրութեան
իմոյ»:²

Պատերազմում փառք վաստակած թագավորը պետութեան
դեկավարման մեջ հանդես է բերում թուլություն. նրան անհրա-
ժեշտ է դառնում բանական ուժ երկիրն անվտանգ պահելու հա-
մար. ահա այստեղ է, որ նրան օգնութեան է գալիս Վարդգեսի
շնորհը: Սյուսեղ հանգես է գալիս ուժի և բանականութեան
համագործակցութեան հարցը: Վարդգեսի միտքն օգնում է թա-
գավորին երկիրը վտանգից ազատելու և խաղաղությունը սահ-
մանելու համար:

Վարդգեսը չարությունը փորձում է հաղթահարել նույն
բանականութեան ուժով. նա փորձում է վերափոխել նույնիսկ
ավազակներին, խորհուրդ տալով նրանց թողնել ավազակություն-
ը, բաժանել հարստությունը աղքատներին և ապրել համեստ
աշխատանքով: Վարդգեսի հումանիզմը հասնում է իր բարձր
աստիճանին, երբ նա խորհում է բարու և նրա առավելություն-
ների մասին, սակայն նա դաժան է չարութեան հանդեպ: Պե-
տութեան դեմ գործող իշխաններն իրենց գործով ցույց են տա-
լիս, որ այդ չարությունը ինքնանպատակ է, «բայց արդ՝ զի՞նչ
ի՞նչ իցէն արարք մեր,—քննադատում է իշխաններից մեկն իր

¹ «Վէպ Վարդգիսի», 1846 թ., էջ 147:

² Նույն տեղ, էջ 119:

համագործակիցներին,—եթէ ոչ դատարկութեամբ անցուցանե
ղկեանս մեր ի գաւիթս մհհնից, ի դրօսանս հրապարակաց ի
վայելչութիւնս պարտիզաց, ի գիներբուս և յանառակութիւնս,
որոնց ոչ գոն թիւն¹:

Գորել իշխանը, որը գործում է պետական դավաճաններին
հետ, չունի ոչ մի նպատակ, նա ցանկանում է քայքայել ամեն
ինչ, լոկ քայքայելու համար. Ատոկ իշխանը ետ է նայում,
զգուս է արած վատ գործը և Մակընթի նման այլևս դուրս գա
լու ճանապարհ չտեսնելով, առաջ է գնում թեկուզ կործանվելու
պայմանով: Թաղիադյանն այստեղ ցույց է տալիս, թե չարիքն
իր արմատներին մեջ է փտած, և որ անբարոյականությունն ու
ինտրիգները քաղաքականապես քայքայված իշխանների մոտ ա
վելի վտանգավոր են դառնում, քան սովորական ավազակներին
սովորական արարքները:

Բնագատելով ավազակներին և Արմավիրի իշխաններին,
Թաղիադյանը նրանց պետ վայելունու բերանով մի շարք ճշմ
մարտություններ է հայտնում, որով աշխատում է ցույց տալ
առաջինների առավելությունը այդ իշխանների հանդեպ: Անա
հիտի տաճարում վարդգեսի հետ ունեցած խոսակցության ժա
մանակ վայելունին պատմում է, թե ինչպես ինքը մինչև ավա
զակ դառնալը քրմերի մոտ ցանկացել է գիտություններ սովոր
ել, սակայն կյանքի աղտեղությունները, չարիքները նրա մեջ
առաջացրել են ատելություն և հիասթափություն այդ իրակա
նության հանդեպ, նա թողել է այդ հասարակությունը, բարձր
համարելով դրադիմի ավազակությամբ՝ չարիքին չարիքով պա
տասխանելու համար: Վարդգեսի միջոցով Թաղիադյանն աշխա
տում է համոզել վայելունուն և ավազակներին հակառակը, որ
չպետք է հաղթահարել չարիքը չարիք գործելով, այլ պետք է
դրանից բարիք ստեղծել, ինքը վարդգեսը միանալով ավազակ
ներին, ինչպես տեսնում ենք, մտածում է միայն այն մասին,
որ ավազակ լինելու հանգամանքը պետք է օգտագործել ընդհա
նուրբն օգնելու համար. անձնականը նրա մոտ փոխվում է հա
սարակականի—«սրիկա էի, երևելի իմն դիտավորութեամբ»
պարծենալով հայտաբարում է նա թագավորական տոյանի առջև:

Այդ ավանդավելի մեջ Թաղիադյանը կերտել է աղգային

¹ «Վէպ վարդգեսի», էջ 61.

Ֆինքնաճանաչման ոգին ըմբռնած հերոսի կերպարը՝ Վարդգեսը
սովորական կերպար է. նրա մեջ իր գաղափարների հետ
միասին դրսևորվում է նրա անձնական կոնֆլիկտն իրակա-
նության հանդեպ: Նա միաժամանակ հանդես է գալիս որպես
թախժոտ և վշտոտ երիտասարդ. սակայն ապավինած իր սեփա-
կան ուժին և բանականության, նա վեր է բարձրանում այն
միջավայրից, որտեղ նրան ամեն ինչ փոքր է երևում, չնչին և
անհանդուրժելի: Նրա մեջ առաջ է գալիս ոչ միայն այդ միջա-
վայրը քննադատելու, ապա և այն լքելու և նրանից մեկուսա-
նալու տրամադրություն. նա պահանջ է զգում նաև հաղթահա-
րելու իրականության այդ հոռի կողմերը. «անշուշտ որպէս և կեն-
դանիս եմ, անձամբ զանձն վարձեցից՝ ի չար հայս մշակութիւն
կամ պարտաւորեցից զապագայս ազգաց պատուել զայն անուն
զոր գործք իմ մեծացուցանիցեն ինձ»¹ Այստեղ հեղինակը թո-
թափում է Վարդգեսի վրայից Հարության վերաբերման, մտցնում
կյանքի մեջ՝ տալով նրան պայքարի նոր ունակություններ:

Վեպում Վարդգեսի հետ կապված է Հայկանդուխտի կեր-
պարը. ընդառաջելով եղբոր՝ Երվանդ թագավորի պետական-քա-
ղաքական շահերին, նա պատրաստվում է ամուսնանալ Տուհաց
երկրի Ասենակ իշխանի հետ. սակայն նա սիրում է Աղվանից
իշխան Զուրանին և իր հոգու խորքում ըմբռնատանում է եղբոր
դեմ, առաջնությունը տալով իր բնական զպացումներին: Հայ-
կանդուխտը կորցնում է իր հանգստությունը, նա ապրում է հո-
գեկան ծանր դրամա. «Ողիք քաղեցան նորա, վերացան ուրախու-
թիւնք հրճուանաց նորա, աչք արտասուօք ծովացան: Դալկու-
թիւն օրըստօրէ բոյն դնէր ի վարդենի ծնոտս նորա»²

Հայկանդուխտը դուրս է գալիս կաշկանդող բարոյական
նորմաների դեմ և համարձակություն է ձեռք բերում իր զգա-
ցումներն արտահայտելու՝ սիրած էակի առջև, ապա հրապարա-
կորեն պաշտպանելու նրան: Դեպքերի ընթացքը Հայկանդուխ-
տին հասցնում է իր նպատակին. նա ամուսնանում է
Վարդգեսի հետ: Թաղիադեյանը բավական տեղ է տալիս իր
Վեպի մեջ Վարդգեսի և Հայկանդուխտի սիրո նկարագրու-

¹ Նույն տեղ, էջ 37:

² Նույն տեղ, էջ 84:

թյանը, Որոշմամբ և գտնված են գեղեցիկ պատկերներ, որոնք շաղկապում են հեղինակի խոհերն ու զգացումներն իր հերոսներին հոգեկան ապրումների հետ: Բնության նկարագրությունների մեջ հեղինակը ներշնչվում է իր հերոսի զգացումներից: Վնավ բացվում է գիշերային լուսության մեջ. այդ պահին նկարագրությամբ հեղինակը նախապատրաստում է հերոսի տագնապալից ապրումները: Վեպի կառուցվածքը անմշակ է և թույլ, հավատարիմ մնալով սկզբնաղբյուրին, հեղինակը պահպանել է վերջինիս պրիմիտիվությունը: Վարդգեսի հոգեվիճակի արագ փոփոխությունն երբեմն դանդաղեցնում է գործողությունների օրգանական զարգացման ընթացքը: Զի զրսևորված Երվանդ թագավորի պատմական և հասարակական տիպարը: Մի քանի խոսքով բնութագրելով թագավորի արժանիքները, հեղինակը դրանով էլ բավարարվում է. նրան չի ներկայացնում իր միջավայրի բարդ հակասությունների մեջ, այն միջավայրի, որտեղ Երվանդը, ըստ ավանդավեպի, հանդես է գալիս իր քաջագործություններով, դավադիրների դեմ մղած պայքարով, իր քաղաքագիտությամբ, կուլտուրական շինարարությամբ, Երվանդակերտի կառուցումով և այլն: Վեպում չի տրված Արմավիրը, նրա ներքին կյանքը և ժամանակի քաղաքական այն իրադրությունը, որտեղ ծավալվում են դեպքերը, որտեղ գործում է հերոսը:

Հետաքրքրական իդեաներ է պարունակում մի տարի հետքերած նրա «Վարսեհիկ» վեպը: Թաղիադյանը փորձ է կատարում գրականությունը ավելի մոտեցնելու ժողովրդի կյանքին և նրա մտածողությանը: Այս անգամ նա իր վեպի նյութը դարձնում է ազգային ժողովրդական սյուժեներից մեկը, որը իր մի քանի վարիանտներով մշակվել և տարածվել է ինչպես մեր գրականության, այնպես էլ օտար ազգերի գրականությունների մեջ: Այդպիսի օրինակ մեզ մոտ կարող է ծառայել Դ. Աղայանի «Անահարկորության մասին, նա հիշատակում է այն փաստը, որ ինճատ երևիցի պատմությունն զիտացե, զի զոր գրեմ և տպեմք ըստ արդի հանգամանաց տնօրինեմք, ապա թէ ոչ միայն անցք վերադրին յատրնուշ բաւական լինէր միւս ևս հատորոյ»¹

¹ «Վէպ Վարսեհիկ», էջ 7.

Ժողովրդից քաղած այս դրույցի անցքերը տեղի են ունենում Աղվանից աշխարհի Պարտավ քաղաքում: Աղվանից Թագավոր Վաչագանը սովորություն ունի գիշերները ծառած դուռս դալ քաղաք, ծանոթանալու ժողովրդի ներքին կյանքին: Մի գիշեր նա լսում է պանդուկում իջևանած երեք աղքատների խոսակցությունը: Մեկը դրանցից ցանկություն է հայտնում Թագավորի սպարապետը դառնալ, մյուսը՝ նրա խոստովանահայրը, երրորդը ցանկանում է ոչ այս և ոչ այն, այլ միայն Թագավորի աղջիկը, առանց որևէ շնորհի: Մյուս օրն օտարականները կանչվում են Թագավորական ատյան. Թագավորի հրամանով նրանք կրկնում են իրենց ցանկությունը. ի դարձանս բոլորի, Թագավորը կատարում է երեքի ցանկությունն էլ: Գուրգենը Թագավորի աղջիկ Վարսենիկի հետ հեռանում է քաղաքից, հասնում Միանդուար քաղաքը, ուր նրանք ապաստան են գտնում մի ծեր կնոջ հարկի տակ: Գուրգենը մշակությամբ է պարսպում, իսկ Վարսենիկը՝ ձեռագործով. նրա անունը տարածվում է ամբողջ քաղաքում: Մի օր Գուրգենն անհետանում է: Պարզվում է, որ նա ընկել է դեերի որոգայթը: Վալետ Թագավորի օգնությամբ Վարսենիկը ազատում է Գուրգենին, նրանք տիրանում են դեերի հալածությանը, կառուցում են մեծ հյուրանոց՝ աղքատների համար:

Ինչպես Աղայանի «Անահիտը», այնպես էլ Թադիսդյանի այս վեպը վերցված լինելով հայկական հողի վրա պատմվող արևելյան շրջիկ հեքիաթներից, ցույց է տալիս ժողովրդի այն իմաստությունը, թե երջանկությունը հիմնվում է ոչ թե հարստության, այլ փոխադարձ սիրո, համեատության և ազնիվ վաստակի վրա: «Աշխատութիւն պարպե աստուծոյ էր բնութեանս և յառաջ քան զանկումնս նախահարց մերոց»,—ասում է Վարսենիկը Գուրգենին, «ուր թէև քրտամբք երեսաց ուտել զհաց մեր ժառանգութեամբ ձգեցաք առ մեզ յետ յանցածն»:¹ Աշխարհում չկա ոչինչ հավիտենական, ասում է Վարսենիկը իր հոր հետ ունեցած խոսակցության ժամանակ. ըստ նրա՝ իշխանները, նախարարները, նույնիսկ Թագավորները հաճախ սնանկացել են, իսկ սեփական աշխատանքով ապրող մարդիկ կաբողացել են միշտ էլ ազատ մնալ կործանումից: Ըստ Վարսենիկի՝ աշխատանքը ազնու-

¹ Նույն տեղ. էջ 83.

վացնում է մտրդուն, հաղթահարում նրա առջև եղած ամեն մի զգվարություն, հեռու պահում նրան մոլորություններից, կրքերին ծառայելու, ստորաքարշ, վտանգավոր կյանքից: Այդպիսի տիպերից մեկն էր Գուրգենը. «դի փոյթ է յինչից զուրկ էր և զգեստք զատառոտուն շուրջ զիւրև զեռես ունէր զայսմ ամենայն կատարելութիւնս մտաց և մարմնոյ, ընդ որս հայել անպամ ամալէր աշխարհ: Զիս սկայ. անձնեայ էր զնա զեղապատշաճ անդամօք հաստաթիկունք և լայնակուրծք, յորում խորհուրդք բարեպաշտութեան և անպարապ գործունէութիւնք հանձարոյ ելեկլս առնէին վեհութիւն իմն առ ընդ խոնարհութեան երևէր միշտ ի գէմս նորայ քաջ ի սիրտ և ամօք միշտ ի բանս իւր»¹

Գուրգենը ոչ միայն կարողանում է ոչնչացնել դեներին, այլև իր սեփական փորձով օրինակ է հանդիսանում նույնիսկ վալետ թագավորին, որը ամօթի մեծ զգացումով խոստովանում է իր չարությունը և խոնարհվում Գուրգենի մեծ կամքի և արդար մտքի առջև: Վաչագան թագավորը քննադատում է ինքն իրեն, ընդունելով, որ իրենք իշխաններ լինելով՝ մտածում են միայն իրենց անձնական շահի մասին: Գուրգենի խորհուրդները հետևանքով երհտասարդ Հասոն թողնում է իր մոլորությունները և հետագայում վայելում արդար վաստակի արդյունքը: Ըստ հեղինակի, հաղթանակում է նա, ով ունի իր մեջ աննկուն աշխատասիրություն, ուժեղ կամք և համբերատարություն: Այստեղ թաղիադյանն իր հերոսի մեջ դնում է ժողովրդի իմացությունը, այդ իմացությունը նրա մոտ ձեռք է բերվում կյանքի փորձություններից: Հարստացած Գուրգենը մտածում է ոչ թե օգտագործել իր ունեցածը սեփական շահի համար, այլ՝ վերացնել աղքատությունը, վերջ տալ մոլորություններին, մարդկային կրքերի տիրապետությանը:

Թաղիադյանի վեպը համեմատված է ժողովրդական ասացվածքներով, համեմատություններով և երգերով: Նրանք դառնում են մի տեսակ իդեալական հանգույցներ, որոնց վրա հեղինակը բեռնում է ընթերցողի ուշադրությունը: Զափածոյով արտահայտված հեղինակի խոհերն ու դատողությունները պտտվում են կյանքի հակասությունների, մարդկանց իշխանամոլության, շահասիրության և այլ հարցերի շուրջը: Վարսենիկի բերանով թա-

¹ Նույն տեղ, էջ 71:

ղիադյանը խորհուրդ է տալիս մարդկանց չտարվել հարստությամբ, ոսկու փայլով, այլ ապրել համեստ աշխատանքով և զարգացնելով այն արժանիքները, որոնք կարող են զարդարել նրանց կյանքում:

Թաղիադյանի վեպերի հիմնական ոճը ումանտիզմն է, սակայն նրա մոտ գրեկորվում է մեր գրականության անցման շրջանի առանձնահատկությունը կազմող մոմենտներից մեկը, այն է՝ ումանտիզմից ռեալիզմին անցնելու ձգտումը, իսկ դա պայմանավորված էր նրա մոտ ժողովրդական մտածողության տարրերի առկայությամբ, ինչպես նաև նրա քննադատական վերաբերմունքով հանդեպ շրջապատի իրականությանը: Այս հանգամանքն ավելի ցայտուն կերպով երևում է նրա բանաստեղծությունների մեջ, մասամբ և «Ճանապարհորդութիւն ի Հայս»-ում երբեմնակի երևացող վիպական նկարագրությունների մեջ: Ինչպես «Վարդգես» վեպի, այնպես և «Վարսենիկի» հերոսները ումանտիկական կերպարներ են, նրանք արտահայտում են հեղինակի գաղափարները, միաժամանակ հարադատ մնալով ժողովրդական մտածողությանը:

Ինչպես առաջին, այնպես էլ այս վեպն ունի զգալի թերություններ. Գուրգենը և Վարսենիկը ներկայացված են սխեմատիկ, առանց բնավորության բազմազան գծերի, հոգեկան բարդ աշխարհի, այն միջավայրի, որի մեջ ապրում և գործում են նրանք: Ինչպես Գուրգենը, այնպես էլ Վարսենիկը շարունակ դատողություններ են անում, առանց պատճառաբանելու իրենց կատարած քայլերը: Վեպի սկիզբն ավելի լավ է, քան նրա շարունակությունը. այստեղ ներկայացված է Վաչագան թագավորի պալատը, նրա դիրքը թագավորական ատյանում, ապա նրա խոհերը և այլն: Թագուհու և եպիսկոպոսի խոսակցությունը Թաղիադյանը աշխատել է ընդգծել հոգևորականության աննշան դերը քաղաքական պետական հարցերում:

Թաղիադյան արվեստագետը հանդես է եկել նաև «Ճանապարհորդութիւն ի Հայս» պատմադրական նշանակություն ունեցող գործի մեջ, ներկայացնելով 19-րդ դարի առաջին քաղաքի Հայաստանի քաղաքական-հասարակական միջավայրը, դոյություն ունեցող բարքերը, ծեսերը, սովորությունները, նա միաժամանակ կերտել է ընդհանրացված կերպարներ, դրանց մեջ

ներկայացնելով ժամանակի հասարակական նոր դադափարներով տոգորված, ձևավորվող անհատին, հանձին իրեն՝ պատանի հեղինակի։ Առանձին վարպետությամբ Թաղիադյանը ներկայացնում է այդ նոր անհատի մղած պայքարն իր միջավայրի դեմ։ ապավինած սեփական ուժին, նա դուրս է գալիս մաքառելու դժվարություններով լի կյանքի դեմ, ոչ միայն կրթվելու, ինչպես սիրում էր ասել Աղայանը հետագայում, այլև կրթելու համար, ոչ միայն քննադատելու իր միջավայրը, այլև պայքարելու նրա դեմ նոր ուղիներ հարթելու համար։

«Ճանապարհորդութիւն ի Հայս»-ի մեջ կան հաջող գեղարվեստական նկարագրություններ, պորտրետներ, ինչպես օրինակ՝ Սևանի անապատում ապրող ճգնավորների կենցաղը, սուրբ Հակոբի վանքում իր գլխով անցած դեպքերը, ապա Բագրևանդացու, սուրբ Հակոբի վանքի վանահայր վարդապետի կերպարները և այլն։ Այս գործի մեջ դրսևորվում է Թաղիադյանի միշտ կենդանի, աշխույժ հուժկու, ինչպես ընդհանուր երևույթների, այնպես էլ առանձին անձնավորությունների նկատմամբ։

Պ Ո Ե Ջ Ի Ա Ն

Թաղիադյանի չափածո գործերից հրատարակվել են «Թուրակ Թաղիադեան», «Նղերերգութիւն ի Թանգա, Թաղիադեան» ժողովածուները։ առաջինն իր կենդանության օրով և երկրորդը մահից հետո՝ 1893 թ. Հովհ. քահ. Մկրչյանի հրատարակությամբ։ Բացի այդ ժողովածուներից հրապարակի վրա կան «Սոս և Սանդիպի» պոեմը և «Ազգասէր»-ում տպագրված մի շարք բանաստեղծություններ։

Հրապարակի վրա իշխողը գեռևս Մխիթարյան պոեզիան էր։ Հիմնականում ունենալով կրոնա-բարոյական բովանդակություն, գասական պոեզիայի տարրերով համակված հայրենասիրական տրակտատների, ձոների և ուսմանտիպական շղարշով պատած «գեղոնների» կողքին արդեն նկատվում էին կյանքի ճանաչողության և այն վերարտադրելու փորձեր, ազգային կյանքի և նրա նոր պահանջների ըմբռնում, որ արտահայտվում էր հատկապես Ղ. Վանանդեցու և Ալիշանի ստեղծագործություններում։ Բայց և այնպես Մխիթարյանների պոեզիան անկարող գտնվեց

դուրս գալ քրիստոնեական մորալի նեղ շրջանակներէց, արտահայտելու համար ազգային, հասարակական զարթոնքը:

Այդ միախառնում 30-40-ական թվականներին հանդես եկան երեք աչքի ընկնող դեմքեր՝ Ալամդարյանը, Թադիադյանը և Արուստիանը: Նրանց պոեզիան իր հետ բերում էր նոր և հետաքրքիր երևույթներ, որոնք պայմանավորված էին հասարակական-տնտեսական կյանքում հանդես եկող նոր տեղաշարժերով:

Այս պոեզիայի առանցքը սկսում է դառնալ հասարակական հատը, և նրա, տակավին թույլ, կոնֆլիկտը իր միջավայրի հետ: Այդ կոնֆլիկտը բանաստեղծի մեջ առաջացնում է երկու տարբեր զգացումներ. թախծի, հիասթափության, և մյուս կողմից՝ քննադատության ու պայքարի տրամադրութուն՝ այդ իրականության հոտի կողմերի դեմ և այստեղից էլ ապագայի նկատմամբ հանդես եկող վառ երազանքներ ու առաջավոր ձգտումներ, որոնք դրականությանը տալիս էին ակտիվ դեր, հասարակական կյանքը վերափոխելու գործում:

Սակայն մեկ այստեղ զբաղեցնողը ոչ թե Արուստիանի և Ալամդարյանի բանաստեղծութուններն են, այլ Թադիադյանի չափածո գործերը:

1847 թ. հրապարակի վրա երևում է «Թուրքական Թադիադեան» ժողովածուն. հետո Հնդկաստանից հայացքը սևեռած հայ-բենիքում խմորվող հասարակական նոր տրամադրութուններին, Թադիադյանն իր հրապարակախոս ձայնին միացնում էր բանաստեղծական խոհերն ու ապրումները: Այդ ժողովածուին կըցված առաջաբանում բանաստեղծը պատմում է, թե ինչպես հայրենիք դառնալով, նա իր հետ տարել է երկու երգախոս թրուհուն. մեկը զրանցից այն էր, որ պատրաստ էր վսեմ ոճով երգելու իր հայրենիքի պատմական անցյալը, նրա զիցարանությունը, բայց չհարմարվեց ժամանակի պահանջներին և դատապարտվեց մահվան. «Պապկայն սիրայրեաց, որ երգէր միշտ Վարդան Գեղեցիկ և Վաստուածա հայրենեաց իմոց, մեռաւ և մատնեցաւ ի խարոյկս դադարաց, ըստ որում համարեցաւ թէ հնդիկ էր յազգէ Բրամանաց»:¹ Մյուս թուղունը, որին բանաստեղծը պահում էր իր անձնական հույզերն ու ապրումները վերաբրտադրելու համար, դարձավ միակ միջոցը, կապելու աշխարհի հետ:

¹ «Եղեկերդութիւն» յօրհաս Թանգայ Թադիադեանի, 1893 թ. էջ 90:

«Մնաց ի միջիթարութիւն ինձ միայն այս թութակ,—գրում է նա իր առաջարանում,—որ այն ինչ ձագ անփետուր ի ճիրանաց արծուոյ մազապուրծ ապրեալ՝ միշտ կրէր յերկիւղ մահու ի սրտի իւրում, ուստի համարձակ խոսել ոչ կարէր: Ջանացայ ուսուցանէլ նմա երգս ազգի, բայց եթէ երգք նորա անախորժ ումեք թութիցին, այն իմ են մեղք, ոչ նորա»¹

Բանաստեղծն այս տողերով մի կողմից ավետում է իր պոեզիայի բերած նորությունը, մյուս կողմից փորձ անում այն պաշտպանել դասական պոեզիայի երկրպագուների և էջմիածնի կղերականների հալածանքներից: Վստահ իր ուժերին և հավատարիմ իր դավանանքին՝ բանաստեղծը քաղաքացիական իրավունք է տալիս իր քնարին հրգելու իրականությունը պատկերող բազմազան երգեր:

Ինչ նորություններ է բերում այդ ժողովածուն: Նախ և առաջ այնտեղ ձևավորվում են հետագա պոեզիայի առանձնահատկությունը կազմող երկու հիմնական մոտիվներ. աղգային քաղաքական լիրիկայի նմուշներ, որոնք խորապես զարգացան Պատկանյանի և Նալբանդյանի քնարի մեջ, դառնալով մեր պոեզիայի հատկանշական գծերից մեկը, ապա՝ հասարակական խոհական մոտիվներ, որոնք զբաղնորում էին պոետի ապրած կոնֆլիկտը իր ժամանակի իրականության հետ: Թաղիադյանի քնարի այդ նոր մոտիվները հասկանալու համար պետք է դիմել նրա ժողովածուի մեջ գտնված չափածո գործերին:

«Թութակ Թաղիադեան» ժողովածուն սկսվում է մի անավարտ պոեմով՝ «Հայկ ի տեսիլ Հայկազնին» վերնագրով: Սյուժեն բանաստեղծի հանդիպումն է մեր ավանդական նախահայր Հայկի հետ և նրա աված խորհուրդները, հայրենիքը—Հայաստանը վերականգնանալու համար: Պոեմի հերոսները՝ Հայկը և ինքը բանաստեղծը տոգորված են մեծ հայրենասիրությամբ. մեկը կանգնած է հայության ստեղծման նախաշեմին, որպես հայության կազմավորման սիմվոլ, մյուսը քայքայված, բզկտված ժողովրդի բազմատանջ կյանքի ճանապարհին, և ձգտում է նորից կենդանացնել հայրենիքը և փրկել անխուսափելի կործանումից: Հայկը հանդիպում է բանաստեղծին այն ժամանակ, երբ նա ընկած մի

¹ «Եղբերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 90:

անջուր անապատ՝ աշխատում է կենդանություն պարգեհել հողին,
պեղելով նրա ընդ'ըքը:

Թողեալ զջուր կենդանի,
Որ կեանս տայ աշխարհին,
Պեղիցէ՞ ոք զաղտախտին
Ի զով ինքեան՝ զայդ գետին:¹

Հայկ Նահապետի այն հարցին, թե ի՞նչ է անում նա, բանաստեղծը բացատրում է, որ հայրենի հողը զրկվել է իր կենսական հյութերից և կորցրել իր հրեհմի առատությունն ու խաղաղ, երջանիկ կյանքը: Նա պատմում է նահապետին, որ իր ժողովրդի անցած տառապալից ճանապարհը սկսվեց, «զայլակորիւն հրոմուտների» արշավանքներից և շարունակվեց նրանց հաջորդող «Մարդախոշոշ գաղաններին» կողմից: Նրանք քայքայեցին երկիրը, ոչնչացրին ժողովուրդը:

Ապականեալ հեղձուցին
Բոյս դալարի՝ զոր գտին,
Զգեօղ, աւան, քաղաք
Եդին ողջոյն աւերակի:²

Լսելով բանաստեղծի ցավալի պատմությունը, նահապետը շրջվում է դեպի Մասիս և ասում նրան.

Տես, ասէ, ցիս, պատանիդ,
Զոտամբ լերանց Արքայիդ,
Լիճ ծովանայ ձիւնաթումբ,
Որ հալս հանուր ծծէ յումպի:³

Հայկը խորհուրդ է տալիս բանաստեղծին վերադառնալ հայրենիք, համախմբել Մասսի շուրջը կարող ուժերին, փշրել ձյան ծանր շերտերը, հալեցնել սառույցը և վերակենդանացած ջուրը հոսեցնել երկրի մեջ:

Օր լիցի քեզ տեսանել
Թմբոյդ շրջել հիմն ի վեր:

¹ Նույն տեղ, էջ 90:

² Նույն տեղ, էջ 104:

³ Նույն տեղ, էջ 105:

Յայնժամ կրկին Հայաստան
Փոխեալ յԱդին փափկութեան:¹

Փոխարեւական պատկերներ յմիջ բանաստեղծն արտահայտում է իր քաղաքական խոհերն ու ձգտումները, գալով այն եզրակացութեան, որ երկիրը վերականգնելու համար անհրաժեշտ է համախմբել հայրենիքում ժողովրդի կենդանի, կարող ուժերը, նրանց միջոցով ուղի հարթել նոր կյանքի զարգացման համար:

Պոեմի վերջում հեղինակը երանի է տալիս այն ժողովրդին, որը իր քաղաքական միասնությունը կապում է լուսավորութեան իդեալների իրականացման հետ, այդ ճանապարհով հասնելով ցանկալի նպատակին:

Թաղիադյանի այս պոեմը հիշեցնում է հայրենասիրական նման հուշգրեով տոգորված, համարյա նույն կառուցվածքն ունեցող Աբովյանի պոեմը՝ «Մուտ Հայկազն ի Հայաստան և արհավիրք երևակայութեան նորայ ի ժամ պատերազմի, ի 1826 ամի»: Այստեղ Հայկ նահապետը տեսնում է ամեն ինչ փոփոխված, ողբում է Հայաստանի ծանր վիճակը, նրա թուլները՝ Հայաստանի նոր ժառանգները ներկայանում են Հայկին և հայտնում նրան, որ ահա սարերի ետևում երևացող ուսս զինվորները դալիս են փրկելու Հայաստանը: Այս պոեմների միջև եղած նորոթյունը նախ և առաջ նրանց բովանդակութեան և հարցերի մեկնաբանման մեջ է. երկու դեպքումն էլ Հայկը փորձում է հասկանալ նոր ժամանակաշրջանում տեղի ունեցած փոփոխությունները. ինչպես Թաղիադյանի, այնպես էլ Աբովյանի մոտ Հայկը արդեն հասկանում է, որ աստվածների օգնութեամբ կամ աղեղի ուժով չէ որ պիտի օրինակ ծառայեն նոր սերնդին՝ նրա ազատագրական ուղին հարթելու համար: Հայկը զգում է, որ ինքը անցած էտապ է, որ ժառրիկ իրենք նոր ձևով պետք է լուծեն իրենց ազատութեան հարցը:

Այս պոեմներով, ինչպես Թաղիադյանը, այնպես և Աբովյանը, հակադրվում են դասական պոեզիայի, մասնավորապես Բագրատունու «Հայկ Դիւցազնի» վերացական գաղափարախոսութեանը: Իր ձևով Թաղիադյանի պոեմը նույնպես տարբերվում է սրադիցիոն դասական պոեմներից:

¹ «Եղբրերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 108:

Ակտիվ կերպով միջամտելով իր հերոսների խոսակցութեանը, հեղինակն արտահայտում է իր սեփական զգացումները, նույն-
իսկ մեջ բերելով ինքնակենսագրական փաստեր: Հայրենիքի
հեղեղուկ վիճակը բանաստեղծը նմանեցնում է իր անձնական
կյանքի տարուբերումներին: Պոեմն սկսվում է իրեն բանաստեղ-
ծի անձնական մտորումներով. հինգերորդ օրն է, ինչ ինքը
գտնվում է Պոլսում, քաղաքը թվում է իրեն խորթ, անհրապույր,
դժվարահաճ: Այդ զգացումները նրա մոտ առաջ են բերում հայ-
րենիքի հետ սերտ կապվելու խոհեր:

Թէ մայր կորոյս զիւրն զուլթ,
Խրոխտ ի խէթ հայել յիս
Ակնուցիմ մօրուն խորդ
Ի զիրկ օտար զգուել զիս:¹

Նրա աչքի առջև կանգնում է իր սիրելի կին Թանգը, որին
մոռացան նույնիսկ իր հարազատները, տրամության քնարն
առած յուր ձեռքը, նա որոշում է երգել Թանգի վիրտը և ան-
տրտունջ տանել իր տառապանքները:

Թափառական դու պանդուխտ,
Զէ՞ քո բոլոր կեանք երազ,
Ե՞րբ եթող քեզ բաղդ յողդողդ
Զօր տեսանել անփաս...²

Հեղինակի սուրեկտիվ ապրումները բխում են կյանքից
ստացած ծանր հարվածներից, և այդ նա շեշտում է իր չափածո
տողերում: Թաղիադյանն իր պոեմում գործ է ածել արեգորիկ
պատկերներ, գեղեցիկ նկարագրություններ ու համեմատություն-
ներ. ինչպես գառների և ոչխարների, որոնք ծառավից պապա-
կած լիզում են քարակույտը, ուլիկների, որոնք լվմացնելով
իրենց մոր պտուկներն են քամում, տերիների, որոնք ծառավից
իրենց չորացած գլուխներն են կախում և այլն: Սրանք հիշեց-
նում են Հյուրմյուզյանի հովվերգական նկարագրություններն ու
պատկերները:

Թաղիադյանի հայրենասիրական բանաստեղծությունների

¹ Նույն տեղ, էջ 93:

² Նույն տեղ, էջ 96:

մեջ աչքի է ընկնում 1847 թ. «Ազգասիրում» Հ. Կ. ինիցիալով տպագրված (էջ 238) հայտնի «Տէր, կեցոյ զՀայս» բանաստեղծութիւնը: Ժամանակակիցների վկայությամբ այդ բանաստեղծութիւնը տարածվել է հայաբնակ բոլոր վայրերում և ձայնագրվելով դարձել ազգային հիմն: Դա վկայում է այն մասին, որ հեղինակը մեծ հաջողությամբ զրոստորել է այն ապրումները, գաղափարը, որով համակված էր հայ հասարակական միտքը: Ժողովրդի քաղաքական կյանքի ու հեռանկարների վերաբերյալ: Այդ բանաստեղծութիւնն իր քաղաքական նպատակասլացությամբ, գաղափարական հագեցվածությամբ և ոճի հատկությամբ գրավել է հայ աղատագրական շարժման պարագլուխ, ռեուլուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանին. «Այս երգը առաջին անգամ երևեցավ Կալկաթայի «Ազգասիր» անունով օրագրի մեջ, որ հրատարակում էր հալիտոնական հիշատակի արժանավոր Մեսրոպ Դավթյան Թաղիադյանց ուսումնական ազգասիրը: Այս երգը թի յուր բովանդակության, թի յուր բանաստեղծական վառվուռն հորինվածքի ու թի հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկերը հանդիսացնելու և դորա բարվոքելու համար հարկավոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մասնավոր ուշադրության: Եթե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականութիւն կգնեի ամեն մի հայի վերա անդիր ուսանել այդ երգը: Մինչև այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ»¹

«Մեռելահարցուկ-ի մեջ Նալբանդյանը բերում է «Տէր կեցոյի» հետևյալ տողերը.

Աջովդ համատարած,
Զաղգ մեր արտահալած
Փոյթ գումարեան
Յաշխարհ Արարատեան
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեպհական
Օտարազգեաց...²

¹ Մ. Նալբանդյան — «Երկերի լիակատար ժողովածու», 1945, հ. 1, էջ 267:
² Արտատպված «Ազգասիրից», 1847 թ., էջ 238:

Թաղիադէյանի արտահայտած քաղաքական այդ մոտիվները հետո լայն կերպով դրսևորվեցին հաջորդ սերնդի՝ Պատկանյանի, Հովհաննիսյանի և այլ հեղինակների ազգային հայրենասիրական բանաստեղծությունների մեջ:

«Ազգասերի» հաջորդ համարներում հանդիպում ենք ազգային քաղաքական նույն տենդենցներն արտահայտող այլ բանաստեղծությունների ևս. սրանցից է «Երազ» բանաստեղծությունը, տպված Ս. Յ. Մ. ստորագրութեամբ:

Բանաստեղծը նկարագրում է գիշերը. Արուսյակը հանդարտիկ սահում է. պարզ երկնքի վրայով. փչում է արեւելյան քամին. դիմացը օվկիանոսն է, բանաստեղծը ձեռնում է նրա ափին և լսում թռչունների դայլայլը: Հանկարծ նա նկատում է մի գեղեցիկ պարտեզ, մտնում է ներս, հանդիպում պարտիզպանին. պարզվում է, որ այդ փարթամ, գեղեցկատեսիլ պարտեզը ամայի է և սպասում է իր բնակչին, որը թողել է իր տունը և գաղթել օտար վայրեր: Բանաստեղծը կոչ է անում կյանք տալ այդ գեղեցիկ պարտեզին, երջանկացնել ամայի տունը՝ բնակութեամբ:

«Ազգասեր»-ի հաջորդ համարում հրապարակվում է «Նամակ վերառեսչին» վերնագրով մի երկտող, որտեղ գնահատվում է այդ բանաստեղծության քաղաքական արժեքը: Նույն մոտիվներն է արտահայտել «Հայաստան» վերնագրով «Ազգասերում» տպագրված մի ուրիշ բանաստեղծություն (Ղազար Հովնան). այստեղ ներկայացված է Հայկը և Արամը, որոնց օրինակով հեղինակը հորդորում է պայքարել ազգային միասնութեան համար:

Թաղիադէյանի լրագրում տպագրված այս բանաստեղծությունները ցույց են տալիս, որ նրա օրինակով դաստիարակվում և հանդես են գալիս բանաստեղծներ, որոնք տոգորված են թերթի խմբագրի գաղափարներով, այսինքն հայկական պոեզիայի մեջ արդեն տեղ էին գտնում ազգային-քաղաքական լիրիկայի նմուշներ:

Քաղաքացիական մոտիվների շարքին է պատկանում Թաղիադէյանի «Զամբյուղաշին աղջիկը»¹ հանրահայտ գեղեցիկ բանաստեղծությունը: Այդ բանաստեղծությունը նա գրել է 1842—43 թ.թ. Գանգեսի ափերին թափառելիս: Զամբյուղ պատրաս-

¹ Ինքնագիրը պահպանվում է Գրական Թանգարանում, Ախվերդյանի արխիվ, № 84.

տող աղջկա երգի մեջ նա նախ արտահայտել է հայ պանդուխտի տառապանքները.

ԶԱրարատ, Եփրատ և Տիգրիս թողի,
Միայնակ շրջիմ աստ եզերս Գանգէսի
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունջ անձիս
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտք էին:¹

Գեղեցիկ տողերի մեջ բանաստեղծը նկարագրում է հայ աղջկա ապրումները օտար երկնքի տակ, նա հիշում է իր առատ և չքնաղ հայրենիքը:

«Տեր կեցոյի» նման այս բանաստեղծութիւնը ևս իր ժամանակին ձայնագրվել և տարածվել է Ժողովրդի մեջ, նույնիսկ կորցնելով հեղինակի անունը: Ներկայացնելով ցրված հայութեան ծանր վիճակը, Թաղիադեանը պանդուխտի մեջ գրկնորում է հայրենի հողի հանգեպ չերժ գգացումը, հայրենիքի կարոտը: «Մի մոռանա՛ր» վերտառութեամբ բանաստեղծութեան մեջ մայրը ճանապարհում է իր սիրած դավակին օտար երկիր՝ պատվեր տալով նրան չմոռանալ իրեն, ի թե անգամ իր գերեզմանը ծածկվի խոտով:

Նույն մոտիվը է արտահայտում «Ի տէս հոգեհարազատ սիրելոյ Գէորգայ աշխարհս Հնդկաց 1827 թ.» բանաստեղծութիւնը:

Ե՛կ, սէր իմ, յայս վտարանդի
Թափառականս յափն Գանգէսի,
Անձկայրեաց լեր իմում սրտի,
Հայրենեաց սիւգ իմանալի:²

Բանաստեղծը երազում է համբուրել հայրենի հողը և խընդրում է ընկերովը կատարել իր ցանկութիւնը:

Տալ իմոց պապակեալ շրթանց
Համբոյր սուրբ հողոյ հայրենեաց:³

Այս մոտիվները հարազատ էին և Աբովյանին, հատկապես Դորպատյան շրջանի նրա բանաստեղծութիւններին, որտեղ նա

¹ «Քնար հայկական», 1862, էջ 136:

² «Ազգասէր», 1845 թ., էջ 55:

³ Նույն տեղ:

հառաչում է իր հարազատ երկրի համար, տառապում նրան տես-
նելու ջերմ կարոտից: Թաղիադեյանը և Աբովյանը իրենց պան-
դելիտի երգերի մեջ արտահայտել են ժամանակի պահանջը՝ կա-
պել զաղութաբնակ հայերին մայր երկրի հետ, վառ պահել նրանց
մեջ ոչ միայն հայրենասիրությունը, այլև բոլորքել հայրենիք
վերադառնալու տրամադրությունները:

Իր բանաստեղծությունների մեջ Թաղիադեյանը ձգտում է
ոչ միայն մոտենալ իրականությանը, այլև մասնակցել հասարա-
կական կյանքի կազմակերպմանը, հաղթահարել բոլոր տեսակի
խոչընդոտները, բայց, ահա, երևան են գալիս այդ անցման շըր-
ջանի բնորոշ գծերը: Բանաստեղծության կենտրոնական առանցքը
կազմող անհատը հանդես է գալիս պայքարելու կաշկանդող,
քարացած նորմաների դեմ, առաջադրելով համարձակ ծրագրեր,
արտահայտելով մարտնչող տրամադրություններ. սակայն
նրա դադափարների և հետամնաց կյանքի միջև եղած հակասու-
թյունները ետ են մղում նրան, խախտում նրա հավատը, եղե-
րական շեշտ մտցնում նրա հույզերի մեջ: Այդ կարգի բանաս-
տեղծությունները Թաղիադեյանի մոտ մեծ մասամբ ստանում են
ինքնակենսագրական բնույթ: Դրանցից մեկն է, օրինակ «Թու-
թակ Թաղիադեան» ժողովածուի «Մայրիկ» բանաստեղծությունը,
որտեղ նա մերկացնում է հասարակական կյանքի հետամնացու-
թյունը, շեշտը դնելով էջմիածնի կղերական միջավայրի վրա,
և ցույց է տալիս, թե ինչպես այդ միջավայրը խեղդում է լու-
սավորության ձգտող մարդուն, ոչնչացնում նրա մեջ ամեն
պայծառ ցանկություն: Ահա՛ կյանքի այս օրեկտիվ դժվարու-
թյունները նրա մեջ առաջ են բերում խոր վիշտ, և դառն կըշ-
տամբանքով ինքը ելնում է իր ճակատագրի դեմ:

Օ՜ թե էի այլ տգէտ
կամ խաշնարած ի դաշտի.
Բան զոր եղայ վարժապետ
Յայս տրորիլ Դպրոցի:¹

Բանաստեղծի մոտ երբեմն հանդես են գալիս սկեպտիկ տրա-
մադրություններ, մասնավորապես երբ տեսնում է, թե ինչպես նո-

¹ «Եղեբեղդութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 108:

բաձև բարքերը շաղախվում են հին անկարգ օրենքների հետ և ավելի խորացնում տիրող այլանդակությունը:

«Ճաղ շարադրիչ ի Հնդկաստան յամին 1841» բանաստեղծության մեջ Թադիադյանը դատապարտում է հոռի իրականությունը և խորհուրդ է տալիս չհավատալ «շոգմոգ» մարդկանց սնամեջ շողոքորթություններին, հրաժարվել նրանց առաջարկած «սուղից»:

Արդ զիմ ընկալ խրատ անոյշ,
Թէ այր շոգմոգ՝ տայցէ ձեզ նոյշ,
Մի առնուցուս, թութակ զգոյշ,
Զի կեղև է դատարկ և սին:¹

Մի ուրիշ բանաստեղծության մեջ, ապացուցելու համար աշխարհի ունայնությունն ու դատարկությունը, նա բերում է օրինակներ, ծաղրելով կրոնավորներին, հարուստներին, մամոնային պաշտողներին, որոնք ոսկու փայլից շլացած, իրենց արժանիքներն ու պատիվն անդամ հանում են վաճառքի: Դիմելով մարդուն, Թադիադյանը ծաղրում է նրա շահամոլությունն ու խարդախությունը:

Նենգեա դաշխարհ անխնայ
Զխարդ կարես. փող կուտեա,
Մի վախեր զի օգնական
Է քո աստուածն Մամոնայ:²

Հակասությունների ֆոնի վրա էլ ավելի խորացված մարդկային արատները, կեղծիքը, այլանդակությունները մերկացնող ավելի սուր տողեր ունի նա իր «Վէպ Վարսենկայի» գլուխներից մեկում:

Շի՛կնիս մի ով մարդ ունայնութիւն քոյ,
Դու ապականեալ զանգուած ամօթոյ,
Որ մտօք խարդախ բանիւք խարդաւան
Բարեկամութիւն է բառ աննշան:³

¹ «Նդերերգութիւն յօրհաս Թանգայ Թադիադեանց», էջ 74:

² Նույն տեղ, էջ 72:

³ «Վէպ Վարսենկայ», էջ 57:

Նրա բանաստեղծությունների մեջ հանդես են գալիս իրար հակասող, բայց միևնույն ժամանակ օրգանապես իրար հետ կապված տրամադրություններ. առաջինը նրա քննադատական վերաբերմունքն է իրականության բացասական երևույթների հանդեպ, որ բացահայտում է նրա սուր սարկազմը, ծաղրը, երկրորդը նրա թախիծն է, որը նրա մեջ ստեղծում է տրամադրություն՝ հեռանալ այդ իրականությունից: Երկու դեպքում էլ բանաստեղծը կանգնած լինելով իրականությանից վեր, դատավճիռ է կարգում նրան և քարոզում նրա վերափոխությունը:

Թաղիադյանի երգիծանքն արտահայտող չափածո գործերից մնացել են մի քանի բանաստեղծություններ և մի պոեմ. զրանցից մեկն է ինքնակենսագրական ընույթ կրող նրա հայտնի բանաստեղծությունը՝ «Յուզակ ստացեալ աղիքից տան իմոյ ի ծայրագոյն կառավարչին սրբոյ աթոռոյս» վերնագրով: Այստեղ նա պատմում է այն ընդունելության մասին, որ ցույց տվին իրեն իջմիածնի հոգևոր կառավարիչները, երբ նշանակվել էր մայր աթոռի գլխավոր ուսուցիչ:

Երբ զիս վարժապետ կարգեցին

Արարատեան ճեմարանին,

Տվին սենեկիս թախումն

Բոլորն էլ նորաձև իքմին:¹

Թաղիադյանը բացատրում է, թե ինչ է նշանակում այդ «նորաձև իքմինը»: Դա մեռած վարդապետի խցում մնացած փառք, կեղտոտ, ժանգոտած հին կարասիներն էին, նրան բաժին հասած չորացած, անպետք բակլան ու բրինձը, որի մեջ կես լիտր աղբ էր լցված: Զավեշտական տողերի մեջ Թաղիադյանը նկարագրում է երազում տեսած Աբրահամ վարդապետին, իր ղեկավարը ծուռ խալիխ մասին, նամակը կլեկչուն, նրա պատասխանը և այլն: Թաղիադյանի երգիծանքն այստեղ զրսևորում է մի առանձնահատկություն. նա ներկայացնում է օբեկտիվ իրականությունն այնպես, ինչպես որ կա: Գծագրված կերպարները ուժեղ կերպով տպավորվում են ընթերցողի երևակայության մեջ, առաջին հերթին ցուրտ, անհրապույր խցում, առանց վառելիքի և ուտելիքի մնացած իրեն վարժապետին և նրա ողբերգությունը:

¹ «Ներերկրություն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 75—6:

Իր մի ուրիշ բանաստեղծութեան մեջ «Համեմատութիւն Մեսրոպայ Թաղիադեանց վարժապետի և աթարակիր իշոյն սրբոյն էջմիածնի, ասացեալ մարտ ամսեան 1833 ամի», Թաղիադեանը ներկայացնում է իր ապրած ժամանակի այլաճանաչելի բարքերն ու երևույթներն այլաբանական ձևի մեջ: Վանքի գոմերից մեկի բակում զբոսանքի դուրս եկած բանաստեղծը հանդիպում է աթարակիր իշուն: Էջը քայլում է հպարտ, սկզբում ձևացնում է, որ չի նկատում վանքի վարժապետին, երբ բանաստեղծը փորձում է խոսել նրա հետ, պարզվում է, որ էջն արհամարհական վերաբերմունք ունի կոչում չունեցող և պատվազուրկ վարժապետի հանդեպ, քանի որ, ինչպես ինքն է վկայում իր մասին, մեծ տարբերութիւն կա իր և վարժապետի միջև: Էջը հայտնում է, որ այդ արժանիքները ձեռք է բերել ղեռնա վանքում վանական եղած ժամանակ. սակայն նա թողել է այն, իր ունեցած այդ արժանիքներն ավելի քան օգտագործելու համար:

Ես էի առաջ դպիր վանական,
Տաղերդ խնջոյից հավերժանվագ,
Բայց տեսեալ ապա թէ մեռանիլ կա,
Ոչ հօժարեցայ մնալ անժառանգ.
Իմ այս մեծագին և անկար մուշտակ
Ցուցանեն զիս գոլ թաւուտ մեծ աղգին.
Իսկ փունջ բազմաթել, որ կա իմ գաւակ
Զինչ և իցեն ետ թէ առնէ յարգի:¹

Երբ էջն իմանում է, որ բանաստեղծը բացի իր աղգանու-
նից չունի որևէ կոչում կամ պաշտոն, ծաղրում է նրան իր հետ
համեմատվելու համարձակութեան համար:

Ինձ համալիճակից կա դու մութիկ,
Զինչ անուն է քո, զինչ քոյդ վերտառութիւն,
Զինչ պատիւ ունիս թէ և վարժապետ,
Որ հովասարիս աթարակիր իշոյն:

Հեղինակը ծաղրում է կենդանու ամբարտաւանութիւնը,

¹ «Մեղու», 1862 թ., էջ 179 (ինքնագիրը պահպանվում է Հայաստանի Գրական Թանգարանում):

տեսնելով նրա մեջ ծայր հիմարութեան հասած երջանկութիւնը:
էջը նրան պատասխանում է թե՛

Դու զիմ պիտեան շալակ աթարաց
Բեռն ծանրագին անձին համարիս,
Բա զհոգոց քոյոց և զտրտմութեանց
Ընդ որով հեծիս, զի՞նչ ունիս ասել:

Բանաստեղծն ընդունում է, որ իրոք՝ իր հոգին ավելի ծանր
է, քան իշու բեռը և տրտմութեամբ հասկանում է, որ իսկապես
այդ իրականութեան մեջ ինքը իրավունք չունի համեմատվել
անդամ իշու վիճակի հետ:

Անբախտ վարժապետ, անբախտ գիտնական
Այր և համեմատ չէ իշոյդ վիճակ:

Մոտավորապես նույն իմաստն ունի Թադիադեյանի մի ու-
րիշ բանաստեղծութիւնը, անվերնագիր՝ գրված դարձյալ 1833 թ.
մարտ ամսին: Էջմիածնի միաբաններից հալածված, հուսահա-
տութեամբ մատնված բանաստեղծը տեսնում է իր շուրջը միայն
տգետ և հիմար մարդկանց, որոնք ղեկավարում են էջմիածնի
հոգեւոր կառավարիչներին: Ահա դրանցից մեկն է անուն և դիրք
վաստակած, սակայն իր մտքով անասունից չտարբերվող Ղա-
ղարոսը:

Որ ձմեռվան գոմշի նման քանի ձիթես հպարտանա
ե՛վ վատ խոսքով հիմարութեան հող կքանդի, գլխին կտա¹:

Այդ չնչին մարդուկը, որ մի ժամանակ «չաքուչ» տալով
հոգին թռչում էր, հիմա այնքան է հղիացել ու մեծամտացել,
որ ոչ բարեկամ է ճանաչում և ոչ դոստ:

«Հո, հո, հո հոգը իշխան», ծաղրում է նրան բանաստեղծը,
մերկացնելով նրա կեղծ գիրքը, սին պատիվը, որ վաստակել էր
նա էջմիածնում իր նման տգետ, այլանդակ բարքեր ունեցող
միաբանների շրջանում: Թադիադեյանը պատմում է մի դեպք,
որը ցույց է տալիս հերոսի ոչ միայն խարխալ հոգին, գարշելի
ընավորութեւնը, այլև այլանդակ կենցաղը:

¹ Նույն տեղ:

Այս բանաստեղծութիւնը հիշեցնող մեկ ուրիշը հեղինակը զետեղել է «Ազգասէրում»։ Այստեղ նույնպէս ծաղրվում է ծեր Հիպոնը, որն իր թեթևամտությամբ ծաղր ու ծանակի է ենթարկվում ամբողջ ազգի առջև։ Վերջին բանաստեղծութիւնները Թաղիադյանը գրել է աշխարհաբար լեզվով։ Ժամանակակիցները վկայությամբ նա թողել է բավական թվով այդպիսի բանաստեղծութիւններ, որոնք մատչելի լինելով ժողովրդին՝ իր ժամանակին տարածվել են Արարատյան դաշտավայրի և այլ տեղերի հայ բնակչության մեջ։

1880 թվականին Տեր-Մինասյանի հրատարակած «Հայկական յիսնեակ առակք» ժողովածուի մեջ զետեղված են Թաղիադյանի մշակած առակներից մի քանիսը։ Թաղիադյանը ինչպէս հայտնի է, մշակել է սոցիալական շեշտված մոտիվներ ունեցող ժողովրդական բազմաթիվ սուր առակներ, զետեղելով իր «Զվարճախոսութիւններ» շարքի և «Առակք Պարսից» ժողովածուի մեջ։

Երգիծանքի հետաքրքիր նմուշ է հանդիսանում Թաղիադյանի նաև մի անավարտ պոեմը, որի վերնագիրն է «Եղիերբ գութիւն ի Թանգ»։ Այս պոեմը գրված է Պոլսում, այնտեղ իր կրած անձնական և հասարակական ծանր հարվածների ազդեցության տակ։ Այդ պոեմը բանաստեղծը համարել է իբր գրչի տխուր արտադրանքը։ Պոեմի հիմնական ոգին բանաստեղծի դառն թուլնով շողախված երգիծանքն է իրականության հանդեպ, միևնույն ժամանակ այդ իրականութիւնը բացասելու, այն լքելու ծանր տրամադրութիւնը։ Պոեմում նա պատմում է, թե ինչպէս, երբ ինքը պատրաստվում էր կյանք մտնել նրան ներկայանում են Աստղիկ դիցուհին և Աթենաս Պալասը։ Առաջինը գայթակղում է նրան վայելքի հրապույրով, մյուսը ցույց է տալիս կյանքի դժվարութիւնները, որտեղ նա պիտի սեփական ուժերով պայքարի ելնէր կյանքի նուշն վայելքին հասնելու համար։

Մին ընդ անմատոյց քարուտ զառիվեր
Ընդ բիւրս ի բիւրոց չարիս անկանէր,
Այլ ի վախճանի ի տաճար փառաց
Գաջս յուխտաւորաց խոստանայր հանել։
Իսկ մին զառիվայր հարթ և հալսասար

Ի վիհ կորստեան ձգիւր ճանապարհ,
Որ ժամէական պատիր հեշտութեամբ
Զիւրան յանպատիր, ի կորուստ որսայր¹

Թաղիադյանի հաշորդների՝ Շահազիզի, Նալբանդյանի,
Պատկանյանի ստեղծագործութիւնների մեջ նույնպես արտա-
հայտվել է բանաստեղծի հասարակական կոչման հարցը: Աթե-
նաս Պալասը պատմում է բանաստեղծին, որ այն կյանքը, որի
մեջ պիտի մտնի նա, վարակված է բազմաթիվ ախտերով. այն-
տեղ բազկատարած իշխում է տգիտութիւնը: Բանաստեղծը
պետք է ազատի մարդուն մահաբեր կորստից, սովորեցնի նրան
բարձրանալու, տողորմելու լուսավորական դադափարներով:

Զի. թէպէտ և զուղիս ժայռոտ մահաբեր,
Բիւրաւոր ճգանց մնաս համբերել,
Այլ ի վախճանի պսակ պարծանաց
Կնայ քո խնդութեամբ ի գլուխ կապել²

Բանաստեղծը լքում է Աստղիկ դիցուհուն և հետեւելով Աթե-
նաս Պալասին՝ մտնում է կյանքի քարքարոտ ճանապարհը, որ-
պեսզի համառ պայքարով և տքնաջան աշխատանքով դափնյա
պսակ վաստակի իր և իր ժողովրդի համար: Աստղիկ դիցուհին
որոշում է վրիժառու լինել իրեն լքած բանաստեղծից, նա իջ-
նում է դժոխք և կանչում իր մոտ Հիմալոթյան, Զրպարաու-
թյան և Խաբուլթյան ոգիներին, կարգադրում նրանց հետապըն-
դել բանաստեղծին, հալածել նրան, վարկաբեկել նրա շնորհքը,
խորտակել երջանկութիւնը:

Աթենաս-Պալասի հովանավորութեամբ բանաստեղծն սկսում
է իր հասարակական գործունեութիւնը: Երբ նա մեկնում է Զու-
ղա, այնտեղ հավաքված դժոխքի ոգիները սպասում են հարմար
մոմենտի, որ փոթորիկ բարձրացնեն բանաստեղծի շուրջը: Պոե-
մում Թաղիադյանը նկարագրում է իր կրած բազմաթիվ տառա-
պանքները, ապա ամուսնութիւնը Թանգի հետ: Դժոխքի ոգիներ-
ը տեսնելով Թաղիադյանին երջանիկ, որոշում են կործանել

¹ Եղերերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց, էջ 8.

² Նույն տեղ, էջ 11.

նրան: Սկսվում է անլուր մի հալածանք բանաստեղծի դեմ: Նա ստիպված թողնում է Ջուղան:

Պոեմի մեջ թաղիադյանն օգտագործում է հրգիծանքի նոր ձև, որն ունի պամֆլետի բնորոշ գծեր: Այդ տիպի հրգիծանք ունեն 60-ական թվականների բանաստեղծները (Պատկանյան, Նալբանդյան), որոնք մերկացնելով իրականության ստվերոտ կողմերը, միաժամանակ երևան են հանել կոնկրետ մարդկանց գիմանկարներ՝ կոնկրետ իրադրության մեջ: «Տէր յիմարութեան, տէր զրպարտութեան և խաբէութեան» ոգիներն զիմակների տակ թաղիադյանը մերկացնում է Ջուղայի Ամենափրկչյան ուսումնարանի կառավարիչներին և Ջուղայի առաջնորդ արքեպիսկոպոս Բագրևանդացուն:

Տէր Յիմարութիւն հրգուեալ յԱխերոն
Գրել անպիտան պարգևս հոգւոյն,
Դրաւոր ճգնաց զանգին մարգարիտս
Յանձնառու լինէր կոխան տալ ոտից:¹

Այս տողերով թաղիադյանը մերկացնում է Ջուղայի հասարակության այն վերնախավը, որը պաշտպանությամբ տակ առնելով հոգաբարձուներին, տոն էր տալիս իր դեմ ուղղված զրպարտանքներին: Զրպարտության ոգու գիմակի տակ թաղիադյանը մերկացնում է հատկապես Բագրևանդացուն, որի մասին նա խիստ խոսքեր է գրել իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքում, նկարագրելով նրա դատան վերաբերմունքը իր հանդեպ:

Տէր Զրպարտութիւն՝ ոյր շունչ հրահոս,
Կիզոյր գիտութեան դալարիս բուսոց,
Նա ձաղանս, ծաղանս այլ և նախատիս
Նգով ընդ զսբով տայր խմբի գիտնոց:²

Այս տողերը լիովին բնորոշում են գիտության թշնամի Բագրևանդացու բռնած դիրքը իրենից բարձր կանգնած թաղիադյանի հանդեպ: Մանրամասն կերպով պատմելով կառավարչի՝ Ղևոնդ Ավագյանի գործած բռնությունների մասին, թաղիադյանը նկարագրում է նրա ոչնչությունը, ծաղրելով նրա հոխոր-

¹ «Նդերերգութիւն յօրհաս թանգայ թաղիադեանց», էջ 15:
² Նույն տեղ, էջ 15:

տալից տոնը, զրպարտանքները և նրան որակում է «խաբեու-
թյուն»,—«Հարադանդ» պիտակներով, համարում նրան «օձի ծը-
նունդ», «իշխան անդնդոց» և այլն: Բանաստեղծի երգիծանքի
մեջ երևում է նրա քննադատական մեծ կիրքը և նա զգում է
իր ծաղրի հասարակական արժեքը: Սակայն նա միևնույն ժա-
մանակ զգում է, որ տիրող իրականությունը դեռևս ուժեղ կեր-
պով պահպանում է իր հնամենի ուժը և կառչած խավարին՝
պայքարում է լուսավորության դարգացման դեմ: Բանաստեղծը
սփոփանք է զգում այն ժամանակ, երբ նա անդրադառնում է
իր Թանգին, երբ գծում է նրա լուսապայծառ կերպարը: Բանաս-
տեղծի մոտ Թանգը հանդես է գալիս որպես այդ միջավայրին
հակադրվող եզակի դեմքերից մեկը: Թանգը գայրաճում է իրեն
շրջապատող դաժան, անգութ և կեղծ մարդկանց դեմ. նա հուզ-
վում ու դատապարտում է ճշմարտությունը խափանողներին
և աշխատում է մերկացնել նրանց չարությունը.

Թե դուք նոյն էք ամօք յառաջ,
Որ քան զնա կարգացիք.
Արդ զի՞ զորդիս քորէ մարմաջ
Զրաբանել աւադիկ.¹

Չարմացած բացականչում է Թանգը դիմելով իր ամուսնու թըշ-
նամիններին: Թանգի այս բողոքը բնութագրում է նրա ջերմ
վերաբերմունքն անարդար կերպով հալածված բանաստեղծի
հանդեպ: Իր պարզ զգացումներով, հոգու ներքին բնազդով նա
զգում է ամուսնու արժանիքները, որոնք բարձրացնում էին
նրան իր միջավայրից: Ահա թե ինչպես է բնութագրում Թանգը
իր ամուսնուն, պաշտպանելով նրան թշնամական հարձակում-
ներից.

Լոյս արիենի, զնա ի մարմնի
Որ ծավալէր ջինջ շողիկ,
Արդ խաւարին վի՛ր որդի
Եվ մոլորի՞չ համարիք,
Նա ի բարին նահատակի,

¹ Նույն տեղ, էջ 37:

Շեղի և ոչ մի քայլիկ՝
Զօր ամենայն անխոնջ տքնի
Զիւր տուն պահել երջանիկ,¹

.....
.....
.....
Նա անտրտունջ ի վտանգին
Թէ՛ն բոլոր վարձուց զիրկ,
Որբոց ձերոց յոյժ կաթողին
Խնամ ածէր և՛ երախտիք,²

Թանգի քննադատությունը լիցք է տալիս բանաստեղծին: Շրջապատող խավարի մեջ նա տեսնում է լույսի շող: Թանգի սերը նրա համար դառնում է հաղորդակցության միջոց՝ կապվելու իրականության հետ. նա կրկին լցվում է արդարության, ճշմարտության և մարդու ապագա հրջանկության նկատմամբ ունեցած իր երազների իրականացման հույսերով:

Բանաստեղծի այդ երազներն ահա ընդհանրացված ձևերով երևան են գալիս 1842—43 թ. թ. գրած նրա մի ուրիշ պոեմի՝ «Սօս և Սօնգիպի» մեջ:

Պոեմը հիմնականում կառուցված է հնդկական զրույցների վրա, որոնք առնչվում են հայկական նմանօրինակ զրույցների հետ:³ Հեղինակն այդ զրույցների մեջ ներկայացնում է Հայաստանից Հնդկաստան գնացած Վանյան Սոսին, որն արտահայտում է Թաղիադյանի հասարակական ողբերգությունն ու փրկիսոփայական ընդհանրացումները շրջապատի հանդեպ:

Պոեմը սկսվում է Վահանյաց տոնի նկարագրությամբ: Ցնծում է Տարոնը, նրանց խրախճանքին մասնակցում է Աստղիկ զիցուհին, նա նվագում է Ոսկե վինը, որից մանկանում էին ծերերը, խայտում երեխաները: Այդ պահին Արտեան լեռան վրա արտասուք է թափում Վանյան Սոսը. նկատելով այդ, Աստղիկ

¹ «Ծղերերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց», էջ 37:

² Նույն տեղ, էջ 38:

³ Այսպես օրինակ, հայկական ժող. զրույցներից «Վարդգես Շառաֆյալին», անտիպ, պահվում է Հայկական ՍՍՌ Գիտութ. Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրադիտության Ինստիտուտի ֆոնդային բաժնի նյութերի մեջ:

դիցուհին հրապուրում է Սոսին, հարցնում նրա վշտի պատ-
ճառը. Սոսը պատմում է նրան իր աղետալի սիրո պատմութունը:
Հնդկական թագավորներից մեկի պալատում մեծանում էր
արքայադուստր Սոնդիպին, որն իր օրերը անց էր կացնում
արքունիքի մոտ տարածվող կախարդական հմայքներով լի պար-
տեղում: Ամեն օր երգախոս թռչունը սիրո և հրապուրանքի եր-
գեր էր երգում նրա համար, իսկ աղետալները նվիրում էր նրան
բազմագույն և բազմաբույր ծաղկեփնջեր: Մեկ օր աղետալների
փոխարեն պարտեղ է մտնում նրա որդին, երիտասարդ Կալի-
դասը. ծաղկեփնջերի հետ միասին նա սիրո ջերմ խոսքեր է հղում
Սոնդիպին: Սոնդիպին հրապուրվում է Կալիդասի համեստ ար-
տաքինով և խելոք խոսքերով: Նրանց մեջ հյուսվում է սերային
մի վեպ, որի մեջ Սոնդիպին իրեն զգում է երջանիկ, Կալիդասը
վարձատրված:

Սոնդիպիի շնորհիվ հարստացած և ոսկու փայլից խենթա-
ցած Կալիդասը շատ շուտով դրսևորում է իր խարդախ հոգին.
վարելով շվայտ և անառակ կյանք, նա դրժում է Սոնդիպիին
ոված իր նվիրական երգումը: Այդ կեղծիքը ծածկելու համար,
Կալիդասը որոշում է դավադրութուն սարքել Սոնդիպիի կյան-
քի դեմ, և ահա մի օր Սոնդիպին անհայտանում է պալատից.
Կալիդասը լուր է տարածում, թե նա փախել է ինչ-որ օտարա-
կանի հետ: Հայրը վճռում է գտնել անարդ աղջկան և որպես
պատիժ՝ դո՛ւ մատուցել աստվածներին. մինչդեռ Սոնդիպին Կա-
լիդասի մարդկանցից դաշունահար եղած կախված էր նրանց
կողմից Կանոջ քաղաքի պարիսպից, որպես կեր գիշատիչ ագ-
ռաֆներին:

Այդ նույն գիշերը Կանոջ քաղաքի պարիսպներին է հաս-
նում Հայաստանցի իշխանազն Սոսը. լուսադեմին նկատելով
կախված մեկին, նա մոտենում է պարիսպին և այնտեղ գտնում
արյունաթաթախ հնդկուհուն:

Սոնդիպիի գեղեցկութունը մի պահ շլացնում է երիտա-
սարդին. անմիջապես նա հանում է աղջկան տապանից և իր
մարդկանց հետ անդափոխում քաղաք: Վատնելով իր ամբողջ
հարստութունը, անվանի բժիշկների միջոցով նրան հաջողվում
է բուժել աղջկան: Առողջացած Սոնդիպին երախտիքով է նա-
յում սիրահարված երիտասարդին, բայց մտածում է վրեժ լուծել

Կալիդասից: Հետագա դեպքերի բերումով Կալիդասը և Սոսը հանդիպում են իրար. իմանալով այդ մասին, Սոնդիպին, Սոսի միջոցով հրավիրում է իր տունը Կալիդասին և նրա սիրուհուն: Խնջուքի ժամին, երբ Սոսը ընկնում է արեւեցումի մեջ, Սոնդիպին սպանել է տալիս Կալիդասին և նրա սիրուհուն ու թողնելով Սոսին՝ հեռանում քաղաքից: Սոսը փնտրում է Սոնդիպիին, բայց չի գտնում. հուսահատված նա սկսում է թափառել ամբողջ Հնդկաստանում: Հասնելով Այովդ քաղաքը, նա հանդիպում է իրեն ծանոթ Ստրոնաք ներքինուն, որից իմանում է Սոնդիպի տեղը: Պարզվում է, որ աղջիկը վերագարձել է հոր արքունիքը, սակայն ապրում է հորից դադարի: Սոնդիպիի պատմությունը, որը անում է նրան Ստրոնաք ներքինին, Սոսի համար հայտնի է դարձնում եղելությունը: Հանդիպելով Սոնդիպիին, Սոսն առաջարկում է նրան հեռանալ Հնդկաստանից. նա պատմում է աղջկան իր սքանչելի հայրենիքի՝ Հայաստանի մասին, նկարագրում է նրա փառավոր անցյալը—Հայկին, Արամին և նրա արժանավոր հաջորդներին: Սոնդիպին Սոսի նախահայրերի հերոսության, անձնվիրության և քաջության մեջ գնահատում է նրա հայրենիքը: Նրանք թողնում են Հնդկաստանը և ճանապարհվում Հայաստան: Նրջանիկ Սոնդիպին վարդավառի տունին հայ աղջիկների հետ ծաղկաքաղի է ելնում սարը. հանկարծ հայտնվում է նրա հայրը, դաշունահար է ահում աղջկան և իր երգման հաժաձայն զոհ մատուցում հայոց աստվածներին:

Սոնդիպին պոեմի կենտրոնական դեմքն է: Կտրված հասարակական կյանքից, նա իր օրերը անց էր կացնում բնության գրկում: Նրա մեջ ծաղկում է սիրո վայելքի բարի ու վեհ զգացմունքները, զգացմունքներ, որոնք միայն ընդունակ են վսեմացնել մարդուն, զարգարել նրա հոգին բարեմասնություններով: Երբ Կալիդասը վարպետորեն քողարկում է իրեն Սոնդիպիի առջև, պատրանքների մեջ գտնվող աղջիկը ոգևորված բացականչում է.

Ա՛ ինձ երանի
 Լինէր յիրավի,
 Տեսանել զքեզ,
 Որպէս ցանկայի,

Գոլ այնքան գոյուն,
Որքանդ հս գիտուն.
Միշտ անվիշտ երգել
ըջնուազ սիրոյն:¹

Երբ Սոնդիպին համոզվում է կալիդասի խարդախության մեջ, կյանքը կորցնում է իր հմայքը. նա այլևս չի հավատում ոչ ոքի, սակայն նրա մոտ հանգես է գալիս մի ուրիշ գեծ, որը և փրկում է նրան կործանման վտանգից: Այս անգամ արդեն նա կապվում է կյանքի հետ ոչ թե հիմք ունենալով իր ոտմանտիկ երազանքը, այլ կյանքի փորձը, որը նրան տալիս է ուժ և կարողություն՝ պայքարելու չարի դեմ և նորից մտնելու կյանք: Սոնդիպին այստեղ օգնություն է գալիս Սոսը, որը նրան օգնում է կապվել այդ իրականության հետ: Սոնդիպիի գաղափարական կերպարը լրացնում է Թադիադյանի մտորումների և խոհերի ծնունդ Սոսը: Հայրենիքում եղած ժամանակ Սոսն արդեն ճանաչել էր իրականությունը. զգլած և հոգնած նրանից, նա թողել էր իր ծննդավայրը և ճանապարհվել հեռավոր Հնդկաստան: Ահա թե ինչպես է նկարագրում նա իր ելքը հայրենիքից.

Եւ իբր ահագին
Յաղթ արաստոյ վէմ
Ի գահէ Մասսեաց
Ճայթուցեալ 'ի բաց,
Հասնայ ուժգնակի
Հարսայ և հարի
Փշրեցայ, այո՛
Բայց և փշրեցի:²

Ենթարկվելով կյանքի բազմաթիվ պատահաւորներին, բախտի չարագուշակ խաղերին, նա մեծ զօվարություն բերում է իր կյանքի ուղին, ղեկավարվելով մի հիմնական սկզբունքով. ամեն տեղ որոնել լավագույնը, ոչնչացնելով այն ամենը, ինչ խանգարում է նրա գոյությունը.

¹ Մոս և Սոնդիպի, 1847 թ., էջ 117—118:

² Նույն տեղ, էջ 18:

Քանզի տես, մարդ հիվ.
 Որ կեանս ապահով,
 Ղեկեաց ընդ անհուն
 Աշխարհի այս ծով:
 Ինձ այս կեանք դպրոց.
 Իսկ վարժապետ՝ փորձ
 Բուռն և բանացի՝
 Դասեր շատ ուսուցի:¹

Թաղիադյանն իր հերոսին զինում է իր անձնական փորձով
 և դա հնարավորություն է տալիս նրան, ինչպես ինքն է ասում,
 կշռել ներկան, գնահատել նրա մեջ երևացող բազմազան երևույթ-
 ները: Սոսի ականջին են հասնում ահա քաղցի մատնված ման-
 կան լացը, մոր կսկիծը.

Աղքատ առ քաղցի՝
 Անկեալ ի բացի,
 Տոչորէլ որպէս
 Ձուկն ի տապակի:
 Եվ զի՞ մի առ մի,
 Վայր առանց վշտի
 Ի ներքոյ երկնից՝
 Ոչ ուրեք տեսնի:²

Բանաստեղծն այստեղ խոր եղբակացություններ է հանում
 մարդու և նրա հեղեղուկ վիճակի մասին, նմանեցնելով նրան
 մի շիթ ցողի, որը բեկբեկվում է սեզի վրա.

Որպէս շիթ ցողոյ՝
 Ի վերայ սիզոյ.
 Յողդողդ ի վտանգ՝
 Է այս կեանք մարդոյ:³

Բանաստեղծի մոտ առաջանում են խոհեր կյանքի ունայ-
 նության մասին, սակայն նա չի հասնում կյանքի բոլոր երևույթ-
 ների բացասմանը: Այդ ունայնության զգացումն, ըստ բանաստե-

¹ «Սօս և Սօնդիպի», էջ 19:

² Նույն տեղ, էջ 23:

³ Նույն տեղ, էջ 24:

տեղծի, մարդու մեջ պետք է առաջացնի չարությունից խուսա-
փելու և բարի գործերին հետևելու անխուսափելի պահանջը, Բա-
րեք գործելու այս ձգտումը Սոսի բնավորության հիմնական
գծերից մեկն է. նա կորցնում է իր հարստությունը, բայց դրա
փոխարեն կյանք է տալիս Սոնդիպիին. դա բխում էր առաջին
հերթին նրա խոր հումանիզմից: Մարդու արժանիքները Սոսը
համեմատում է բնության ազատության մեջ կյանք առած արա-
րածների հետ: Թաղիադյանը նկարագրում է մի դեպք, որը պա-
տահել է Սոսի հետ: Դառնացած Սոնդիպիի անտարբեր վերա-
բերմունքից, իր տածած սիրո հանդեպ, Սոսը դուրս է գալիս
քաղաքից և մի ավերակի մեջ հանդիպում է տատրակի ընի:
Այդ ընդհանր տատրակի ձագուկները նկատելով սողացող օձին,
սարսափահար ծղրտում էին. պաշտպանության դուրս եկած մայրը
ընկնում է ընի մոտ, իսկ նրանց գլխին պտտվում էր խելակո-
րույս հայր տատրակը: Սոսը դաշույնով կտրում է օձի գլուխը,
փրկում ձագերին: Երախտիքի զգացումը տատրակ հոր մեջ առաջ
է բերում խոր էմոցիա. նա ընկնում է Սոսի ոտքերի տակ և
շունչը փչում: Այս դեպքը մեծ ազդեցություն է գործում Սոսի
վրա.

Քաղցրիկ բնութիւն,
Քանի իմաստուն
Ոչ իցէ, ասեմ
Քոյ տմեն շարժիւն:
Որ տաս օրինակ
Յայս անմեղ տատրակ,
Ամուսին սիրոյ.
Ծնողական գթոյ¹—

բացահայտում է Սոսը:

Խորապես ներշնչվելով բնության հավերժական օրենքների
վեհությունը, Թաղիադյանը գտնում է, որ մարդը պետք է վերա-
փոխի իրեն, մաքրի իր արատները՝ ներշնչված բնության ան-
կաշկանդ և միևնույն ժամանակ օրինաչափ երևույթներից:

Հումանիստական բարձր զգացման արտահայտություններից
մեկն է Թաղիադյանի զարգացրած մի նոր թեզը, որը վերաբե-

¹ Նույն տեղ, էջ 52:

ըսում է դասային և ազգային տարբերությունների հարցին՝ սիրո և հարգանքի ասպարիզում: Թաղիադյանն այստեղ ևս ղուբա է գալիս, ֆեոդալական մտածողության դեմ, որը կաշկանդում է մարդու սիրո ազատ զգացումը: Սոնդիպին սիրում է առանց հաշվի առնելու դասային և ազգային տարբերությունները:

Երբ սիրտ ընդ սրտի

Սիրոյ շաղկապի,

Ոչ ազգ, ոչ ազանդ

Անդ ունի դտեղին,¹

ասում է Սոսը Սարոնաք ներքինում: Սոսի պատկերացմամբ սրտից բխող սերը բարձր է մարդկային բոլոր տեսակի արտոնություններից. սերը մաքրում է մաքրկային հոգին նեղ կրքերից ու արատներից, և նրան տալիս վեհություն: Սիրո ուժը, նրա վեհությունը, Թաղիադյանը տեսնում է նրա պարզ հարաբերությունների մեջ աշխատավորական խավերի մոտ:

Ընդ հիւղ աղքատին,

Առաւել հաճիմ.

Քան ընդ արքունիս

Տաներան Քաջին.

Մարդ՝ քանի պարզ կեայ

Աճի սէր նորա.

Բայց ընդ ճոխութնան

Որն յաւելանայ:²

Սոսի այս վեհ կերպարին Թաղիադյանը հակադրում է հասարակական կյանքի տականքներից դուրս եկած Կալիդասին: Հակառակ Սոսին, Կալիդասը մարդկային բոլոր արժանիքներն օգտագործում է վատ գործի համար:

Դեղին ոսկու փայլը շլացնում է նրան, Թաղում մարդկային ասոր կրքերի մեջ:

Հեղինակը սրանից եզրակացնում է

Ո՞ր անհնարին,

Կամ զի՞նչ դժուարին,

¹ «Սոս և Սոնդիպի», էջ 103:

² Նույն տեղ, էջ 63:

Զոր ոչ դերացոյց
Դեղներես ոսկին¹

Դրամին գերի դառնալով, Կալիդասը հասնում է ծայր աս-
տիճան խարդախության: Թաղիադյանը նկարագրում է այն սար-
սափելի գիշերը, երբ Կալիդասը կատարում է իր ոճիբը: Այդ
տողերը հիշեցնում են Շեքսպիրի նկարագրած նման ահալոր
գիշերները:

Այսպիսով տեսնում ենք, թե ինչպես Թաղիադյանը հանձին-
Կալիդասի ըմբռնել է իր էպոխայի համար բնորոշ մոմենտներ,
որոնք պայմանավորվում են հասարակական նոր հարաբերու-
թյուններով, հին հասարակակարգի կործանման և նորի հաստատ-
ման շրջանում: Պոեմի վերջում գլխավոր հերոսը՝ Սոնդիպին-
դատապարտվում է մահվան, սակայն հաղթանակը մնում է Սոն-
դիպիի կողմը: Հաղթում է բնության աղատ մարդն իր հումա-
նիստական զգացումներով:

Այս պոեմի մեջ երևում է հեղինակի մեծ իմացությունը
հնդկական, հայկական դիցաբանության, զրույցների, ժողովրդ-
դական ասացվածքների, ոճերի բնագավառում: Նրա պատկերները
և համեմատությունները բազմազան են, բովանդակալից: Այդ-
պիսի համեմատություններից կարելի է բերել, օրինակ, հետևյալ
պատկերը.

Որպէս շանթահոս
Երկաթ 'ի բովուց
Մուխ 'ի սառուցեալ
Աւազան ջրոց,
Այսպէս Սիրոյն բոց
Ներգործեալ 'ի Սօս,
Անմահ տարփանօք
Զոգին եռացոյց:²

Պոեմում մեջ ընդ մեջ բերված են հնդկական ժողովրդական
ձոների ձևով հյուսված երգեր: Դրանց լավագույն օրինակներից
են երգախոս Թուշունի գովքը Սուրաջ Բինուն (Արևադուխտ),

¹ Նույն տեղ, էջ 40:

² Նույն տեղ, էջ 11:

Սոնդիպիւին և այլն: Թաղիադեյանի մոտ կան անակրեոնյան
մոտիվներ, կնոջը, գինուէն նվիրված երգեր, որպիսի ձևերի հան-
դիպում ենք նաև Հ. Թումանյանի մոտ:

Որ աչագեղիցն
Ի մէջ Յավերժից
Բորբոքէ ըզբոց
Ապաժոյժ կրից,
Զի գինի և զեղ
Թէ չիցեն մի տեղ,
Զթարդ ազգիցեն
Որ հաճ և համեղ:¹

Սոս և Սոնդիպիւն, որպես գեղարվեստական բարձրարժեք
գործ, իր ժամանակին խոշոր չափով նպաստել է բանաստեղծի
անվան տարածվելուն: Պատկերավոր գեղարվեստական լեզվի
և ստեղծագործական վարպետութեան հետ միասին նա բերում
է իր հետ ժամանակի համար առաջավոր գաղափարներ, ա-
ռաջ քաշում հարցեր, որ մինչ այդ չէին դրվել մեր գրականու-
թեան մեջ:

Աչքի ընկնող արժանիքների հետ միասին պոեմը ունեցել
է և թերութեաններ, որոնք հնարավորութեամբ չեն տվել լիովին
դրսևորելու բանաստեղծի հասարակական իդեալները: Մնալով
դասական պոեմի սկզբունքների շրջանակներում, Թաղիադեյանը
մեծ մասամբ պահպանել է վերացական ոճը, գրաբարյան խրթը-
նաբանութեաններ և այլն: Պոեմի մեջ առանձին տեղ է տրված
հրաշապատում տեսարանների նկարագրութեանը, աստվածների
միջամտութեանը, պոեմի համար ընտրված այդ ձևը մեծապես
խանգարել է բանաստեղծին իր ընտրած կենդանի, շարժուն
նյութի և նրա հասարակական իդեալների դրսևորմանը: Զեղ
նրա մոտ կապանք է դառել բովանդակութեան համար,

1893 թ. Հ. Մկրտչյանի հրատարակած «Եղիերեգութիւն յօր-
հաս Թանգայ Թաղիադեան» ժողովածուի մեջ՝ հանդիպում ենք
մի շարք բանաստեղծութեանների, որոնց նա տվել է «Զանազան
բանաստեղծութիւնք» վերնագիրը: Այդ շարքում կան անձնական

¹ «Սոս և Սոնդիպիւն», էջ 67:

լիբիկայի նստուհներ, բնության վայելքին նվիրված երգեր, անա-
կրեոնյան մոտիվներ և այլն: Անձնական լիբիկայի լավագույն
կտորներից մեկն է Թադիադյանի մի բանաստեղծութունը՝
«Տուտու» վերնագրով (որ ինքը՝ բանաստեղծը ժամանակին գե-
տեղել է իր «Թուրակ Թադիադեանի» մեջ): Բանաստեղծը դիմում է
իր սիրած աղջկան, խնդրում է լսել իրեն, կշտամբում է նրա
անգութ, անտարբեր վերաբերմունքի համար:

«Ե՞ս եմ արդեօք խաղալիք քոյ,

Որ 'ի հրապոյր խաբէութեան

Մտեալ յամարս հոգւոյ իմոյ

Կողոպտեցեր ողջ զիս Տուտու»¹

Բանաստեղծի խոսքերից երևում է, որ նա այլևս ոռոմա-
տիկական երազներով տարված չէ, նա ակնհայտ է եղել կյան-
քի արհավիրքներին և կործանվել է բազմաթիվ անգամ՝ նորից
կենդանութուն առնելով, նա ցույց է տալիս իր սրտի մեջ
առաջ եկած վերքերը և խնդրում նրան փրկել այդ տանջանք-
ներից:

«Մի խոշտանգէր զիս ընդունայն

Վիրաց զոր բաց նետ գեղոյ քոյ.

Զքեզ դարման դիր լավ Տուտու»²

Բանաստեղծութունն իր կատարելությամբ, լիբիկական
խոր զգացումով, անմիջականությամբ համակում է ընթերցողին,
նրա առջև դնում երգչի խոցումված սիրտը, որը նա ցանկանում
է բուժել սիրո միջոցով, նորից հաղորդակից դառնալու իրակա-
նությանը: Այստեղ Թադիադյանի՝ կյանքի հետ կապվելու փորձը
արտահայտում է իր մեջ չարիքը ոչնչացնելու, հաղթահարելու
ձգտումը:

Բանաստեղծն իր կյանքում ունեցել է նաև երջանիկ մո-
մենտներ, որոնք արտահայտվել են նրա մի շարք երգերի մեջ:
Նոր Զուղայի դպրոցին նվիրված «Երգը», «Ազգասեր» թերթին,
իր մանկության օրերին և այլն: «Երգը» իր ժամանակին ձայ-

¹ «Եղերերգութիւն յօրհաս Թանգայ Թադիադեանց», էջ 109:

² Նույն տեղ, էջ 110:

նագրովել և մասսայականացիել է ժողովրդի մեջ. դա հավանաբար եղել է նոր Զուղայի դպրոցի հիմնը: Դրա վկայութուններէից մեկը կարող է հանդիսանալ Աբովյանի մի բանաստեղծութիւնը, որը գրված է Երևանի դպրոցի մասին: Այդ բանաստեղծութեան առաջին տանը նման է Թաղիադեանի բանաստեղծութեան առաջին տանը: Պետք է ենթադրել, որ Աբովյանը պարզապէս օգտագործել է Թաղիադեանի բանաստեղծութիւնը որպէս ժողովրդական, հեղինակը կորցրած բանաստեղծութեան մի կտոր: Տարածված երգերից է եղել և Թաղիադեանի «Կենաց բաժակը», որը հիշեցնում է Պատկանյանի դորպատյան շրջանի ուսանողական երգերը: Ուրախ սեղանի համար գրված այս երգի մեջ տրված է նաև հայոց աշխարհի վերակենդանացման ջերմ բաղձանքը:

Ժողովրդական ստեղծագործութեան մոտիվներ են գրված նաև «Ազգասերում» տպված նրա մի շարք բանաստեղծութիւնների մեջ, ինչպէս օրինակ «Տնտեսականքը», որտեղ բերվում են դաշտում աշխատող գյուղացու խոհերը, նկարագրվում նրա երջանկութիւնը բնութեան ծոցում և հանգիստը աշխատանքից հետո: Նման մոտիվներ մենք տեսնում ենք հետագայում Ռ. Պատկանյանի մոտ:

Բանաստեղծի գրչին է պատկանում «Ազգասերում» տպագրված մի գեղեցիկ ոտանավոր «Երեկոյ» վերնագրով: Կյանքում բավականութիւն չգտած բանաստեղծի մոտ առաջ են գալիս թախծոտ, հուսահատական մոտիվներ, որոնք արտահայտվում են հասարակութիւնից հեռանալու, բնութեան ազատ ծոցում հանգրվան գտնելու տրամադրութեան մեջ: Հասարակական աղմուկից հետո, նա ցանկանում է լռութեան մեջ ամրեւել իր վշտերը:

Լռութիւն համայն

Տիրէր յայն սահման.

Ոչ ուստէք շշուէչ

Հասանէր ունկան,

Շնչէ՛ր զովագին

Սիւգ երեկոյին

Իմ տրտում սրտին

Ըսիտի գուարթագին,¹

¹ «Ազգասէր Արարտեան», 1848 թ., էջ 208.

Անձնական և հասարակական կյանքի հարմարներից առաջացած նման տրամադրություններ մենք հանդիպում ենք նաև Ալամգարյանի և Աբովյանի մոտ:

Թաղիադյանի, հատկապես թախիժարտահայտող գործերում նկատվում է նրա կրած որոշակի ազդեցությունը Բայրոնից, Թաղիադյանը սիրել է անգլիացի մեծ բանաստեղծին, առանձին տեղ է տվել նրա Թարգմանություններին իր թերթում և ինքը անձամբ Թարգմանել է նրանից բավականաչափ կտորներ: Նրան հրապուրել է աղգային աղատադրական պայքարում ընկած բանաստեղծի ընդլիզող հոգին, նրա մեջ կուտակված ոչ միայն թախիժը, այլև պայքարի ուժեղ շեշտը: Բայրոնի բանաստեղծությունների Թարգմանությունները վկայում են ինքնին իրեն՝ Թաղիադյանի ակտիվ հասարակական տրամադրությունը, որը նա աշխատել է արտահայտել նաև Բայրոնի տողերի միջոցով: Մարդկային չնչին կրքերից, տիրապետող ու մոլի բարքերից դառնացած, նա Բայրոնի խոսքերով դրսևորում է իր սեփական եզրակացությունը այդ իրականություն հանդեպ:

Անգամ մի տեսի զերազ պատուական

Տեսիլ խոստացող ինձ ազատութեան.

Ահ ճշմարտութիւն, է՞ր քո դառն նշոյլ

Չարթոյց զիս կրկին յայս աշխարհ տխուր¹

Թաղիադյանի մոտ հանդիպում են բնության երգերի, նա ոգեշնչվում է բնության պատկերներով, աշխատում խորանալ նրա էություն մեջ, ըմբռնել նրա ոգին: Հայաստանի Գրական Թանգարանում Ախվերդյանի արխիվում պահպանվում է Թաղիադյանի այդ կարգի անտիպ երկու ինքնագիր բանաստեղծությունները, որ բերում ենք ստորև.

1

ԱՇՆԱՆ ԱՌԱՒՈՏ

Ահ, աշնան առաւօտ սրտի իմոյ զարդ,

Դու բարեաւ ծագեցար ինձ բերկրութիւն արդ

Արեւտն կարապետ, քոյ պայծառ զիմաց

¹ Լ. Բայրոն «Իցէ՛ թէ տղա միամիտ էի...» «Ազգասէր Աբարատեան», 1847 թ., էջ 10:

Տամ սիրտ իմ զիւրովիմ պատարագ կամաց,
Ես իբրու, ես իբրու, ես իբրու նուեր կնտրկաց:

Թորթոմեալ հով ու զով ցողով գիշերացն
Շողշողաս գոյնըգոյն որպէս ծիածան,
Դու հոգի սոխակին, դու շունչ ես վարդին
Դու և քո քերթողին, քո սիրահարին
Ես իբրու, ես իբրու, ես իբրու նուեր հագնայ:
Նոր աւուր տունջեան դշխոյ քրքմազգեաց,
Գաս բազմեալ տիկնօրեն ի վարդազոյն կառս
Անիւք քոյ աստեղունք, երիվարք հողմունք
Փողայք քոյ մուգայքն և ծառայք ցոլմունք,
Ես իբրու, ես իբրու նուեր կնտրկաց:

2.

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՒՕՏ

Դու դարնան առաւօտ դշխոյ քրքմազգեաց
Յոլանան ամպեղէն կառօք՝ ի բարցանց
Անիւք քո աստեղունք, երիվարք՝ հողմունք
Գաս պճնէլ՝ զայս աշխարհ կոկոնիւք ծաղկանց
Ի ձեռս, ի ձեռս սիրունոյն տուր զփունջ ծաղկանց:

Սրսկին բուրաստանք ամպոցդ անձրեւով
Ծիւք ծառոց սաղարթեալք պսպղուն ցողով,
Ուր նստեալ ծլվան գեղեցիկ թռչունք
Զայնք նոր շրշրջեն քաղցրիկ զեփիւռով:

Թորթորէ թերթ վարդին արտօսը սոխակին,
Շողշողայ պուտ առ պուտ մինչ արեծաղի
Քե կայ շունչ սոխակին, քե հիւթն վարդին
Քե [հոգի բնութեան դու կեանք աշխարհի.]
Հոգի սիրունոյն և սիրահարին.¹

Այսպիսով Թաղիադյանի պոեզիան իր մեջ չըսկոբում է
19-րդ դարի առաջին կեսի այն գաղափարները, որոնք մի տաս-

¹ «Հայաստանի Գրական Թանգարան», Ախվերդյանի արխիվ, № 84.

նաւայակ անց, ավելի հստակ և ուժգին, հրապարակ եկան նրա հա-
ջորդների մոտ: Այդ պոեզիան մի ժամն էր այն գրականութիւն,
որը ելաւ փշրելու հայ հասարակական կյանքի կաշկանդող շղ-
թաները, հարթելու ժողովրդի համար ապագա կյանքի և նոր
կուլտուրայի լուսավոր ուղիներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

404 P.C. 110

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

1. ԴԱԻՐԷԺ*

Ի հնումն երկրորդ եկպատան, քաղաք հօթնպարսպեան
յԱտրպատականի զոր առին Պարսիկք ընդ Թագին Մարաց, էառ
դայն ապա Մեծն Խոսրով արքայ մեր՝ յԱրտաշրէ Սասանեան,
Բայց եթէ սա նորոգեալ կոչեաց զնա Դաւրէժ ի քէն արեան
Արտաւանայ Արշակունւոյ, և թէ որդի նորուն Մեծն Տրդատ առ
ի վրէժ արեան Խոսրովու հօրն իւրոյ, չկարեմ ստուգիւ ասել
Այս քաղաք եկաց, մնաց Պարսից՝ ցիշխանութիւն Մահմետակա-
նաց, յորում ժամանակի նստան ոստիկանք զենպետաց նոցա,
Ապա անկաւ ընդ իշխանութեամբ Աթաբեկաց, յորոց էառ Հու-
լաքու Խան: Զինի նորա նստան ինքնագլուխ իշխանապետք, մին-
չև ի Մեծն Շահաբքաս Առաջին. զինի նորա մարզպանք յաջոր-
դաց նորա ինքնագլուխ նստան անդ. ապա օսմանեանք տիրե-
ցին նմա, յորոց էառ Նազիր Շահ: Յետ նոսա ի մեջ Օսմանեանց
և Պարսից կռուածադիկ եկաց՝ մինչև ցՄահմադ Խան Ղաճար, որ
զամենեսին յաղթահարեալ եթող ի ժառանգութիւն եղբորորդւոյ
իւրում Փատալեայ արքայի Պարսից, որ կառավարէր ի ձեռն
Արքաս Միրզայ որդւոյ իւրում:

Դանձակ շահաստան ասէր սա առ հինսն. բայց Պարսիկք
չունին ինչ յիշատակութիւնս այդր անուան ոչ ի բերանս և ոչ
ի գիրս իւրեանց: Խոտեն և զհայացի ստուգաբանութիւն անուանս
Դաւրէժ, և զորս ինքեանք փոխանակ կացուցանեն՝ այնքան ան-
տեղիք են և անյարմարք վայելչաբանութեան պարսկերէնախօս
բարբառոյն, մինչև անալիս իմն առնել դայն՝ մեկնելով ԹԱԲՐԻԶ:

* Այստեղ տալիս ենք Մ. Թաղիադյանի անտիպ ժառանգութիւնից մի
քանի փաստաթղթեր, որոնք բացահայտում են հեղինակի կյանքի և դործու-
նեութեան չլուսաբանված էջերը:

Թաք՝ է ջերմն. ուր՝ հեղուլ, վիժել, որով ըստ նոցա՝ Թաքրիզն նշանակէ քաղաք ջերմաթող յաշխարհին հրոյ. և՛ տղայոց անգամ արժանի ծաղու:

Որոց կամք իցեն տեսանել զհինն Դաւրէժ կամ Դանձակ շահաստան՝ պարտին ունել զշաւիղ նախնի ճանապարհորդացն առ նա ի հետս ծովուց: Վասն զի որպէս մակերևոյթք նոցա ի հողմոց անտի սոյնպէս և քաղաքիս և գաւառիս այսորիկ ի հանապազորդեան երկրաշարժից ստէպ-ստէպ յեղյեղեալ փոխեցին զգիրս և զձև զշինութեանց իւրեանց: Արդի քաղաքն Դաւրէժ կառուցեալ ի ստորոտս Ալագազ լեւին յարևելից Աճի գետոյ, բերդապարիսպ է. շուրջ զորով ունի խրամս լիս ապականութեամբ և նեխութեամբ՝ որ փասս մեծ պատճառէ առողջարար զօրութեան մաքրագոյն օդոց նորա: Տունք Պարսից ի պարսպի անդ հաշուին լինել 8000, իսկ Հայոց 500 միայն: Այս առումն վերաբերի լոկ առ բերթապարիսպ քաղաքիս. բայց հրուանդանք և արուարձանք նորա ձգեալ ի կամրջոցն Աճեայ մինչև ի Բարութխանէ ընդ արևելս, և ի Սուրխաբայ ի հիւսիսոյ՝ մինչև Յալինջա դաշտն կամ ի պարտէզ Սէթ Խանի, իբրև հինգ փարսալաց շրջապատիւ, այգեօք խաղողուոյ և ամենայն պտղոց.— զորս մի առմի յիշիլով ոչ այլ ինչ առաւել առնեմ, քան զսոսկ թուումն մասանց:— Միայն զայս և եթ արժան համարիմ յիշեցուցանել, զի Դաւրիժեցիք ականաւոր շինեն զսունս իւրեանց. և այն հետ զհետէ կործանմունք և նորոգութիւնք նոցա ի տեղիս տեղիս՝ թողուն ականս ամայիս և անկոխս ի մարդկայնէ. զորս սրիկայք երկրին առնեն ի պատկանդարանս ամենայն չարագործութեանց իւրեանց: Ընդ զուռն արդի քաղաքին ելեալ, որ կոչի Խալաթփուշուն, գաս ի մզկիթ ինչ կանաչ. առ ճանապարհաւն՝ որ հանէ յՈւջան: Յառանձնութեան քում կամ ի մենութեան գիշերոյ և երեկոյի՝ աղաղակէ առ քեզ ուրուկ ոմն կամ դարվիշ զողորմութիւն տալ: Զգուշացիր, մի հուպ լինէր, անց ի բաց, զի ական մեծ կա ի ներքոյ մզկիթին. և ի նմա սրիկայք բազումք. եթէ գնաս՝ յանկարծ ի ներքս քարշեն կողոպտեն զքեզ մերկ ի մօրէ. եթէ կամին արձակեն, և եթէ ոչ՝ սպանանն: Եւ այսպիսի տեղիք բազումք են ի շրջակայս քաղաքին՝ առ ի վտանգ մեծ անդգոյշ օտարականաց:

Վաճառանոց նորա սկսեալ ի հարաւոյ առերի Հայոց թա-

ղին, ձգի ընդ հիւսիս մինչև ի հրապարակն Հաղարթ Սհապի կոչեցեալ. ունի աստի և անտի մեծակառոյց պանդոկս. յորս երևելի են խանն Գուրջոց և Միրզայ Մեհդւոյն, Յարեւից կողմանէ սորա է Արկն կամ ապարանքն իշխանականք, շինուած գեղեցիկ ըստ քմաց Պարսից. լի աւաղանօք, ծաղկոցօք և առուօք միանգամայն: Հարամ կանանաւոյն ի թիկանց անկանի նորա, մի միգամայն գուռն նորա բանի ի բակ անդր Արկին. և բարձրաբերձ պարխապք նորա յաչաց հանեն հողանիւթ արարածոց զառարկայս սիրոյ դիցն անմահից: Երևելին ի հնութիւնս Դաւթեժայ է բուրգն բարձրաբերձ Շամղազան Ալիշահ անուանեալ յարեւեան հարաւոյ անկիւն բերթապարսպին, շինուած հզօր և հնագոյն, որ դիմացաւ այնքան սաստկութեան շարժիցն. մանաւանդ պատահելոցն երկու ամօք յառաջ քան զայս ի 1821: Այս բուրգն (որ ինձ թուի մասն շինուածոցն լեալ՝ որ կոչին Թաղսը Հուլաքու.) է շինուած յիսուս կանգնոց բարձրութեամբ. թէպէտ կատար նորա կիսով հափ խորտակեալ ի բաց՝ համակ յաղիւսոյ թերձելոյ և ի կրոյ շաղախելոյ: Կրկին ելանելի կամ աստիճանք են ի նմա, մին ի ներքուստ՝ ընդ որ ոչ ումեք թոյլ տրի գնալ. իսկ միւսն՝ մին ի ներքուստ՝ ընդ որ ոչ ումեք թոյլ տրի գնալ. իսկ միւսն՝ արտաքուստ՝ յոր ելեալ նորասիրաց յանդիման աչաց տեսանեն ոչ միայն դժգոհքին վճիռ յատկութիւն, այլև զլայնատարած զաշտին ձգելոյ ցԳուռնէի և ցԿապոտան ծովակ: Առերի սորա է ձուլարան թնդանօթաց և գործարան հզօր ծակելոյ զնոսա՝ պատկանեալք մեծանուն իշխանին Սեթ խանի, վատակ իմն հանեալ այսր ի ձորոյն Սալաթփուշանայ՝ բաժանի ի հաղարաւոր յառաջս, և բաշխի տանց ի տունս քաղաքին յարբուսն և ի սրբութիւն նոցա:

Յայսմ ժամանակի Մերագինք ի քաղաքիս կային ի մեծի ստրկութեան. զեկեղեցի նորոգ շինել ոչ կարէին, և ոչ զխալտեալն նորոգել: Ըստ սաճկական գոռոզութեան բնակչաց նորա՝ յաժինայն յընկերակցութիւնս՝ նաջիսս համարէին, որ է՝ պիղծ և առաւել ևս՝ զի յառուրս անձրեոց ոչ ներէին նոցա արտաքս ընդ փողոցսն ելանել. զի մի տամուկ զգեստութն հուպ մատուցեալ՝ պղծեսցեն զինքեանս:

Իբրև հասաք ի քաղաք այսր՝ բարեացապարտ Մաղսուդ խան, որ լաւապէս ևս ճանաչէր զբարս և զբնաւորութիւնս ազգին իւ-

րոյ, յանձն արարեալ զիս միտում ի հաւատարմաց իւրոց տանել առ Տէր Յովհաննէս՝ ինքն չոգաւ յապարանս իւր:

Միրզա Ալի բէգ կոչէր անուն հաւատարմին. բայց յորժամ հասաք ի տուն տեառն Յովհաննու՝ վաճ, եթէ հաւատարմութեամբ կատարեաց նա զպատուէր Խանին. «Քեշիշ» ասէ նա ցքահանայն ահահար. «Մաղսուդ Խան առաքեաց զսա ի հիւր քիզ, պատանի յամհնաբարձի արենէ Հայոց, ճգնաւոր դարուս, հանձարեղ ի Մսհհեաց, Խալիֆային մեծի աջ բազուկ, և այլն, և այլն, զի պատուեսցես զդա իբրև զերես իւրոյ ինքեան»:

Խանն միայն ասաց ցնա՝ «Տար յանձն արա»։—ձարպիկ էր Տէր Յովհաննէս, և սկսաւ հազարիցս հազար անգամ ասել. «Խան՝ բարեաւ գայ, Խան՝ ողորմած է, Խան՝ ամենամեծ է, որ զնուստութիւն մեր արժանի արար մտածութեան իւրոյ. և զայս՝ (մերձ վիշտասան վերտառութեամբ զրուատեալ) հիւր՝ առ իս առաքեաց: Բարեաւ եկայք, օհ ի ներքս Ախոռի ձերում, Տեսրք»։ Բարևոք զիտէր Տէր Յովհաննէս, զի թուրքն ընդ յարկաւ ոչ մտանէր իւր. այնինչ թէ նա և թէ ես՝ բոլորովին թացեալ էաք յանձրեոյ: Ուստի և սովին հիւրասէր հրաւիրանօքն ասել կամեցաւ միայն, թէ՛ «Ձուր բերեր ընդունիմ,—գնա, կորիւր դու»։ Չոգաւ Միրզայ Ալին և ես առսյ ի տուն հիւրասերին. ուր կացի զաւուրս հնգետասան, զի կարավան ոչ ելանէր. և համարեցայ անվճար ծանրանալ սրբազան վաստակաց նորա. վասն որոյ աճապարեաց յուղի արկանել զիս որքան յառաջ՝ այնքան քիջ:

2. Ե Լ Ք Ի Դ Ա Ի Ր Ի Փ Ո Յ

Հաճի Աղա Մաղանդարունի՝ գայեակ որդւոյ ժառանգին արքայութեան Պարսից, որ ունէր կանայս վեց ի Դաւրէթ, և նոյնաթիւ ի Թեհրան, առեալ ընդ իւր զերկուս ի կոսնանւոյն Դաւրիթոյ և զդուստր մի գեղեցիկ՝ հանդերձ բազմութեամբ այրուծիոց և զրաստուոց՝ ելանէր մեծահանդէս շքով ի Թեհրան քաղաք: Էր սա այր վտիտ մարմնով և տկար ուժով. քարձ մօրուօք և թուխ դիմօք. կարի զակատեալ զհետ ծխոյ խորխուռակին. հիւժաղէմ և ժանտ: Տարբեր զխովին յարգարակորով իշխանէն Մաղսուդ Խանէ: Ուստի և մի ոմն ի ծառայից նորա՝ յատկացեալ էր սոսկ մի պաշտօն ծխախոտւոյն: Հեծանէր ի ձի յորոյ յաջմէ

ի կախ գնայր կաշեայ խորխոռակամանն, յորում խորխոռակն էր՝ ամենայն պարագայիւք, և ունելիքն երկաթի, իսկ ի ձախմէ երկաթի կրակարան կամփսակաձև, ծակտիս ունելով շուրջ զիւրեաւ ի մուտս օդոյ՝ յարծարծումն հրոյն: Եթէ դէպ լինէր իշխանին ձգել զուսպն ծխային, խորխոռակապետ նորա փոխէր իսկոյն զշուրն դարշահոտեալ. ապա թրէր զխոտ մանրեալ յառաջագոյն, տինա թէ և լուանայր իսկ. երկիցս փոխելով զշուրն և սեղմելով ի դրընդին: Ապա բարձեալ կայծակուսն հրոյ ի վերայ՝ ագուցանէր ի ծխարան խորխոռակին, և իջեալ յերկվարէ՝ մատուցանէր նմա զերկայն և զգալարածոյ ծխածիգն, և գնայր հետի զհետոց նորա՝ մինչև թմրէր իշխան իւր ի ծխոյ անտի, և ապա մեկնէր ի քաց:

Տէր Յովհաննէս, անժուժկալ կարավանին պատահելոյ՝ յառաջագիր եղև ինձ ընկերել անաւորիս այսօրիկ: Ի ցուցանել զակնածութիւն ընդ կեղծ յերեսաց նորս, գնաց նա առ Արքաւ Միրզա և նորանոր ստեղծաբանութեամբ եզիտ ինձ ի նմանէ զհրամանագիր անցից, յանուանէ յիշելով ի նմին՝ թէ պաշտօնատար լեալ իցեմ դեսպանութեան Ռուսաց ի Պարսկաստան. և առաքեալ յերմալովայ ի խնդիր մեծի իրիք պատեհութեան: Առ ի պարտակեալ ԶՍՈՒՏ այսքան անաւօթ՝ պարտաւորեցաք կրկտել ուրոյն զհանձարս մեր, և այնքան սուտ յօրինել մինչև դիւրահաւանութեան Պարսից հաւատարիմ ընծայեցաք զառաջինն: Վասնորոյ ծպտեալ վերստին ի ձև Վրացի, (գիսականի գլխոյս անվթար թողեալ տակաւին,) ծալեցի զանազան թղթեան՝ ի ձև պահարանի դրոց. և կնքեալ մեծամեծ կնքովք գտելովք առ Տեառն Յովհաննու, որ փորագիրն էր արուեստին, եղի ի մաղախ, և կեղծեալ որպէս թէ իցեմ ոմն, հեծա ի չուն ընդ Հաճի Աղայի:

Այն զի տարածամեալ էր օրն, և ժամն բարեբախտ գուշակեալ ելից նորա յաղթարաց Պարսից, քերեալ գրեօք մէջիթաւ. և անցեալ ընդ երկարածիգ խերեվան կամ պողոտայ Այգեստանեացն թողաք յաջմէ զաւերակս քաղաքի ի ստորոտս Սէէնդայ. և ելաք ի Բարութխանէ. որ այն ինքն էր վառօդարան Արքաւ Միրզայի, կառուցեալ սքանչելի գործարանօք և ջրադարձ անուօք երկաթեօք՝ ուղիղ յարեւելս հարաւոյ այգեստանեաց Դաւրիժոյ. զոր հսկովէ վտակ ինչ ստորերկրեայ գնացիւք բերեալ անդանօք

ի Խալաթփուշուհն պարտիզէ արքայորդուոյն, ի կուսէ վառօդարանիս խաղայ ի Դաւրէժ գետակն Միհրանըրուտ կոչեցեալ, բղխեալ ի լեռնէն Սհէնդայ: Աստի ուղիղ ընդ յարեւելս՝ ճանապարհն է կարի խորդուբորդ ի պատճառս անհամար բլրոց մի զկնի միոյ յարուցելոց անդանօր: Ժամուս և կիսոյ խաղաղ ընթացիւք հասաք ի Խալաթփուշուհն, որ է ձորաբերան վայելուչ ի մէջ Ալատաղ լեռին բլրոցս ստորագրելոց, և ագաք անդանօր: Յայսմ՝ վայրի տնկեաց ծառաստան ընտիր և կառոյց իւր ապարանս՝ վայելուչս Աբբաս Միրզա, և անուանեաց Խալաթփուշուհն կամ տեղի խիւսայ զգեցնլոյ: Ուր ի գալ խիւսայից յարքայէն Պարսից՝ ելանէր նա ինքն ամենայն պատուական աւագանեօք քաղաքին, և զգեցեալ՝ ի դառնալն մեծահանդէս շքով ընդունէր զընդ յառաջ ելեալս իւր ի շնորհաւորութիւն և ի խնդակցութիւն: Ամենայն Հայ բնակիչք Դաւրիժոյ մանաւանդ թէ եկք յօտարաց՝ տոնէին զայս հասարակաց զբօսարան և զեղխէին անդ գրեմ թէ յամենայն կիւրակէս տարւոյն:

Աստի ընդ առապարն զառ ի վեր չորս փարսախօք՝ հասաք ի Հաճի Աղա գեօղ տաճկաց՝ 100 տանց՝ ի դաւառիւն Ուջանայ, որ ուղիղ ընդ արեւելս անկանի Դաւրիժոյ, ունի զնոյն լերինս զոր և նա: Ունի պետակ յոմանց համանուն գաւառին իւրոյ, և յոմանց՝ ընթերակայ գեղջս Ուջան Սուլէի կամ Հաճի Աղայ Հայի կարգացեալ, որ բղխեալ ի Սհէնդայ, և յինքն ընկալեալ այլ ևս անհամար աղբերակունս բղխեալս յարօտն Հաճի Աղայ դիղջ՝ ընթանայ ի հարաւոյ ի հիւսիս, և անցեալ ընդ կամուրջ երկկամարեան մտանէ ի զարհուրելի քարածորն կուլուլի, խառնի յԱճին գետ, որ ոչ թէ ի Սհէնդայ բղխի որպէս դնէ Ինճիճեան, այլ ի լերանց աշխարհիս Հայոց: Առ կամրջաւ գետոյս ընդ արեւելս են աւերակք ինչ, ուր ի ժամանակս ժամանակս գարնանի գաղին հուզկահարք, և յանկարծ ի վերայ հարձակելով որոց զոյժն կշռեն հաւասար ինքեանց՝ կողոպտեն զնոսայ: Դիպուածով և եթ մտեալ ինոսա գաի զարիւն նոր և զհետ ընթացեալ շաւղացն տեսի զդի ընկեցիկ անդանօր և քարակոյտ մեծ ի վերայ նորա: Գետն ի հարաւոյ ընդ հիւսիս, և ճանապարհ մեր արեւմտից յարեւելս ուղղակի, հատանեն զմիջոց դաշտին ի ձև իմն քառակուսի, որոյ ընդ հարաւ անկանի գիւղն Հաճի Աղայ, և հայի յարօտն խոտաւէտ՝ յորում ամի ամի ի բանիլ գարնան արածեն երամակք ձիոց Աբբաս

Մերգայի և խանից նորա: Աստ հասին կանայս Հաճի աղայի հե-
 ծեալք յանդրուարս և ի պաղպաղունս: Զանդրուարդ առնում փո-
 խունակ Թահաբաւանի, որ է դեսպակաձև գահաւորակ իմն բար-
 ձեալ ի չորից լծակաց, երկուց առաջուստ, և երկուց՝ յետուստ:
 Երկաքին շորիք բառնան զայն, մի յառաջոյ լծակացն ընթանա-
 լով ի միջի, և միւս յետոցն: Ունի աստի և անտի դրունս և լու-
 սամուստ, այլ Պարսիկք հակառակօրէն ծածկեն զայն ազնուագին
 բալափուշաւ կամ անդրուարակալաւ: Որով իբրև զկոյրս շրջեցու-
 ցանին: զկանայս իւրեանց ի տեղւոյէ ի տեղի, և զրկեն զնոսա ի
 հասարակածանօթ և ի պիտանի տեսարանաց: Իսկ պաղպաղուն
 բառիւ կամիմ յայտ առնել զՔէջաւայն, որք են երկու կամա-
 րակապ արկեղանիստ և փայտակերտ բառնալիք, հակ առ հակ
 բարձեալք ի վերայ միոյ շորոյ, և ծածկեալք նոյնպէս ազնուա-
 գին պաղպաղունակալաւ: Տանին սոքա մի զմի ոգի, և այս հա-
 սարակաց է գրեան թէ կանանույ Պարսից: Գնան նաև հեծեալ ի ձի,
 յէշ, և ի գումէշ: Այլ ինձ զի փոյթ զնոցանէ՝ որոց ոչն ընկերեցի:

Ամաչիւս ասել, թէ ծառայք Պարսից ի հեծուցանելն զնոսս
 և յիշուցանել՝ վայելեն զամենայն փափկութիւնս գողտրական
 մարմնոց նոցա: Զի կանանին պարտաւորեալ ի պարկեշտութիւն
 առաւել քան թէ բնաւորեալք փոյթ տանին ծածկել միայն զե-
 րեսս իւրեանց: Իսկ տարածև զգեստ նոցա, որ անաշխատ բանայ,
 մանաւանդ ի ստորև կացելոց զամենայն առարկայս ցանկու-
 թեան, ստէպ մղէ զծառայս ի ջերմեւանդ իմն պաշտօնատարու-
 թիւն նոցա: Անխնամ ես, որպէս և էի, անձամբ անձին դարման
 տանէի երիվարիս, զի Յովիկ տենդէր, յորժամ մի ի կանանուցն,
 որ հեշտի անկեալ ի վերայ բազկաց ծառայի ուրուք իջանէր ի
 վայր՝ և յանկարծակի յառեցան աչք նորա առ իս՝ անզգամօրէն
 ձիչ բարձեալ ասաց, «Բու քիմն իթի դը»: Որո՞յ շուն է սա—
 Պատասխանեաց ծառայն յափշտակեալ ի գեղոյ, թէ «Ռուս իթ-
 լարդան»: Ես ինքն՝ ի շանց Ռուսաց: Իբրև եդ զնա յոտին, առեալ
 քար և ձգեալ առիս, որպէս թէ ի ցոյց քաջութեան և ջերմեւան-
 դութեան իւրոյ՝ ասէ ցիս, «Լա՛յ քեաֆուր օղլի քեաֆուր զա՛յ»: Փա-
 խի՛ր անհաւատի որդի անհաւատ, փախի՛ր: Նորութիւն իրին, և հա-
 ըուած քարին փութով բռնացած ի վերայ հնազանդութեան իմոյ:
 Փախեա երեսաց նոցա, բայց զմտաւ ածեալ, թէ տակաւին մօտ
 գօլով Դաւրիժոյ՝ կարէի, որով եղենակաւ և մարթէի, ածել զնո-

սա ի չափ իմն ընկերության, տինա և կսկիծն առաւելեալ ի հա-
րուածոց անտի քարին՝ գրգիռ շատ մատոյց. ուստի մատուցեալ
առ նազիր դայեկին, որ էր նորա իբրև տնտես: Ասացի «վասն
որոշ չարի հարկանիցէ ինձ ծառայ նորա. ահա երթամ ի Դավ-
րէժ. տամ Աբբաս Միրզայի զթղթեան դեսպանիս ինքնին առա-
քել. ըստ որում այնքան անկանոն երկիր ունի, յորում մարդիկ
զմարդիկ անպատճառ հարստահարեն»։ «Ոչ, ոչ բնաւ երթիսցես դու
դժկամակ ի մէջ», ասաց նա. և կոչեալ զծառայն սաստեաց և յա-
ւել ասել ցիս՝ թէ «սուրբ է ի Պարսկաստան երես կանանուոյ, և
հշ ոք կարէ հայել ի նոսա առանց վտանգի կենաց: Վասն որոյ
զգոյշ լիւր, և մի հուպիդնասցես նոցա»։

Ի հաճի Աղա գեղջէ ընթացեալ նախ յարևելս հիւսիսի,
եկաք ի պանդոկ ինչ հին քայրաշէն և քայքայուռ՝ առ ստորոտ-
ւով դժուարագնաց կրճիցն՝ որ հանէ ի մեծ դաշտն Ուջանայ, ի
հնունն էր աստ քաղաք, բայց այժմ աւերակք նորա հարթեալ
յարօտս ընծայեցան անասնոց Պարսից, Աստ կառոյց իւր Աբ-
բաս Միրզայ ամառանոց վայելուչ. աստ բղխի ջերմուկ առատ
ծծմբահոտ ջուրց, յոր լուանին յամառան բազմութիւն ազգաց:
Սա խառնեալ ի գետն Հաշթարուտ՝ երթայ ի միանայ, և ընթա-
ցեալ ընդ հիւսիս՝ խառնի յԵրասխ գետ: Ի Հաճի Աղայէ 7 փար-
սախօք հասաք ի Թաքմատաշ գիւղ. այլ թողեալ զնա՝ եկաք
իջաք ի պանդոկին՝ որ ի խոնարհ քան զնա երկու մլոնօք. ուր
անսուաղ անցուցի զգրիշերն բովանդակ. զի ոչ ինչ վաճառէր գնոց
ի պանդոկին, բայց միայն յարդ և դարի:

Միով փարսախօք հանք ի պանդոկէն Թիքմատաշայ՝ է Իւչ-
դարիա, երեք անկիւնի ձորակ իմն կանաչաբեր, առ երի Սօմ-
մայ գեղջ յարևելս հարաւոյ նորա. ուստի խաղայ վտակն որ
խառնի ի Հաշթրուտ. և ի վերայ նորա կամուրջ փոքրիկ և քա-
րաշէն:

Աստի եօթն փարսախօք հասաք ի Թորգման գիւղ գեղեցիկ՝
ի ստորոտս միաշար գօտեաց պարսկայինն Տորոսի, միով և կի-
սով փարսախի ընդ հարաւ նորա. ուստի եկեալ վտակ խոխոջուռ՝
կարկաչէ ի Միանայ, և խառնեալ ի Հաշթրուտ՝ ընթանայ զհիւ-
սիսաւ: Այս գեօղ է սուրհարան տէրութեան, ունի պարտէզս
ամենաբեր ծառոց. բերէ սեխ և ձմերուկ առատ, այլ խաղող նո-
րա թթու: Որսոց անբաւ առատութիւն ի լիւրինս նորա: Աստա-

նոր անձրև սաստիկ, ուր ես բացօթեա չկարելով անցուցանել
զդիշերն՝ և մեծապէս գարշելով ի գարշողաց անտի իմոց՝ եկի ի
խնդիր օթի իրիք: Եւ ահա պատանի ոմն Սաֆարալի անուն, որ
էր տէր սուրհարանին Թորգմանայ՝ հրաւիրեաց զիս ի գոմ անդր
իւր, ցամաքեցոյց զհանդերձս իմ ի տամկութենէ անձրեոցն, մա-
տոյց զեղ Յովկանն՝ և կերակուր առատ ինձ, և հրամայեաց քեզ
իւրում խարշել ինձ զմարի վասն վաղուին, մեծապէս արհամար-
հելով զխտրանս Հաճի Աղայի և որոց ընդ նոսա կարի՛ յոյժ
մխիթարեալ ի գեղեցիկ առնն հիւրընկալութենէ՝ ի մեկնիլ իմում
մատուցի նմա Ռեալս երկուս. այլ նա ոչ բնաւ ընկալաւ զնոսա.
Ճշանապարհորդ ես՝ ասէ, և պէտս բազում ունիս դոցուն՝ քան
թէ ես. հիւր Աստուծոյ կղեր ինձ՝ բարի եկիր»:

է և այլ ճանապարհ ի Թիքմաստաշայ գէպ ի Միանայ, որ հանէ ի Մեհմանդօստ և ի Մէհմանքուշ գիւղօրէս Տաճկաց: Մեհմանդօստ զհիւրասէրն յայս առնէ, իսկ Մեհմանքուշ, զհիւրասպանն: Եւ հաւատմն արդեօք, զի բնաւորութեան բնակչաց յատուկք են անուանքդ և հանգամանք նոսա: Չէ միշտ զանազանութեանն առաւել քան զմի մղոն. այլ զեռ ևս մին զհիւրն սիրելով և միւս ատելովն իւրով յայտ առնեն զտարբեր խառնուածս արեանց յորոց և զանգեցանն: Տեսեալ Յովկան զյարադալար զուարթութիւնս բլրոցն և զանջուր անդորայ նոցա՝ ասաց. «Հանց զիտեա այսպիսի երկիր իցէ այս, որպէս և հայրենիք իմ»: Պատասխանեցի, «Այո, եթէ այդ ոչ իցէ»: մատամբացի ցուցանելով զՄէհմանքուշ. և պատմելով նմա զանգթութենէ բնակողացն ի նմա՝ ընդ որ կարի զարմացաւ:

Ի վաղիւ անդր թողեալ զԹորգման, և գտուն Սաֆարաւեայ անմոռաց երախտագիտութեամբ՝ յուղի անկաք գէպ յաւան միա- նայ: Ճանապարհ ընդ փարսախս չորս՝ կարի առապար. զարհու- րելի քարաժայռիւք և սեպացեալ բլրովք աղխադեալ. ընդ որս հզօր անցանէ հեղեղատ ի միաշար զօտեաց լերին Տարոսի: Ի գարնանի այնքան սաստիկ ընթանայ այս գետակ մինչ վէմս մե- ժամեծ և ըզջորիս բեռաժն հանգերձ առնուլ զեղուլ ի գետն մեծ Միանէն: Երեք փարսախսօք ի Թորգմանայ հասաք ի Զէսմըշուր, որ է աղբիւր աղի բղխեալ ի ձորակ ինչ հռանկիւնի՝ յանդիման լերին մեծի ի հարաւոյ. յորմէ այլ ևս երեք փարսախսօք հասաք ի Միանա. կառուցեալ ի մէջ խորին դաշտավայրի շրջապատե-

լոյ մեծամեծ լեռամբք յարեւելից հիւսիսոյ համանուն գետոյն, և յաջմէ ճանապարհին Չանդանայ: Թէպէտեւ ի դիրս ուրեք ոչ սլա-
տահեցայ, սակայն աւանդապահք ի ծերունեաց Էջմիածնի ուսու-
ցին ինձ այսպէս ցտուգաբանել զանուանս երեւելի վայրաց
Ատրպատական աշխարհիս: Իբրու այն թէ՛ ետ դառնալոյ մեծին
Տրդատայ յունական զօրօք ի Հայս, տիրելոյ Երկրորդն Եկե-
տանի, և ի վրէժ արեան Մեծին Խոսրովու անուանելոյ զքա-
ղաքն Դավրէժ, խաղայ ապա ի վերայ աւանիս այսորիկ, որ ի
ժամանակի այնմիկ քաղաք բազմամարդ. և տիրեալ նմին կար-
գայ զանուն նորա Միանայ. այսինքն թէ թող և այս քաղաք
ընդ Հայաստան միասցի: Ապա աստի յԱրդաւել. և կոչեաց զնա
Արդ յաւել. այսինքն թէ՛ այժմ յաւելաւ սոս ի սահման ճոխու-
թեան Հայաստանեայց աշխարհի: Իսկ ի բարբառս Պարսից նշա-
նակէ միանայդ կամ լաւ ևս միունէ՛ զմիջոցն. և այս արդի
աւան, կեդրոնացեալ ի միջոց դաշտավայրին շրջապատելոյ լե-
ռամբք՝ գեղեցիկ ևս յարդարութեամբ ի դրից և զանունն ըն-
կալնու: Որպէս Մեղրի Կրճիվանայ, նոյնպէս և զՄիանա Թորգ-
մանայ համարիմ գոլ ձմեռոց: Վասն զի այն ինչ ի Թորգոման
նոր ի նորոյ բանիւր գարուն, և ծաղկունք ի ծառոց պոկիլ
սկսանէին, ի Միանայ վեց փարսախօք եեթ հեռի ի նմանէ՛ նա-
խախայծ զթուղթն կերաք. յորմէ յայտ է անտանելի ջերմու-
թիւն ամառան նորա: Տունք Միանայ անշուք հողակերաք. և
գեղջուկք բնակին ի նոսին: Հարցեալ ցտուրհարանապետ տեղ-
ւոյս՝ թէ քանի տունք իցեն ի Միանա. պատասխանեաց «երկու
հազար»: Եւ եթէ ոք ըստ Պարսից տեսանիցէ զհաշիւ բաղմա-
մարդութեան երկրին, ընդ Հափ անցանէ թուոց: Երկերիւր գեր-
դաստանք Տաճկաց հազիւ գտանին, վարուք կարի անընդելոք և
խուժադուժք. հազորդեալ վարուց բնակչացն մեհմանքուշայ:
Օտարատեացք են, և գրեթէ ոխերիմ թշնամիք Բրիտոնէից:
Ունի վաճառանոց անշուք, ուր է ներկատուն մի, դարբնաց եր-
կու, պատառանոց ութն, և մանրավաճառաց հանութս՝ իբրեւ
տան և հինգ: Ունի մղկիթ մի և բաղանիք. իսկ յարեմտեան
կողմն իւր նաեւ զգեղեակ ինչ ի վերայ բլրակի միում, կառու-
ցեալ ելեիջակ պարսպօք: Ասերի զղեկիս անցանէ գետն, և իբրեւ
ստղարիգաւ հեռի ի նմանէ՛ անկանի պարտեզ Աբրաա Միրզայի
ամենաբեր ծառովք զարդարեալ: և որթովք խաղողոյ ուռճացեալ

ընդ ամեն ըստով: Ի գլուխ բարաւորի ցանկաւատի պարսպացն էին սննեկանի երկդստիկոնեան, և ի կեդրոնի պարտիզին շինուած փակեղածէ, Քօլա Քաւանի կոչիցեալ, եօթ յերթի և եկի ժառանգին արքայութեան Պարսից՝ աւագանւոյ նորա:

Այս հատվածները հանված են Գրական Թանգարանի Նալբանդյանի զբաղարանում գտնվող «Ճանապարհորդութիւն ի Պարսս» աշխատութեան մամուլներից: Սա կազմում է «Ճանապարհորդութիւն ի Հայս»-ի անմիջական շարունակութիւնը: Տեքստը 180-րդ էջում ընդհատվում է:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ԱՅՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Բարձր բարեծնունդ հաշտտուր բեկ Շահնագարեանց
Իմ ողորմած տէր

Ո՛չ երբէք ակն ունէի, եթէ սէր այնքան սերտ, որպիսի մերս, ճանաչիւր ընդ ամենայն Նրեան, կամ սիրտ այնքան համակիր և համախնամ այսքան փոյթ լըանել զիւրն սիրելի, որպէս գուք, կամ Ձերն՝ զձեռն Մեարովոյ: Լքիք այն, բայց որպես ես հաւատամ. ոչ մինչ ի սպառ. վասնորոյ և ես, կամ ոչ բնաւ գանգատեմ, կամ եթէ գանգատեցից ես՝ Ձեզ միայնոյ և սիրելոյ գանգատիմ: Ասացէք, արժան էր արդեօք յետ ըսգում անգամ բանիւ և զրով յուսադրելոյդ ձեզ ինձ, առանց տեսանելոյ կամ գրոյ զմեկնիլ և մեկնիլ այնպէս—կամ, զիցուք թէ ելիւ յանարգի իմն տեղ գնելով զիս և զսէր իմ, գուք վասն ձեւ սիրոյն զի՛նչ ասէք:—Եթէ գրեցից, զեղումն սրտիս համառօտիլ չկարէ: Վասնորոյ աղաչեմ հասկանալ Ձեզ սովին, զի ի մեծի տրտմութեան թողիք զիս յանկարծ ելանելովդ Ձերով և իթէ հաճացի բարձր բարեծննդութիւն ձեր, կարէ փութով փարատել յինէն գնոյն՝ սիրանիշ գրով իւրով:

Վասն ամենայն աղճատանաց ձերացեալ տղային այնօրիկ, գրեմ Ձեզ ընդամենայնի ամենայն կերպիլ միամիտ լինել: Վասն զի ստութիւն ինքնին անհիմն գոլով՝ կործանի ինքն ըստ ինքեան և խոստովանի ճշմարտութիւն յամենայն լեզուս թէ կանուխս, թէ անագան: Ես այնպես լռեցուցի գնա, պատգամաւորելով առ

նա ի ձեռն բարեկամի ուրուք, մինչ այլևս և չկարել բանալ նորա զբերան իւր....¹

Իսկ վասն միւս սանդարամետական ստույթեանց ապերախտ.... որպէս թէ ես ինքն ասացեալ իցեմ, թէ զամենայն անառակութիւնս վասն վարուց նոցա, Դուք կամ Հոգևոր Քոյր իմ պատմեալ իցեք ինձ, առաջի աստուծոյ ամենակալի երդնում, զի սուտ է, ես ոչ միայն այնպիսւոյ, այլ և իշխանի կենաց իմոց ի կախադանի անգամ չունէի ասել ինձ զձէնջ, եթէ Ձէնջ իսկ, լուեալ էի, ուր մնաց զի ի Ձէնջ, ոչ ինչ այսպիսի լուայ երբէք գնոցանէ:

Ապաքէն աղաչեմ վասն այսպիսի սնոտեաց, զսէրն մի շիջուցանել, ապա թէ ոչ իբրև մեռեալ համարեցայց ես վասն ձեր:

Համարձակիմ սովաւ ակնունիլ. զի ընթերցայց ի ձէնջ մօտուստ զպատասխանի զրութեան և այսօրիկ, մանաւանդ և զմիամտութիւն վասն երկոքին զրոցդ, զոր Ձեզ յանձն արարի մի յանուն կուսակալին՝ և միւս՝ յանուն Բանկրատիկֆ գեներալին: Խնդրիմ ո՞րն ի նոցանէ և կարելի իցէ, փութով յանձնել հաճեալիք և զգիարդն գրեսլիք մեզ. վասն զի մօտոյ յառաջագրեալ եմ աստուծով և շնորհիւ նորին աստուածաբնութիւն վեհապետութեան գործ մի երևելի յառաջ հանել և մնամ միայն հասանելոյ զրութեանս և առ դոսա և նպատասխանելոյն:

Ես յերեկի զեղբայր իմ զՅովհաննէս առաքեալ յերևան, ստուգեցի զողջութենէ յամենատեկենցաղ տիկնւոյ ձերում և ամենայն մերայնոցն անդ. ողջ են և առողջ միամիտ լերուք:

Որպէս երանելին... (մաշված) արժանապոյեցէ զիս տեսանել զձեզ վերադարձ այսր՝ յաւուր տօնի ձերոյ զի, որպէս խոստացայք ինձ ի միասին խմբացուք աստ և կատարեսցուք ուրախութիւն այնպիսի, ընդ որ երեք տակք զարմանայցեն: Աստուծոյ քեզ տեսնեմ, որ ինձ տխուր թողացիր:

Պարոն Յովհաննէս հավատարմին ձերոյ յինէն կողմանէ ողջոյն տուր և ասա Աղիքսանդր օրդին իւր ներկայ շատ լավ է, և ես լաւ ևս պահպանեցից զնա, միամիտ լինի: Ձեռագիրն, փոքր միջոցումս բաւականին լավացուցեալ է. յետ քանի օրէն նորա ես մին գիրը գրել կտամ, որ տեսնի և ուրախանայ:

¹ Եւրոնախոթութիւնը պատուած է Ա. Ն:

Ողջ լեր ի պարծանս իմ, միակ սէր, միակ մտերիմ և միակ հոգի. իսկ ես եմ և մնամ իսկական վերապատուութեամբ և խօքին ջերմեռանդութեամբ:

Բարձր բարեձննդութիւն ձերոյ

քն ծառայ

Ս՝ Դ. Թաղիադեանց վարժապետ արուեստից և այլն

Ի Վաղարշապատ

յօգոստոս 12/32

2

Միակ մտերիմ եւ

ոգորմած տիւր

Շրկոքին գրութիւնիւ ձեր ի պատասխանի երեցուն գրութեանցս, մին թուեալ ի 13 սեպտեմբերի և միւս ի 20, նմին ամսոյս, հասին առիս հետզհետէ, բերելով ինձ դյաւէտ փափագելին սրտի և հոգւոյ իմոյ զաւետիս ողջութեան և յաջողութեան ողջելոյց ի տէր: Առ որ բերկրապատար խնդութեամբ պաշտօնանս մատուցանեմ խնամողին տիեզերաց աստուծոյ պահել անվնաս յամենայն ճախորդութեանց, և ամբողջ անարատ հասուցանիլ առ մեզ ի վերստին տեսութիւն և ի սէրն, զոր ցարդ ունէաքն և ունիցիմք առ միմեանս:

Զերկոսին գրութիւնս յանձնեալս յինէն ձեզ առ բարձր գերազանց նոցին մակագիր. եթէ մինչ ցարդ չլիցեք հասուցեալ, խնդրեմ այլ ևս չյանձնել որոց հարկն է, վասնզի նոր իմն արտօնութիւն և ազգաշահ յաջողութիւն ստիպէ զիս փոխել զդասաւ Վասնորոյ խնդրեմ յետս դարձուցանիլ զդոսա առիս, որքան փոյթ և հնար իցէ:

Ուրախ եմ գրել, զի յամենատակենցաղ տիկին ձեր, հանդերձ ամենայն գերգաստանոք իւրովք, վայելէ ի կատարեալ առողջութեան անձին, ամենայն երջանկութեամբ:

Իսկ մերայնոցն, որպէս յառաջագոյն ևս գրեցի չկարելով տանիլ օգոյ տեղւոյն և չգտանելով առողջութիւն հիւանդութեան իւրեանց, որպէս նաև տնային ասից և լսից, ժամանակ առ ժամանակ զգուցեցին զիմ լսելիս վասն ելանելոյ անտուտ, շատ

ջանացի մնալ նոցա անդր ցգալուստ ձեր, այլ չեղև հնար, ուստի
 և և ինչն դնացին 'ի տուն անդր իւրեանց: Զայսդե ժամանակաւ
 և ես հիւանդացեալ հիւանդութիւն մեծ, հրամանաւ սրբազնա-
 գոյն օծութեան ելի յօգտիրութեան մինչև յարքայն լերանց
 ի Մասիս, ուր զճանապարհւոյն ստիպեցի հոգևորական մայօրին
 դնալ առ վայրն իւր և նա կամաւ յանձն էառ: Երջագայեցայ
 էխսամսեան ժամանակաւ և ըստ բաւականին առողջացեալ եկի ի
 սուրբ Էջմիածին. ուրանօր Գեօնալ զականաւոր հայրն Սալան-
 թեան, թիկնակից եղէ և լինեմ նմա 'ի յօրինուածս աղագա-
 մատենից: Եւ այժմ ոչ իմիք այնքան կարօտիմ, քան եթէ ժա-
 մանակի և առողջութեան: Ես հանգերձ գերդաստանաւ իմով, ի
 տօնի Զերուստ առ ի զբաժակ կենաց 'ի կեանս աննեղեայ բարե-
 կամիդ մերոյ, և ցորչալի մինչ. ցարդ ուրախանածք, անմոռաց
 ունիմք դիրշատակս Զեր 'ի խնդրութեան մերուս: Հաճեալիք
 ուրեմն և դուք յառաջիկայ աւուր շաբաթու դնոյն տոնել մեզ,
 ընդ որում տօն է հիշատակի երախտեաց սրբոյն Մեսրոպայ,
 որով 'ի հեռուստ որպէս 'ի մօտոյ խօսակից լինեմք իւրեւրաց և
 հետեւաբար այնորիկ, որ մնայ իսկական վերապատուութեամբ և
 անկեղծ մտերմութեամբ:

Բարձր բարեմննդութեան Զերոյ

Խանդակաթ, կաթոգին և քո ծառայ

Մ. Դ. Թադիադեանց

Ի Վաղարշապատ

1832 հոկտ. 3

3

Զերդ բարեմննդութիւն

աղորմած տեք իմ

Թերևս ամօթ համարիջիք ինձ ընդ երկար լուութիւն պատա-
 խանւոյ գրութեան՝ ձերոյ, տալով դնոյն ծուլութեան իմոյ: Հա-
 ւատայի արդարև յայդ կարծիս անկանել ձեզ, և արդարացու-
 ցանէի զձեզ՝ ի նոյն, եթէ միայն դիտակամք նշմարեալ էիք, ի
 հեռուստ զիմն բնաւորութիւն և ոչ ի մօտուստ մտոք և զգայու-
 թեամբ փորձեալ և քննեալ: Եթէ տեսցէ ոք 'ի կղզի ինչ սա-

առաջեալն օվկիանոսի հուր վառեալ, և չկարիցէ հպիլ առ այն 'ի պատճառս շրջապատ սառուցացն, միթէ՞ համարիցի զհուրն ան-
վիզանուտ գոլ: Ո՛չ, ապա և Զերդ բարեծննդութիւն յիս տեսեալ
ամենայնի սթափութիւն և 'ի ծուլութենէն միշտ փախուստ մի
համարիջիք աղաչեմ ծուլութեան գործ երկարութիւն լռութեանս:
Այս շարախտաւատ հիվանդութեան, յոր անկեալ դեգերիմ ահա
բըրհ ամիս և կէս ժամանակի: Ավանդ սանդարամետական օդոյ
տեղւոյս որ շուայտուն ածայրացն բաքոսի տայ կեանս և յորդ-
ւոցն Միւսկովայ բառնայ զնոյն:—Այժմ որջ եմ, միայն շնչել զօդ:
Յանցեալ յերկոյի, քնահատեալ գլխովին, որոճացի սակա-
ւիկ մի զգրութիւն ձեր առ իս [և վերջնուան գտեալ զգանգատ
ձեր զուսուճանսիրեաց տեղւոյդ, կարի զարմացայ ի չհասկանալ
նոցա զհատուած]¹ Քերթուածոյ Եփրեմի Սեթեան, որ ունի օրի-
նակ զայս

«Իսկ պարսկայնոյն կիշտ հնգդիմեան
ի դմբաւընդ որջացեալ
Ընդ հագարու երկեղ մահու
բազմապատիկ սասանեալ պատանեալ:

Թոմաս Ստանլի ի խօսիլ իւրում զերօնից Պարսից ասէ „adeo
exiguum et mutibum est ut haud facile... dispani possibile
«Այնքան դժուարին և ցրիւ է, մինչ ոչ հեշտեալ կարգադրեալ
կարել»: Արդարեւ այնպէս, զի եթէ «զկեշտդ հնգդիմեան» ապուք
'ի զանազան աղանդս նախնի Պարսից, թիւդ «հինգ» ոչ հաւա-
սարի ընդ իրեն, վասնզի որպէս այժմ մահմեդականութիւն 'ի
նոսա, նոյնպէս և 'ի հնումն կռապաշտութեան յամենայն դար 'ի
նորանոր հերձիս ձեղքեալ բազմացաւ:

Ոչ հայի թիւդ «հինգ» և ի հաշիւ աստուծոց պարսից, զի
միայն կռապաշտութիւն ի նոսա պարունակէր բիւրս բնական
և գերբնական էակաց: Ապաքեն մնայ ըստ տկար վարկման իմոյ
լուսել զմիտս հեղինակին, կամ բանալ զխրթնութիւն գրուածոց
նորա՝ այսպէս:

1. Մահաբադ ոմն սերեալ յեւելայ ըստ վկայելոյ Մոհամեմ Ծա-
նեաց լեալ առաջին թագաւոր և օրէնսդիր իրանայ բաժանեաց
գլխովութիւն Պարսից ի չորս արձակ ցեղապետութիւնս այսինքն 'ի

¹ Զնշված է հեղինակի ձեռքով: Ռ. Ն.

կրօնականս՝ ի դիւնուորականս, ի վաճառականս, և ՚ի ծառայա-
կանս առեալ ի Հնդկաց որպես և զանունն իսկ: Սա երևեցոյց և
զըքսյկ իմն, զոր կեղծէր տուեալ ինքեան աստուծոյ, յորում և
ուսուցանէր Պարսից զմի միայն պաշտօն զերարեւն էակին-
իբրև ներհեղուն հոգւոյ աշխարհի:

Այս քո առաջին դեմ կեշտիդ.

2. Յետ նորա եկաց Թագաւոր և օրինադիր Պարսից Հեյու-
մարս տէր Կիւրոս Մար, որ փոփոխելով ինչ ինչ ՚ի կարգացն
մահաբատայ, և զՔաղդեականն կամ զբարեւոնացին մուծանելով
՚ի նոսա զկեշտ, փոխեաց զկրօնն ի տարրապաշտութիւն: Հրոյ,
շրոյ, հողոյ և օդոյ՝ մեհեան կանգնելով և այլն:

3. Հուսանդ պահելով զմահաբաղեանն և զԿիւրոսին, յաւել
և ըզպաշտօն երկնային զօրութեանց կամ լաւ ևս ասել կամեց-
եալ, յաւել ՚ի պարսկականն և զՍաբեականն աղանդ զի Սաբա,
զօրութիւն լսի, և իմանի սովաւ զօրութիւնք երկնից, տյն է
Արև, լուսին, աստեղք և այլն: Այս աղանդ երկուս հերձաւ ի
սուբայս կամ յարեայինս, և ի Սակնիկաւ կամ զօրութեանականս,
յորոց զերկոսին ևս տեսի անձամբ ի հնդիկս այլ երկարել չկամիմ:

4. Ապա Զարդուստ, կամ զբաղաշտ մոդ, որ օրինաց մոդու-
թեան եղև վարդապետ, զկրկին ինքնարուն էակս բնութեամբ
հալառակս միմեանց եդ, զմին արարիչ բարւոյ և զմիւսն Հարի-
Իսկ միջին, զարեգակն:—Սա զոգիս կամ հրեշտակս պահապան
աւուրց ամսոց և ամաց կարգեաց, զփառս կրակին յաւէտացոյց
և այլն: Սորա վարդապետութիւն եղև միմիայն կրօն Պարսից և
տեեաց ընդ երկար զորմի տես ի մերն Նդիշայ և յնգնիկն «նդծն
աղանդոց»:

5. 1) Բիւրասալ որ ընդ Ամմիանոսի Մարկելիանոսի գոլով
Vir prudentipii: mus. «այր ամենախոհեմ» քնաց ի հնդիկս և ի
բրամհանաց ուսեալ զիմաստասիրութիւն և զամենայն զծէս
կուպաշտութեանցն ի մոյծ ի Պարսկաստան:—Զսմանէ արհա-
մարհանօք իմն գրէ և մերս Բերթողահայր: «Վասն ամբաս-
տանութեան առնես աշխատ և անբարի առաջնոյ նորա բարե-
բարութեան և զիւաց նմա սպասաւորութեան և ոչ վրիպեցուցա-
նիլ կարելոյ զվիրեպալն և զսուտն և ուսոցն համբուրումն և

1 Թվանշանից առաջ Նշված է զբաղանություն. Ամմի<անոս> գ. 23,
Քսենեֆոն գ. 4, և. Ն.

անդուստ վիշապացն ծնունդ—խկ ապա և հրոտանայ ումննն դնա
կապել սարեօք, պղնձօք և ի լեառն տանիլ, որ կոչի Դմբաւընդ»:

Արդ Դմբաւընդ համարիմ լինիլ նախնի անուն բարձրա-
բերձ շերանցն Պարսկաստանի, որ անկանի ընդ մէջ Բաղիռոնի
և Շիրազայ անուանեալ Քօթալի, Փերիջան յորոյ 'ի հարաւային
ստորոտս անկանի նախնի քաղաքն Շապուր, լի անհարմար
քարայրիւք, որք բերին յինքեանս կոփածո և քանդակս զաս-
տուծոց՝ վաղուց և ուրուականացն Պարսից, իսկ 'ի Հիւսիսային
գաղաթան նորա հուշակեալ քաղաքն Թաքտը—Ջաշիդ, որ նոյն-
պէս լի է հին քանդակօք չաստուածոց և այլն: Յորս որջացեալ
վերոյգրեալ հնգդիմեանդ կրօն ընդ հազարու այսինքն կամ
սամանցւոյ և կամ ընդ հաւատոյն Մահմետի հազարածնի «յերկեդ
մահու սասանիցու» յերեսաց մեծ գորավարին ուսաց:

Այլ այդ՝ թոյլ տուր ինձ աղաչեմ, անցանիլ սակաւու և
դոճոյ գրութեան եփրեմեան Գերթածոյդ զի կարի՛ իմն խորդ
եղևի ինձ և կաղ միանգամայն յերկոսին հետս իւր: Թէպէտև
չիք առիս և օրինակ դորուն մանրամասնաբար քննել զորքա-
նութիւն դորա, սակայն և այնպէս երբեմն ընթերցեալ զդոյն
ընդ Ձեզ, յիշեմ ուրոյն զթերութիւնսն: Գիւտ քերթողութեան
ընաւ չիք ի դմա և ոչ իսկ վսեմութիւն ոճոյ: Ոչ ոք կարէ հաս-
կանալ թէ յինչ միտս խօսի դա յառաջին պարբերութեան իւրում
զի ըստ ամենայնի մթին է և խրթին բառք շարեալք ընդ մի-
մեանս առանց իրիք, կամ կարի աղօտ նշանակութեամբ:—Ոչ
ոք կարէ հասկանալ թէ ճիշտ յատուկ հսկայ կամ գիւցազն դորա
զի խառնէ զՊասկեիչ, զԲանկրատև և զկայսրն 'ի մի դանգուած:
Ձիք նկարագրութիւն ինչ, չիք եռանդ բանաստեղծութեան և ոչ
քաղցրութիւն լեզուի. այլ ընդ հակառակն կոշտութիւն և կոպ-
տութիւն յամենայն ուրեք ի տալ դորա զկանացի գորովանս
սրտին Բանկրատևի առանց քաջութեան, տայ Պասկեիչի զքա-
ջութիւն առանց գթութեան. «Սալիմ փաշայ, բնդ Սալեհի՛ ի կառս
քո լծեցան» ասէ, որով զքաղցր և զքաղաքավարեալ Զօրավար
դարուս, որում արդարութիւն միայն սպառազինեաց և ոչ սահ-
մանացն ընդարձակութիւն հավասարեցուցանէ ընդ նախնի խու-
ժագուժ արիւնակեք բռնակալաց և այլն... Ոչինչ նյութ այնքան
գեղապանձ յօրինէր զգերթուածն, եթէ ոչ ներկայութիւն երկուց

փաշայից և փոխ առ փոխ ասութիւնք նոցա, և դարձ քաղցրութեան Զօրավարին առ նոսա:

Ի վախճան բանիս «այ քեզ տեսնեմ» մինչև երբ սպասեսցից պատասխանուոյ թղթոյն զորս յանձնեցի Ձեզ—ան յոյս, յոյս, յոյս թուի թէ վայելուչ ընկերակցութիւն լուսաւորեալ մերազանց տեղոյդ մոռացուցանէ զմեզ և բառնայ ի Ձէնջ զյիշատակ նախնի սիրոյ:—Եթե առաջիկայ պատահութեամբ ոչ ընկալայց ի Ձէնջ զմիամտութիւն ինչ հալատուն զի ես ինքն յիմում առաջին պատենութեամբ ներկայացայց որոց հարկն իցէ: Մնամ միշտ անկեղծութեամբ:

Վաղպատ

1832 զեկտեմբ. 22 •

Ողորմած տէր իմ

Քո ծառան և ձեր

Թադիադեան

* * *

Յուրտ հրկրիս այնքան սաստիկ է յայսմ ձմեռայն, մինչ հինաւորաց մարդկան տեղւոյս խոստովանիլ երբէք ոչ լեալ այսպիսւոյք կեանս իւրեանց: Թէպէտ և ձիւն թզաւ թանձր՝ պատէ զերեսս համատարած երկրի մերոյ, այլ տակաւին ցրտահարութիւն ամենայն բերոց լինի, եթէ տեսցէ սաստիկութիւն նորա դէթ շաբաթու ժամանակաւ: Այգեգործք տեղւոյս, տեսեալ թէ յանցեալ ամի ցրտահար եղեն այդիք թաղունք ընդ հողով, յայսմ ամի իսպառ բարձի թողի արարեն: յուսալով քաղցրութեան օդոյն բարիս առնել ինքեանց, այլ ախրիմ զի աշխարհ հակառակն, և միացորդք անցելոյն, խորշակահար չորանան զարտիս: Իսկ ի մասնաւորի մեծ մնաս տայ կենաց իմոց անբարէխառնութիւն օդոյս, վասն զի մերձ տասն ամ կացեալ ի Հնդկիս յ85 կամ 90 աստիճանի ջերմութեան, այժմ ոչ դիմանամ նոյնաչափ սաստիճանի ցրտութեան. ոչ թէ որքան կարօտ եմ դարնան:

Դրեթէ իսպառ զուրկ եմ ընկերակցութենէ մարդկան զորս ՚ի իողէնեա ճրագաւ փնտռէլ ի լոյս միջօրեացեալն Արեգական: Խուժական քրտութիւն հղնաւարաց տեղւոյս ոչ իւրիք մխիթարել կարէ զիս ուստի ի կարծեցեալ ապահովութեան կենաց իմոց՝ թուիմ լինել ի բանտի: Ապաքէն հրանիմ զՁեզ զի կայք ի լուսաւոր ազգամիջի և երանէի ես եթէ տամք հանդերձ ելեալ բնակէիք այդք ոչ փոշոտելով զսիրտ ձեր, կէս մի առ ձեզ պահելով և կէս մի երեսն:

Տուն Զեր որպէս մերն յերևան ըստ ասելոյ ինձ այցելու-
աց իմոյ կան ի բարւոյ ողջութեանս նոցա և ձեզ խնդրեմ կեանս-
յաստուծոյ պահել ողջ անարատ կենօք զվերստին տեսութեանս:

Գրութիւնիւ ձեր ոչ բերին ինչ լուր ի զբօսանս մեր. վաս-
նորոյ խնդրեմ ուրախ առնել զմեզ այսուհետև պիտանի լրովք.
մանաւանդ ի խօսիլ ձերում ընդ երեկիս տեղւոյդ, առարկայալ
յիմ վերա և ասանել իթէ որպէս խօսին զինէն այդր և զրով
ծանուցանել ինձ:

Այս երեք նամակները հանված են ՀՍՍՌ Մատենա-
դարանում պահպանվող Կաթողիկոսական դիվանից (Թղթա-
պանակ 38, ձեռագիր 278 ա, բ, գ): Խաչատուր Բեկ-Շահ-
նազարյանը, որին հասցեագրված է Թաղիադյանի վերո-
հիշյալ նամակները Դավիթ Խան Ծատուրյանի քրոջ որդին
է: Նրանք ծանոթ են եղել իրար 1816 թվականից. մտեր-
մությունը սկսվել է Թաղիադյանի՝ Հայաստան դարձից հե-
տո. Խաչատուր բեկն այդ ժամանակ վերադարձել էր ար-
տասահմանից և զբաղված էր իր քեռու՝ Դավիթ Խան Ծա-
տուրյանի ժառանգության հարցով:

Այս նամակներից առաջին երկուսը ունեն կենսագրա-
կան նշանակություն. դրանք պարզում են Թաղիադյանի
հոգեկան ծանր կացությունն այդ շրջանում. երրորդ նամա-
կը բացահայտում է նաև նրա խորը իմացությունը պար-
սից դիցաբանություն հարցերի շուրջը: Հովհաննես Սեթի
«Հնգգլխյան Կեշտը» աշխատանքի առիթով արված այս
դիտողությունները հետագայում նա զարգացնում է իր
«Ծանապարհորդութիւն ի Պարսս» աշխատության մեջ:

5

Ողորմած տէր իմ

Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց, վկայեալ վարժապետ
Արուեստից և Աստուածաբանութեան, փոքր ի շատէ ուսեալ զհայ.
զլատին, զյոյն, զպարսիկ, զհնդկ, զՄանսկրիտ և զտաճիկ զըզ-
րութիւնս, եւ և զԱնգղիականը, զբաժննիչ եպիսկոպոսական ճե-
մարանին Կալկաթայ, Անդամ Ասիական ընկերութեան գիտու-
թեանց, և այլն. ի լրոյ արժանահաւատից ոմանց՝ ծանուցեալ
բարեւաւ համբաւոյ ազգասիրութեան և իմաստասիրութեան նո-

քին բարեծննդութեան Ազնուազնեայ պարոն Յարութիւնի Պո-
ղոսեան, ինդրէ յարգանօք ըաղմօք ղհամապատասխանութիւն և
զգրաւորական մտերմութիւն նորին—Վստահանայ սովին յայտ-
նել ևս, զի եթէ կամք իցեն մերազնաց տեղւոյդ, և սէտս ունի-
ցին վարժապետի, և զրեսցեն առ ինքն, խոստանայ գալ այդք
բաւական պիտանի գրովք, և ծառայել աղգային լուսաւորութեան-
ի Վաղարշապատ

1832, դեկտ. 20

Այս նամակը հանված է Գրական Թանգարանի Ե. Շա-
հադիզի արխիվից (61). նամակը գրված է իրեն Թաղիադյա-
նի ձեռքով: Հոսսահատ իր վիճակից նա իրեն հանձնարա-
րում է Խալիսյանին որևէ պաշտոն ստանալու հույսով:

6

Ձերդ բարձր գերագանցութիւն

ուղարմած տէր

Յիսուսի Քրիստոսի ծառայ Հովհաննէս կաթողիկոս ամե-
նայն հայոց և ծայրագոյն պատրիարք Առաքելական եկեղեցւոյ
Քրիստոսի և մայր Աթոռոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնի:

Վարժապետ Մեսրոպը Դավթեան Թաղիադեանց մինն յանու-
անի բնակչաց Երևանու, երիտասարդական տիոց անտի վարժեալ
ի մարզըս գիտութեանց զանազան արուեստից ի լեզու հայոց,
անգղեացւոց և լատինացւոց ի Հնդկաստան անդ ի Կալկաթայ,
Նախկոպտական ճեմարանի անգղեացւոց: Հոսսկ ապա լուեալ
զազատութիւն աշխարհին հայոց, վերադարձաւ այսր ի հայրենիս
իւր ի հայոց աշխարհ, ի 1821 ամի: Մեք ևս ի բազմիւն մեր
յաթոռ Հայրապետութեան ամենայն հայոց ամենայն աշխատու-
թեամբ և ջիւղեռանդութեամբ ջանացեալ մոծանել յաղգն և
մանաւանդ ի հոգևորականութիւն զցանկութիւն ուսումնասիրու-
թեան, յորմէ զրկեալ էին նոքա ի պատճառս զանազան նեղսակ-
րութեանց ի ձեռացն պարսից:

Մեք սկսաք որոնել առ այս վախճան զարժանաւոր գիտ-
նական անձինս, վասնորոյ և հրաւիրեցաք զնա՝ (զԹաղիադեանն
գալ ի սուրբ Աթոռս և կարգեցաք զնա վարժապէտ արուեստից,
ի հոգևոր ուսումնարանի մերում ի պարսպի սրբոյն աթոռոյս:
Ի միջոցի սոյն ժամանակի սկսեալ ի 1831 ամեն մինչև ցայժմ

նա պարապելով ի վարժարանի մերում յուսումն համբակաց մե-
րոց, մեծաջան աշխատութեամբ ու կատարեալ ջերմեռանդութե-
ամբ իսկապիս կարաց ցուցանել զերեւելի զպտուղս իւրոց արդիւ-
նաւորեալ աշխատանաց:

Բայց յայսմանէ, յատկապէս պարապի նա և ի գրութիւնս
մեր և դայս պաշտօն իւր ոչ հայեցեալ ընդ լայնածալսլ շրջա-
նակ գթութեանց մերոց, մեծաւ յառաջադիմութեամբ, որ կա-
պակցեալ է ընդ բազում աշխատանաց (չունելով ինքեան ի շա-
րադրեալ կամ ի գրելն ընդհանրական կոնդակաց զընկեր կամ
օգնականիւք)¹ ոտիպիալ ի կատարեալ՝ ճշմարտութենէ ի մասին
այսոցիկ մեծաջան աշխատանաց, Մեսրոբայ Թաղիադեանց, մեք
ամենախոնարհաբար խնդրեմ ի բարձր գերագանցութենէ Ձերմէ
միջնորդել առ Նորին Կայսերական Մեծութիւն շնորհել նմա գլխո-
սեբական ողորմութիւն ինչ համեմատ կոչման նորին և պաշտօ-
նից զոր կատարեաց մինչ ցարդ և ի խրախոյս նմին առ ասլայն
փոխարէն այսքան աշխատանաց նորա:

Սոյն այս Մեսրոփայ Թաղիադեան ժրջան աշխատութեամբ
Թարգմանեալ և շարադրեալ զբազում հասարակաօգուտ գրեանս
և տպագրեալ զչորսեսին ի նոցունց, այժմ ևս պարապի նոյնպէս
ի Թարգմանութիւնս գրեանց հօգուտ ազգին առհասարակ, ու
մանաւանդ աշակերտաց մերում ուսումնարանի:

Ի վերջոյ թէ որպիսի ոք իցէ նա ի հաւատարմութիւն
բանից մերոց կարիք տեսանել անձամբ զվկայականս նորա և
մնամք միշտ ջերմեռանդութեամբ ու անձնաընծայութեամբ

Ողորմած տէր

Ձերդ բարձր գերագանցութեան

Ամենախոնարհ ծառայ և աղօթարար

Կաթողիկոս Ամենայն Հայոց Յովնանէս

1834 մարտի 13

Ի Ս. Էջմիածին

Պարոն Ռոզենին ուղղված կոնդակը հանված է ՀՍՍԹ
Պետարխիվի Ամենայն Հայոց Կաթողիկոսական գիվանից
(Ֆոնդ 57, գործ 80, էջ 8):

¹ Փակագծի միջինը հեղինակի կողմից ջնջված է ռետինով. վերջանու-
թյունը կատարված է մեր կողմից, Ռ. Ն.

Կոնդակի բովանդակութիւնը պարզում է կաթողիկոսի քաղաքականութիւնը. առերես հովանավորելով Թաղիադյանին, նա ութ եպիսկոպոսների հայտնի ցույցից հետո ցանկանում էր ցույց տալ, որ ինքը հետամուտ է լուսավորութեան գործին և վարձահատույց կարող է լինել մայր աթոռին անձնվեր ծառայութիւն անողներին:

7

Աստուածաբալ եպիսկոպոսապետի ամենայն հայոց
ողորմածագոյն տեսնոն և բարերարի
հրկնաշու սուրբ գարշապարայն համբոյր
որդիապարտ ջերմեռանդութեամբ

Համար 340 Կոնդակ սրբազնասրբութեան Ձերոյ, հասեալ
այսր զկնի երկց առուրց հասանելոյն իմ այսր:

Խնդութիւն շատ արար կաթողիկոսի հոգւոյս, վասն աստուածանման գթութեամբ զիջանելոյ տէրութեան Ձերոյ. յիմ խնդիր, և գրելոյ գյանձնարարութիւն վասն իմ առ լիակատար դեսպան Խմենողորմ կայսրութեան Ռուսաց ի Դավրեթ: Այլ ցալիմ յոյժ, զի ի սակս աններկայութեան իմում ի Դավրեթոյ բարձր սրբազան Նիկողայոսն Արքեպիսկոպոս ըստ բարձրագոյն հրամանի տէրութեան Ձերոյ, ետս դարձուցեալ է դայն թուղթ: Յաւիմ, վասն զի կարօտեմ յոյժ պաշտպանութեան Խմենողորմ տէրութեան, մինչ ցարդ հայք անտերունչ անարգ շրջէին յամենայն ուրեք. բայց այժմ, ըստ որում ողորմութեամբ բարձրելոյն բաղդաւորեցաք ունիլ մեզ թագաւոր զկայսրն, պարտ է մեզ յամենայն ուրեք պաշտպանութեան նորա ապաստան լինիլ. ես ի մասին այսօրիկ դրեան արարի յերկանայ ի Տփլիզ, առնոյն ինքն բարձր գերազանց կուսակալն Վրաստանի և առ գերապետիւ Հակոբ Շահան Զրպետեան և հանձնեցի եղբօր իմոյ Հովհաննու. տանել անձամբ ի Տփլիզ. բայց անկրթութիւն նորա յիրս զգուշալիս՝ բաղձօք անյոյս կացուցանէ զիս: Յոյր սակս աչերս ակեալ առաջի քահանայապետական գթութեան Ձերոյ, ամենախոնարհաբար խնդրեմ, գրել նորին բարձր գերազանցութեան յաղագս բանիս այսօրիկ, զի որովհետեւ խոսեցեալ և պատրաստեալ է յառաջագոյն, չունի նեղութիւն, շատ պատճառել սրբա-

դնասրբութեան Ձերոյ, ալ բաւական է միայն յայտարարութիւն-
Ձեր ի պսակել զիմն յոյս: Այդ պաշտպանութիւնն տէրութեան,
որում այսչափ կաթոգնի իմ ի խնդիր, թէ որքան օգուտ բերէ
անձին իմոյ և տէրութեան ևս կարեք լաւատես իմանալ ի հա-
ւատարիմ գալակէ ձերմէ ի Մկրտիչի Գարտաշեանց և առնել
ողորմածութեամբ:

Գրէ սրբազնասրբութիւն Ձեր ճեպակելով Ձերոյդ երիտա-
սարդական կրից, չկարացիք իմանալ զգին շնորհաց և աշխատա-
նաց Ձերոց. միանգամայն և դարձողութիւն մերոց հայրական
առ Ձեզ գթոց—Գիտէ Աստուած գիտացէք և դուք ողորմաժա-
գոյն տէր զի իմ ջերմեռանդութիւն առ սուրբ Աթոռն ամենայն
հայոց և առ տէրութեան Ձեր անխարդախ էր, և է, և յեղիցի
միշտ: Բայց այնպիսի դանադան հանգամանք տեղւոյդ և անձին
իմոյ չկարացին համեմատիլ իրերաց, ըստ արժանեաց անուան և
գնաւաց Ձերոց և իմ, ի վեր երևցուցանել զարդիւնս աշխատանաց
իմոց, լաւ համարեցայ ինձ դայս տարագիր օտարութիւն, ցուցանել
թե արդեօք կարիցիմ վերստին առնիլ, որպէս արարեալս էի թէ
հէ: Ողորմածագոյն տէր իմ, ես վատ, ես ամենայն բաժրասանաց
արժանի, իսկ դուք գլուխ եկեղեցւոյ և ազգի մի ողջոյն ունիք
արդեօք զարժանին Ձեզ դերջանկութիւն և զանդորրութիւն:—
Ո՛չ, ազգ՝ ատեալ զիւր գլուխ. անտեղի է ամենայն և մարդկան,
ցանկայ այլ ոչ տեսանէ զհաջողութիւն:

Երեք ամսյան ծանր, վայելուչ և իշխանական ճանապարհոր-
դութեամբ հասի ի Նոր Զուլայ. ուր բարձր սրբազան Հովհան-
նէս Արքեպիսկոպոս, հոգևոր հայր իմ, և ամենայն հասարակու-
թեան մերազանց ի պատիւ աստուածարեալ տէրութեան Ձերոյ,
սիրով մեծաւ՝ ընկալեալ՝ հանձնեցին ինձ զիւրեանց Ամենա-
փրկչեան ձեմարան, որոյ թիւ աշակերտաց հասանի այժմ ցհա-
րիւր վաթսուոն, որք բաժանեալ ի մեծասան դասակարգութիւնս՝
ընթեռնուն զհայ և զանգղիացի արհեստս ազատականս: Ես ինք-
նին ուսանիմ պարսիկ և զարաբացի լեզուս ու յամենայնի մխի-
թարեալ:

Նամականի արար սրբազան առաջնորդ տեղւոյս, առ մերա-
զնեայս Հնդկաստանի: Ծանուցեալ նոցա զհասանիլ իմ այսր և
զվերահաստատութիւն ձեմարանին, յուսամք ի մօտոյ ընդունիլ

պատասխանիս ի նոցանէ և երեսցուցանել պտուղս հայ սուլարանի հաստատելոյս ի Զուղայ:

Երկօքին աղտարմայ վարդապետք, Յովհաննէս և Ստեփաննոս որջացեալ ի Զուղայ, որպէս գրեալ է տերութեան Ձերում Առաջնորդ տեղոյս, բազմոք գայթակղեցուցանեն զաղգ մեր:

Եթէ շնորհք արասջեք զրել առ Սուլթան Մահմադ Միրզայ արքայորդի տեղոյս, և առ Մէիդ Մահմադ Բադր՝ Մուշտահիդ, թէ մեք առաքեցաք այլը ուսուցիչ զՄեսրովպ, որ բաւական է ուսուցանել և նորա չեն հարկաւոր մնալ յաղգի մերում, անխափան խիսցեն նորա:

Աստուածարեալ քահանայապետի իմոյ և

Տեառն ամենախոնարհ և ամենազերմեռանդ ծառայ

Մ. Թադիադեան

Յ. Ասպահան

Ի Նոր Զուղայ

1834 սեպտեմբեր 14

8

Գերագոյն քահանայապետի ամենայն հայոց

ողորմածագոյն տեառն և բարեբարի

ամենախոնարհ հայտարարութիւն

Բարձրագոյն Կոնդակ յորդորանաց համատարած սուրբ Հայրութեան Ձերոյ, թուեալ ի 26 նոյեմբ. 1835 թ. այլովն հանդերձ, շնորհեցաւ ինձ ի ձեռն Առաջնորդի տեղոյս ի 10 մարտի, Զոր ընկալեալ իբրև որդի հարազատ ի հնազանդութիւն պատւիրանոցն պարունակելոցն ի նմա, մեծահանգէս տօն ուրախութեան կատարեցի ի տան իմում, որպէս երբեմն Զաքքեոս, ընդունելով զտէրն մեր ի տուն իւր: Մոռացայ զանցեալ զրկանս իմ, և զանտանելի զրպարտութիւն եղեալս ի վրա իմ, ի բաց եղի զամենայն կրճիմն անիրաւութեամբ և մասնաւոր վարձու ոչ միայն զգործ ձեմարանի յանձն առի, այլ և զատենադպրութիւն և այլն:

Բայց արդ տիրութեամբ գրեմ, զի սրբազան Առաջնորդն առաւել հետեւելով կրից երեսայից, որոց խիստ է կաթողին վհատեցաւ ի յաջողութեան անդ իւրում, զի այն ինչ ըսկաւ լուր

պայծառութեան, ճեմարանին տարածիր, և ի տեղեաց, տեղեաց քաղել զարդիւնս օգնականութեան Ազգին, նա ի շնորհս մանկահասակ սպասաւորի իւրում, որ ճեմարանի անուամբ ելաւ ի վանաց, գնայր ուր կամէր, և զոր ինքն զսպել չկարեր և ես խոստացայ դանակոծ զնա առնել, երկնչելով եպիսկոպոսին, թէ մի գուցէ ի գանել իմ զնա ի վեր ելցին իւր ամօթանք, առաքեաց հան զնա ի ճեմարանէ և զկնի տասն աւուրց ի տոնի մեծի զատիկին, կոչեալ զիս առ ինքն, փոխան վարդապետական պարգեւաց առայ. թէ «այլևս ոչ կարէ պահել զճեմարան իւր»:

Առ այս իբրև մտաբերեցի ելանել աստուտ տամբ հանդերձ առ ռոս Զոր և սրբազան առաջնորդն ամհնեին անմասն ցուցանէր զինքն, յօգնականութենէ ծախուց վերադարձի իմոյ. յաստուածուստ իմն գողչիք, եկն, հաս, աստ պարոն Տուրնով, Ատենադպիր և երրորդ լիակատար դեսպանութեան Ռուսաց ի Պարս: Սա հարց ինձ, թէ զի՞նչ գործ ունես, ասացի, յետ 9 ամիս յանցեալ տարի անգործ կալոյս և յետ չորս ամիս վերստին վարժապետելոյս և այլն: Ներկա կրկին անգործ կամ: Ապա եհան զթուղթ մի ի սրբազան եպիսկոպոսն զրեալ առ քարոն Բօղէ: Երկրորդն դեսպանութեան, որ պարունակէր զի ներքոյ հնգեակ եպիսկոպոսավայել ճշմարտութիւնս:

ա) Թէ ինքն պահեալ իցէ զիս յէջմիածին ինն ամ, իւր հատուկ ծախիւք:

բ) Թէ ինքն, ոչ միայն զծախս ճանապարհի անդուստ ի հինգ ալիւ զտանամեան ուսման լեզուաց վճարեալ իցէ զծախս:

գ) Թէ Մեսրոպէս անգործ գոլով յէջմիածին—ինքն իբր յորոմութեամբ բերեալ իցէ զնա այսր, վասն ապրուստի:

դ) Թէ ի միջոցս 8 ամսոց հասուցեալ իցէ մերձ 202 թուման:

ե) Թէ անարժան և անպատիւ անձն է, չունիցի ոք ընդ նա զըրութիւն:

Զայսոսիկ եպիսկոպոսավայել ճշմարտութիւնս նորա, եղծի օրինաւոր ապացուցութեամբ և ինքն ի վերջոյ պարտաւորեցաւ ի քննութեան պարոն Տուրնովի ասել, թէ ինքն «ամհնեին չէ պատասխանեալ զիս ի ճեմարանէ, պատասխանեաց պարոն Տուրնով» ուրեմն եթէ չես պատասխանեալ և կամիս պահել, ուրեմն գրեալ գիր կապակցութեամբ և ես ձեռագրի ձեռ ի նմա յառաւել հաստատութիւն. եպիսկոպոսն կարի յօժարութեամբ խոստացաւ:

Այլ ի վաղուի ժողովիալ զիւր վարձեալ անձինս, զՆդիա Յովհաննիսեան, զՂևոնդ Աւագեան, զԳորգիոն Մանուկեան և զԿարապետ Գիւլղաբեան, որք ոչ այլ ինչ են, եթէ ոչ սոսկ գինեւաձառք, ուսոյց նոցա ասել է թէ ազգն ոչ ընդունի զլինիլ Մեսրոպայ ի վարժապետ: Զոր և ինքն ապա գրով ետ պարոն Տուրնովի: Ըստ որի ի դայրացեալ նորա գրեաց, առինքն առաքեալ զսայնսնիկ, որք զայն ասացին, եպիսկոպոսն մոլորեցաւ. մինչ օրինաւոր պատասխանուոյ ևս անբաւական լինիլ: Նրկիցս գրեաց պարոն Տուրնով և զգարձն չընկալիալ՝ գրեալ առ Խոսրով խան և հանեալ ի նմանէ զմուհասիլ բուռն իշխանութեամբ պահանջեաց 40 թուման զծախս վերադարձի իմոյ հասարակութենէ տեղւոյս, զոր ամենայն օրինոք պարտ էին զոր ընկալայ և ելանեմ այսօր աստի առ ոտս Զեր. կամիք պահեցեք, կամիք զվեղս մանկութեան իմոյ յերես հանելով մի պահեք. այլ ես դամ տամք հանդերձ. մնալ յավիտեանս հավիտենից:

Զայսոսիկ միայն նորա ընդիս արարք. այլ առաւել քան զսոյն ընդ այլոց. կամ լուեալ էք, կամ լսելոց էք, ի գրութեանց անտի. լիակատար դեսպանութեան ռուսաց ի Պարս: Նւ ես վկայեմ առաջի անտուծոյ և մարդկան, զի ոգի այսքան ընդդէմ ճշմարտութեան և զակառեալ մանկավոյ երեւէր ոչ տեսնի:

Մնամ ամենայն հավատարմութեամբ
 Ձեր սրբազնասրբութեան ողորմած տէր
 Ամենախոնարհ ծառայ Մ. Թադիադեան

Ի Զուղայ 1836

մայիսի 5

Վերջին երկու նամակները հանված են նույնպես Պետական Արխիվից (Ամենայն Հայոց կաթողիկոսական դեպիան Փոնդ 57, գործ 7, էջ 33, 34, 35, 36): Այստեղ մերկայցվում է կաթողիկոսի կեղծ վերաբերմունքը Թադիադյանի ազգաշահ գործի հանդեպ. երկրորդ նամակը բացում է Թադիադյանի կյանքի Զուղայի շրջանում (1834—36) կատարված դեպքերը, որոնք պատճառ են դառնում նրա տառապանքներին և ստիպում թողնել Զուղան, հեռանալ Թավրիզ:

ՅԱՂԻԱԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԸ

1803 թ.

Հունվարի առաջին երկու օրերից մեկում (հ. տ.) Երևան քաղաքի Զորագյուղ թաղում Դավիթ և Զարգար Թաղիադյանների ընտանիքում ծնվում է անդրանիկ զավակ Մեսրոպ Թաղիադյանը (մկրտությամբ Ավետիք)։

1812 թ.

Աննա տատի ուխտի համաձայն Մեսրոպն ուղարկվում է Էջմիածին հոգևոր կրթության։

1816 թ.

Պարսից դեսպան Դավիթ Խան Մատուրյանի այցելությունը Էջմիածին. նրա դիմումը կաթողիկոսին վերցնելու իր հետ Մեսրոպին Փարիզ՝ կրթության տալու համար։ Կաթողիկոսի մերժումը։

Իր ժամանակին դիտնականական կալվածքի անուն վաստակած Պողոս Ղարադաղցու գալուստը Էջմիածին։ Մեսրոպն աշակերտում է նրան։

Մայիս — սեպտեմբեր (ն. թ.)։ Ղարադաղցու հետ ճանապարհորդություն դեպի ս. Հակոբի վանքը։

Նոյեմբեր. Երկրորդ ճանապարհորդությունը դեպի Արաբաձորն։

1819 թ.

Երրորդ ճանապարհորդությունը Դանիել կաթիկոսին հետ Հայաստանի գավառները։

1821 թ.

Դարնանը Նախիջևանում հանդիպում Էջմիածնից Շուշի փախչող Եփրեմ կաթողիկոսի հետ։ Նախիջևանից կաթողիկոսի հետ մեկնումը Շուշի։

1822 թ.

Փետրվար: Ճանապարհորդութիւնը Թիֆլիս, հանդիպում
Ներսես Աշտարակեցու հետ:

Օգոստոս: Եփրեմ կաթողիկոսի հետ մեկնումը Հաղպատի
վանքը:

1823 թ.

Մայիս Թոգնում է Հաղպատը եվրոպա դնելու մտադրու-
թյամբ, սակայն Նախիջևանից անցնում է Թավրիզ, Հնդ-
կաստան դնելու համար:

Սեպտեմբեր: Թաղիադյանը կալկաթայում. նրա հաստատումը
Դաքա քաղաքում, էջմիածնի նվիրակ Թովմաս վարդապետի
մոտ:

1825 թ.

Տեղափոխվում է Կալկաթա քաղաքը, ընդունվում հայոց
Մարգարիտական ճեմարանը, որպես հայերեն լեզվի դասաւանդ:

1826 թ.

Փետրվարի 2-ին: Մտնում է Կալկաթայի անգլիական եպիս-
կոպոսական ճեմարանը, սկզբում որպես ունկնդիր, ապա ուսանող:

1827 թ.

Եպիսկոպոսական ճեմարանի տպարանում բացվում է հայ-
կական բաժին: Մ. Թաղիադյանը ազագրում է Գ. Բերդուժյանի
(Նախիջևանցու) «Աստուածածանմանութիւնը» իր վերծանումնե-
րով և ծանոթութիւններով:

1828 թ.

Հայաստան է ուղարկում իր հայտնի նամակը երեսնյի-
ներին, պարսից լեզից ազատագրվելու առիթով:

1831 թ.

Ավարտում է եպիսկոպոսական ճեմարանը, ստանում աթ-
վեսոսի մագիստրոսի կոչում:

Հունիս: Նոր Զուգայից ստացվում է խնդրադիր, որով Թա-

դիպրոյանը հրավիրւում է տեղում հիմնադրվելիք հայկական դպրոցի վերատեսուէր:

Հուլիս: Նոր Զուղայում: Ամենափրկչյան դպրոցի հիմնադրումը:

Չեպտեմբեր: Դժգոհ ջուղայեցիներից նա թողնում է դպրոցը և ուղևորւում է ջմիածին:

Նոյեմբերի 8-ին: Հասնում է էջմիածին, մասնակցում նորընտիր հաթոդիկոս Հովհաննես Կարեցու օժմանը:

1832 թ.

Փետրվար: Նշանակվում է ժառանգավորաց դպրոցի դասատու:

Ապրիլ 1-ին: Թողնում է էջմիածինը, գիշերով փախչում Երևան:

1833 թ.

Հունիս: Երկու տարվա անգործությունից հետո նշանակվում է էջմիածնի դպրոցի տեսուչ և տպարանի կառավարիչ:

1834 թ.

Փետրվար: Կանչվում է Թիֆլիս բարոն Ռոզենի մօտ:

Մայիս: Ստացվում է Նոր - Զուղայեցիների խնդրագիրը, որով նրանք կրկին կանչում են Թադիագյանին իրենց դպրոցի տեսչության պաշտոնին:

Սեպտեմբեր: Նորից Ն. Զուղայում:

Նոյեմբեր: Ամուսնությունը ջուղայեցի վաճառական Մ. Սեթի աղջիկ Թանգ խաթունի հետ:

1835 թ.

Գժառությունը դպրոցի հոգաբարձուների հետ: 9 ամիս անգործ:

1836 թ.

Ապրիլ: Նորից Զուղայի դպրոցի տեսչի պաշտոնում:

Մայիս: Նոր ամբաստանություններ, որոնք պատճառ են դառնում, որ նա Թավրիզի ուսուցչի պաշտնատան ներկայացուցչի պաշտպանությամբ թողնի Նոր Զուղան:

1837 թ.

Թավրիզում: Պաշտոնավորում է քաղաքի մոտ գտնվող Շիշականում: Թաղիադյանը պարսից արքայազնի դասատու:

Նոյեմբեր: Անհաջող ծննդաբերությունից մեռնում է նրա կին՝ Թանգ խաթունը:

1838 թ.

Փետրվար: Թաղիադյանը էջմիածնում:

Մայիս: Թաղիադյանը Պոլսում:

1839 թ.

Թողնում է պաշտոնը Սերվերյան ընտանիքում և մնում միայն «Գուզգունջուկի» համալսարանի դասախոս:

Մարտ: Հալածվում է Սերվերյան ամիրայից և պատրիարքից, «բողոքական» անվան տակ:

Մայիս: Բանտարկությունը: Ազատումը բարեկամների միջոցով և խույս տալը քաղաքից:

Մայիս—դեկտեմբեր: Պատերազմական դատու մեջ: Թափառական կյանքը Փոքր Ասիայում, Աֆրիկայի հյուսիսային շրջաններում:

Գեկտեմբեր: Նորից Հնդկաստանում:

1840 թ.

Փետրվար: Եպիսկոպոսական ճեմարանի տպարանի գրաշար: Հրատարակվում է նրա «Այբբենարանը», և «Շարադրիչը»-ը:

1841 թ.

Հրատարակում է «Պատմություն հնդկացի»-ի առաջին հատորը:

1842 թ.

Երկրորդ ամուսնությունը:

Հնդկաստանի խորքերում, որպես փեթեզակ:

1844 թ.

Վերադարձը կալկաթու Նա իր հետ բերում է «Սոս և Սոնդիպի» պոեմը:

1845 թ.

Կալկաթայում հիմնվում է Արարատյան ընկերությունը: Թաղիադյանը հրավիրվում է ընկերության անդամ և թերթի վերատեսուչ:

1846 թ.

Բացում է աղջիկների և տղաների դպրոց «Ս. Սանդիպի» տյան» անունով:

1848 թ.

Մայիս: Ծանր հիվանդանում է: Ընկերության քայքայումով փակվում է «Ազգասէրը»:

Սեպտեմբեր: Նորից վերսկսվում է թերթը «Ազգասէր Արարատեան» վերնագրով: 1845—48 նա հրատարակում է իր պատմական և գեղարվեստական աչքի ընկնող գործերը:

1851 թ.

Նյութական ծանր կարիքից նեղվելով տեղափոխում է իր «ուպարանը» և դպրոցը Կալկաթային մոտիկ Զիչրա քաղաքը:

1855 թ.

Թոքախտից մեռնում է նրա երկրորդ կինը:

1857 թ.

Հուսահատ իր վիճակից թողնում է Հնդկաստանը, Նոր Զուգա մեկնելու համար:

Օգոստոս: Հիվանդանում է Բոմբեյ քաղաքում:

1858 թ.

Մայիս: Հասնում է Պարսկաստան:

Հունիսի 10-ին ծանր հիվանդությունից մեռնում է Շիրազ քաղաքում: Թաղվում է Բաքաթա՝ սարի տակ, Սաադիի և Հաֆիզի ավանդական գերեզմանատանը:



Յ Ա Ն Կ

	Էջ
Երկու խոսք	3
Ուսումնառության տարիներ	7
Թաղիագլանը հայրենիքում	20
Նորից տալագիր	32
Հուսովորական հայացքները	42
Վերջին տարիները	63
Զեղարվեստական արձակը	60
Պոեզիան	84
Հավելված	117

Ցեխ. լոճագիր Մ. ԿԱՓԼԱՆՑԱՆ
 Թրագրիչ Ա. ՇԱՀՐԱՋՅԱՆ

Հանձնված է արտադրության 9/VII 1947 թ., հատրագրված է տպելու
 22/VIII 1947 թ. տպագր. 9,5 ժամուկ, 1 ժամուկում 38,400 տպ. նիշ-
 վճ 02774, պատ. 575, հրատ. № 433, տիրած 2000.

ՀՍՍՐ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան Ն. 106





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031703

[804]

9162 8 ft.

